

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵԶ-ԵՓՄԱՇԶԲ-21/1

ДОГОВОР ЗАКУПКИ
НА ВЫПОЛНЕНИЕ РАБОТ
N <<EQ- EPMashDzB-21/1>>

ք. Երևան

09 11 2021թ.

г.Ереван

09 11 2021г.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս Երևանի քաղաքապետ Հայկ Մարուքյանի, որը գործում է Երևանի քաղաքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մետրոգիպրոտրանս» բաժնետիրական ընկերությունը ի դեմս Ընկերության փոխնախագահ Լ.Բ. Նիկեղոսյանի, որը գործում է 28.10.2021թ. տրված լիազորագրի հիման վրա, (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի Աջափնյակ թաղամասում մետրոպոլիտենի կայարանի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի փուլերի և ծավալների կատարման ժամկետները ներկայացված են օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք:

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքով պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն եակնորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն եակն է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի

Мэрия города Еревана, в лице мэра Марутяна Айка, действующего на основании устава мэрии города Ереван (далее «Заказчик»), с одной стороны, и Акционерное общество «Метрогипротранс», в лице Вице-президента Никандрова Л.Б., действующего на основании доверенности б/н от 28.10.2021г. (далее «Исполнитель»), с другой стороны, заключили настоящий договор о нижеследующем:

1. ПРЕДМЕТ ДОГОВОРА

1.1 Заказчик поручает, а Исполнитель обязуется выполнить **консультационные работы по подготовке проектно-сметной документации на строительство станции метро в районе Ачапняк города Еревана** (далее - работа) в соответствии с требованиями технических характеристик и графиком закупок, установленными Приложением № 1, являющимся неотъемлемой частью настоящего договора (далее - Договор).

1.2 Работа выполняется в соответствии с графиком закупок и сроками, установленными Приложением № 1 к Договору.

1.3 Сроки выполнения объема и этапов работ, предусмотренных Договором представлены в календарном графике (Приложение N 2).

2. ПРАВА И ОБЯЗАННОСТИ СТОРОН.

2.1 Заказчик имеет право:

2.1.1 Проверять ход и качество работы Исполнителя в любое время, не вмешиваясь в деятельность Исполнителя;

2.1.2 Если выполненные работы не соответствуют техническим характеристикам и графику закупок, указанным в приложении N 1 к Договору:

а) не принимать работу, установив по своему усмотрению разумный срок для безвозмездной замены работы ненадлежащего качества на работу, соответствующую Договору, и потребовать от Исполнителя уплаты штрафа, предусмотренного пунктом 5.2 Договора, а также штрафа, предусмотренного пунктом 5.3.

б) отказаться от исполнения Договора и потребовать возврата уплаченной за работу суммы, а также потребовать от Исполнителя уплаты штрафа, предусмотренного пунктом 5.2 Договора.

2.1.3 расторгнуть контракт в одностороннем порядке, если Исполнитель существенно нарушил условия Договора. Нарушение Договора со стороны Исполнителя считается существенным, если:

а) выполненная работа не соответствует

համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆԱՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը

требованиям, изложенным в приложении № 1 к Договору;

б) нарушен срок выполнения работы.

2.2 Заказчик обязан:

2.2.1 обсудить и принять результаты работы, выполненной в соответствии с графиком закупок, а в случае выявления недостатков в результате работы немедленно сообщить об этом Исполнителю в письменной форме.

2.2.2 выплатить Исполнителю суммы, причитающиеся ему в случае приема результата работы, а также выплатить штраф, предусмотренный пунктом 5.5 Договора, в случае нарушения сроков.

2.3 Исполнитель имеет право:

2.3.1 требовать от Заказчика уплаты причитающихся ему сумм, а в случае нарушения Заказчиком срока, указанного в пункте 4.2 Договора, также штрафа, предусмотренного пунктом 5.5 Договора.

2.4 Исполнитель обязан:

2.4.1. Обеспечить выполнение работ на условиях, предусмотренных в Приложении № 1 к Договору, руководствуясь действующим законодательством.

2.4.2. Оплатить штраф и пени, предусмотренные пунктами 5.2 и 5.3 Договора, в случаях, предусмотренных Договором.

2.4.3. Заблаговременно уведомить Заказчика в письменной форме в случае начала процесса ликвидации или банкротства во время исполнения Договора.

3. ПОРЯДОК СДАЧИ-ПРИЕМА РАБОТ.

3.1 Прием выполненной работы осуществляется путем подписания Протокола сдачи - приема /передачи-приема/ между Заказчиком и Исполнителем. Факт сдачи работы Заказчику фиксируется двусторонним документом между Заказчиком и Исполнителем с указанием даты составления документа.

До дня, предусмотренного для выполнения работ по договору, Исполнитель предоставляет Заказчику подписанный им документ, фиксирующий факт сдачи работы Заказчику (Приложение N 3.1). Руководство по эксплуатации размещается на сайте www.procurement.am в разделе "электронные закупки": на сайте, работающем по адресу <url> с использованием системы электронных закупок armeps, а также протокол приема-сдачи работ (Приложение N 3):

При этом Исполнитель не подписывает акт приема-передачи, заверяет его электронной подписью, заполняя только те графы, которые относятся к его данным (порядок заполнения установлен www.procurement.am в подразделе "Приказы Министра финансов" раздела

համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **1,848,000,000 (Մեկ միլիարդ ութ հարյուր քառասունուր միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ 308,000,000 (երեք հարյուր ութ միլիոն) ՀՀ դրամ ԱԱՀ-ն:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև մինչև 30% չափով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում Պատվիրատուն՝ փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար (Կատարողի առաջարկության հիման վրա): Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի

"Законодательство" действующего сайта.

3.2 Если выполненная работа соответствует условиям договора, Заказчик в течение 15 рабочего дня, считая со дня, следующего за днем получения документов, указанных в пункте 3.1 Договора, подписывает и через систему электронных закупок armeps предоставляет Исполнителю подписанный акт приема-передачи и положительное заключение, послужившее основанием для его подписания.

3.3 Если выполненная работа или ее часть не соответствует условиям Договора, Заказчик не подписывает акт сдачи-приема и в срок, указанный в пункте 3.2 настоящего договора, через систему электронных закупок armeps возвращает Исполнителю акт сдачи-приема и отрицательное заключение, послужившее основанием для возврата. В случае применения данного пункта Заказчик принимает меры, предусмотренные Договором для такой ситуации, и применяет к Исполнителю меры ответственности, предусмотренные Договором.

3.4 Если Заказчик не принимает выполненную работу или не отказывается от ее приема в срок, указанный в п. 3.2 Договора, выполненная работа считается принятой и на следующий день после истечения срока, указанного в п. 3.2 Договора, Заказчик через систему электронных закупок предоставляет Исполнителю подписанный Протокол сдачи-приемки.

4. ДОГОВОРНАЯ ЦЕНА.

4.1. Стоимость работ, подлежащих выполнению Исполнителем по настоящему Договору составляет **1,848,000,000 (один миллиард восемьсот сорок восемь миллионов) драмов РА, включая НДС 308,000,000 (триста восемь миллионов) драмов РА.**

В стоимость включены все расходы Исполнителя, в том числе налоги, пошлины и иные платежи, установленные законодательством РА.

Стоимость выполнения работ стабильная, Исполнитель не вправе требовать увеличения, а Заказчик – уменьшения указанной стоимости.

4.1.1 В случае предусмотрения финансовых средств на выполнение Договора в размере до 30% от стоимости Договора, Заказчик перечисляет предоплату (аванс) на банковский счет Исполнителя (на основании предложения Исполнителя). Погашение предоплаты (аванса) осуществляется в виде уменьшения (удержания) от выплат, производимых на основании протокола приема-передачи. При этом, до полного погашения предоплаты (аванса) оплата Исполнителю не

դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի շրջանակներում կնքվող համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՅԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱՅՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը

производится.

4.2 Заказчик оплачивает за проделанную работу в драмах РА, безналичным путем, посредством перечисления денежных средств на расчетный счет Исполнителя. Перечисление денежных средств производится на основании протокола приема-передачи, в размере и сроки установленные соглашением о графике выплат, заключенным в рамках Договора. Если протокол составляется после 20-го числа данного месяца, а по графику выплат в этом месяце предусмотрены финансовые средства, то оплата осуществляется в течение 30 рабочих дней, но не позднее 30-го декабря этого года.

5. ОТВЕТСТВЕННОСТЬ СТОРОН

5.1 Исполнитель несет ответственность за соблюдение требований настоящего Договора на выполнение работ.

5.2 В каждом случае выполнения работы, не соответствующей техническим характеристикам, указанным в Приложении N 1 к Договору, с Исполнителя взыскивается штраф в размере 0,5 (ноль целых пять десятых) процента от суммы, предусмотренной пунктом 4.1 договора. При этом штраф начисляется в случае выполнения работы в срок, установленный настоящим Договором, но в случае ее непринятия Заказчиком.

5.3 В случае нарушения предусмотренного Договором срока выполнения работы с Исполнителя взыскивается пени в размере 0,05 (ноль целых пять сотых) процента от цены подлежащей выполнению, но не выполненной работы за каждый просроченный рабочий день.

5.4 Штраф и пени, предусмотренные пунктами 5.2 и 5.3 договора, начисляются и засчитываются в счет сумм, подлежащих выплате Исполнителю в результате выполнения работ.

5.5 В случае нарушения Заказчиком срока, предусмотренного пунктом 4.2 Договора, за каждый просроченный рабочий день с Заказчика взимается пеня в размере 0,05 (ноль целых пять сотых) процента от подлежащей оплате, но не выплаченной суммы.

5.6 В случаях, не предусмотренных договором, стороны несут ответственность за неисполнение или ненадлежащее исполнение своих обязательств в порядке, предусмотренном законодательством Республики Армения.

5.7 Уплата неустойки и (или) штрафа не освобождает Стороны от полного исполнения своих договорных обязательств.

6. ДЕЙСТВИЕ НЕПРЕОДОЛИМОЙ СИЛЫ (ФОРС-МАЖОР)

Стороны освобождаются от ответственности за полное или частичное невыполнение обязательств по настоящему Договору и договорам, заключенным

կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնալիս է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված

на основании настоящего Договора, если это произошло вследствие форс-мажорных обстоятельств, возникших после заключения настоящего Договора, и которые стороны не могли предвидеть или предотвратить. Такие ситуации - землетрясение, наводнение, пожар, война, объявление военного и чрезвычайного положения, политические волнения, забастовки, прекращение работы средств связи, действия государственных органов и т.д., которые делают невозможным выполнение обязательств по настоящему Договору. Если форс-мажорные обстоятельства длятся более 3 (трех) месяцев, каждая из сторон имеет право расторгнуть Договор, предварительно уведомив об этом другую сторону.

7. ДРУГИЕ УСЛОВИЯ.

7.1 Настоящий Договор вступает в силу с момента подписания сторонами и действует до полного исполнения сторонами обязательств, принятых по настоящему Договору.

7.2 Платежное обязательство стороны, вытекающее из договора, не может быть прекращено путем зачета встречного обязательства, вытекающего из другого договора, без письменного соглашения сторон, заверенного печатью. Право требования, вытекающее из договора, не может быть передано другому лицу без письменного согласия должника.

7.3 Если в порядке, предусмотренном законодательством, в результате контроля за соблюдением требований законодательства или рассмотрения жалоб будет зафиксировано, что в процессе закупки, до заключения Договора, Исполнитель представил недостоверные документы (сведения и информация), или решение о признании его избранным участником не соответствует законодательству Республики Армения, то после появления этих оснований Заказчик в одностороннем порядке расторгает Договор, если бы зафиксированные до заключения Договора нарушения были известны, то согласно законодательству Республики Армения о закупках они послужили бы основанием для незаключения Договора. При этом Заказчик не несет риск убытков или упущенной выгоды, возникших у Исполнителя в результате одностороннего расторжения Договора, а последний обязан в порядке, установленном законодательством Республики Армения, возместить ущерб, понесенный Заказчиком в той части, в которой Договор расторгнут.

7.4 Споры, связанные с договором, подлежат рассмотрению в судах Республики Армения.

7.5 Изменения и дополнения в Договор могут быть внесены только по взаимному согласию сторон путем заключения соглашения, которое станет неотъемлемой частью договора.

համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կլքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am

Запрещается вносить в Договор, а если цена договора является факторной, то и в Договор, заключаемый в каждом последующем году после настоящего Договора, изменения, которые приводят к увеличению объема закупаемых работ или искусственному изменению цены закупаемой единицы труда или цены Договора.

Каждый случай изменения Договора под влиянием независимых от сторон договора факторов определяется Правительством Республики Армения.

7.6 Срок выполнения работы может быть продлен до истечения этого срока по Договору при наличии предложения Исполнителя, при условии, что Заказчик не утратил требования об использовании работы, и предложение Исполнителя представлено не позднее чем за 5 календарных дней до истечения срока, первоначально установленного Договором для выполнения работы. При этом в случае, установленном настоящим пунктом, срок выполнения работы может быть продлен однократно до 30 календарных дней, но не более срока, установленного Договором.

7.7 Выгода (экономия) или ущерб, понесенные сторонами (Исполнителем или Заказчиком) в условиях надлежащего исполнения Договора, являются выгодой или ущербом, понесенным этой стороной.

Обязательства сторон Договора перед третьими лицами, включая другие сделки, заключенные Исполнителем в рамках исполнения Договора, и вытекающие из них обязательства выходят за рамки регулирования Договора и не могут влиять на принятие результата исполнения Договора. Отношения, связанные с этими сделками, и исполнение вытекающих из них обязательств регулируются нормами, регулирующими отношения, связанные с этими сделками, и ответственность за них несет Исполнитель.

7.8 Договор не может быть изменен в связи с частичным невыполнением обязательств сторон или полностью расторгнут по взаимному согласию сторон, за исключением случаев сокращения финансовых ассигнований, необходимых для выполнения работ в порядке, установленном законодательством Республики Армения. При этом до сокращения финансовых ассигнований, необходимых для выполнения работ в порядке, установленном законодательством Республики Армения, должно быть получено взаимное согласие сторон Договора о частичном неисполнении или полном прекращении обязательств.

7.9 Заказчик публикует уведомление о полном или частичном одностороннем расторжении Договора на основании неисполнения или ненадлежащего исполнения принятых Исполнителем обязательств www.procurement.am в разделе

հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 114 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3.1 և 3.2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.14 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևանի քաղաքապետի 13.10.2021թ. թիվ 3245-Ն որոշմամբ ձևավորված մասնագիտական խումբը:

"Уведомления об одностороннем расторжении договоров", направляет на адрес сайта с указанием даты публикации. Исполнитель считается надлежащим образом уведомленным о расторжении Договора в одностороннем порядке на следующий день после опубликования уведомления, установленного настоящим пунктом. В день публикации в бюллетене уведомления о полном или частичном одностороннем расторжении Договора Заказчику также направляется уведомление на электронную почту Исполнителя.

7.10 Споры, возникающие в связи с Договором, разрешаются путем переговоров. В случае недостижения соглашения споры разрешаются в судах Армении.

7.11 Договор состоит из 114 страниц и заключен в двух экземплярах, имеющих равнозначную юридическую силу. Приложения N 1, N 2, N 3 и 3.1 к настоящему Договору являются неотъемлемой частью Договора, каждой стороне предоставляется по одному экземпляру Договора.

7.12 К настоящему Договору применяется право Республики Армения.

7.13 Выполнение работ, предусмотренных Договором, осуществляется при наличии финансовых средств на эти цели и заключении на их основе соответствующего Договора между сторонами. Договор расторгается, если в течение шести месяцев с даты его заключения для выполнения Договора не будут выделены финансовые средства на эти цели. Если размер финансовых средств, выделяемых на исполнение Договора, превышает двадцатикратный размер базовой единицы закупки, Заказчик заключает Договор, если представленные Исполнителем квалификация и обеспечение исполнения Договора в виде неустойки в размере предоставленных финансовых средств заменяются поручительством или денежными средствами с учетом требований пункта "б" подпункта 17 пункта 32 приложения № 1 к постановлению Правительства Республики Армения от 4 мая 2017 года № 526-н. В этом случае Исполнитель заключает договор, а в случае замены представленной квалификации в виде неустойки и обеспечения исполнения Договора также предоставляет заказчику обеспечение исполнения Договора в течение пятнадцати рабочих дней со дня получения уведомления о заключении Договора. В противном случае договор расторгается Заказчиком в одностороннем порядке.

7.14 Права и обязанности Заказчика, предусмотренные настоящим Договором, в порядке установленном законодательством РА

7.15 Ռուսերեն լեզվով սույն պայմանագրի կետերի տարաբնույթ (երկակի) մեկնաբանման հնարավորության դեպքում հիմք է ընդունվում սույն կետերի հայերեն տարբերակը:

осуществляет специализированная группа, сформированная постановлением н.3245-Н от 13.10.2021г. мера города Ереван.

7.15 При разностороннем (двусмысленном) толковании пунктов настоящего Договора на русском языке за основу принимается во внимание текст тех же пунктов, составленный на армянском языке.

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱԴԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8. АДРЕСА, БАНКОВСКИЕ РЕКВИЗИТЫ И ПОДПИСИ СТОРОН

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արցիշտի փող. 1
ՀՎՀՀ 02593108

ЗАКАЗЧИК
Մարյա Երևան
Գ. Երևան փող. Արցիշտի 1
ՀՅՕՄ 02593108



Յ. Մարության

Ա. Մարտյան

(ստորագրություն)

(подпись)

Կ.Տ.

Печать

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

АО «Метрогипротранс»
ОГРН 1027700115882, ИНН 7705018916
142703, Российская Федерация, Московская область, Ленинский район, г. Видное, ул. Заводская, д. 2А, этаж 3, комната 322
Расчетный счет в драмах РА 40702051500760000001 в ПАО «МОСКОВСКИЙ КРЕДИТНЫЙ БАНК», БИК 044525659, корр.счет 30101810745250000659

ИСПОЛНИТЕЛЬ
АО «Метрогипротранс»
ОГРН 1027700115882, ИНН 7705018916
142703, Российская Федерация, Московская область, Ленинский район, г. Видное, ул. Заводская, д. 2А, этаж 3, комната 322
Расчетный счет в драмах РА 40702051500760000001 в ПАО «МОСКОВСКИЙ КРЕДИТНЫЙ БАНК», БИК 044525659, корр.счет 30101810745250000659



Լ.Բ. Նիկանդրով

Л.Б. Никандров

(ստորագրություն)

(подпись)

Печать

Հավելված N 1
 2021թ. կնքված N ԵԲ-ԵՓՄԱՇՁԲ-21/1
 ծածկագրով գնման պայմանագրի

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
 ԱՇԽԱՏԱՆՆԵՐԻ ՓԱՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ
 ԽՈՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆԻ ԿԱՅԱՐԱՆԻ ԿՈՌՈՐՑՄԱՆ ՆԱԽԳԾԱՆԱԽԱՐՀՆԵՎՅՈՒՆ
 ԱՇԽԱՏԱՆՆԵՐԻ**

Աշխատանքի				կատարման	
տեխնիկական բնութագրիչը	չափման միավորը	ընդհանուր գինը/ ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը
<p>Երևան քաղաքի Աջափնյակ թաղամասում մետրոպոլիտենի կայարանի կառուցման սպանախառնաշփյռի փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքներ</p> <p>Տեխնիկական բնութագրիչը կցվում է. ԽՈՆՅԱԿԻ ՎԻՃ ԿՈՆ 1.1, 1.2, 1.3 հավելվածները</p> <p>ԽՈՆՅԱԿԻ ՎԻՃ ԿՈՆ 1.1, 1.2, 1.3 հավելվածները լուծագրված են բնութագրի անբաժանելի մասը:</p>	դրամ	1,848,000,000	1	ք. Երևան, Արգիշտի 1	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրին ուժի մեջ մտնելուց հետո 510-րդ օրացուցային օրը ներառյալ

Պ Ա Ս Կ Ի Ր Ա Տ ՈՒ
 Երևանի քաղաքապետարան
 ք. Երևան, Արգիշտի փող. 1
 ՀՎՀՀ 02593108



Հ. Մարության
 (ստորագրություն)

Կ.Տ

Կ Ա Ս Մ Ր Ո Ղ

АО «Метрогипротранс»
 ОГРН 1027700115882, ИНН 7705018916
 142703, Российская Федерация, Московская область,
 Ленинский район, г. Видное, ул. Заводская, д. 2А, этаж
 3, комната 322

(Signature)
 (ստորագրություն)

Լ.Բ. Նիկենտրով
 (ստորագրություն)



Կ.Տ

(Signature)
(Signature)

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Նախապատմություն և հակիրճ տվյալներ Երևանի Մետրոպոլիտենի մասին

Երևանի մետրոպոլիտենի շինարարությունը սկսվել է 1972 թվականից:

Երկրաբանական հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ ստորգետնյա ջրերի ստատիկ մակարդակը հողի մակերևույթից 9 մետր խորության վրա է: Դա Նշանակում էր, որ մետրոպոլիտենի թունելային կառույցները պետք է տեղադրվեն ընդերքի ստորգետնյա ջրերի ամենահագեցված հատվածներում: Ջրերի աննախադեպ քանակով ներթափանցման պայմաններում հորատանցումներ հնարավոր չէր իրականացնել, որի պատճառով անխուսափելիորեն անհրաժեշտություն դարձավ ստորգետնյա ջրերի մակարդակի արհեստական իջեցումը: Այս գործընթացը իրականացվեց Նախագծված ուղեգծով թունելների երկարությամբ մակերևույթից մինչև 58 մետր խորությամբ հորատանցքեր փորելով, նրանցում տեղադրվեցին բարձր արտադրողականությամբ խորքային պոմպեր (մոտավորապես 220 մ³/ժամ), որոնք 24 ժամ անընդհատ աշխատանքով իջեցնում էին ջրերի մակարդակը մի կերպ հնարավորություն ստեղծելով կատարել թունելների հորատանցում: Ընդհանուր առմամբ հետախուզական և աշխատանքային հորատանցքերի թիվը 100-ից ավելի էր, այնուհանդերձ հնարավոր չէր ջրերի մակարդակը իջեցնել կառուցվող թունելի ստորին նիշից ավելի ներքև և կատարել ազատ հորատանցման աշխատանքներ հիդրոերկրաբանական պայմաններով ընդերքը հնարավորություն չէր տալիս հորատանցման ջրերի մակերևույթ: Բացի իրականացնել առանց հսկայական քանակությամբ կուտակվող ջրերի արտամղման դեպի մակերևույթ: Բացի ջրաիջեցման համակարգի բազմաթիվ պոմպերից թունելներում կառուցվում և մոնտաժվում էին պոմպակայաններ արտամղման համար, որոնք միասին ընդհանուր առմամբ մակերևույթ արտամղում էին ժամում 10-12 հազար մետր խորանարդ ջուր: Այս պայմաններում ապահովել բարձր արտադրողականություն կամ թունելների անցման բարձր արագություն հնարավոր չէր: Յուրաքանչյուր անցման կետից օրեկան մեկ մետրից ավելի հորատանցել և ամրակապել անհնար էր: Դրանում համոզվեցին հորհրդային Միության տարբեր քաղաքներից օգնության եկած թունելագործները, ովքեր իրենց քաղաքներում օրեկան հորատանցում էին 10 մետր և ավելին: Այս և մի շարք այլ դժվարություններով պայմանավորված աննախադեպ բարդ պայմաններում կառուցվող մետրոպոլիտենը պլանավորված ժամկետում շահագործման չհանձնվեց: Նախատեսված 1980 թվականի նոյեմբերի 29-ի ժամկետը ստիպված տեղափոխվեց 1981 թվականի մարտի սկիզբ:

Կառուցվող մետրոպոլիտենի առաջին հինգ կայարանը հանձնվել է շահագործման 1981 թվականի մարտին, իսկ հետագայում՝ 1983, 1984, 1985, 1987, 1989 թթ. հաջորդաբար շահագործման հանձնվեցին ուղեգծի անավարտ մնացած՝ «Գործարանային», «Շենգավիթ», «Գարեգին Նժդեհի Հրապարակ», «Չորավար Անդրանիկ» կայարանները, հավաքակայանը (ձեռք), իսկ ավելի ուշ՝ 1998 թվականին «Չարբախ» կայարանը: Այսպիսով մետրոպոլիտենն ունի 10 կայարան, որոնցից 7-ը գտնվում են ստորգետնյա թունելների հատվածներում, իսկ 3-ը վերգետնյա են, մոտավորապես 12,5 կմ ընդհանուր շահագործվող երկարություն, 45 վագոններով համալրված էլեկտրահավաքակայան, 24 շարժասանդուղք, 13 ենթակայան:

Կազմակերպությունն ունի ավելի քան 900 աշխատող:

Մետրոպոլիտենի ստորգետնյա կայանները տեղակայված են 20-50 մետր խորության վրա: Յուրաքանչյուր ստորգետնյա կայարան ունի մեկ մուտք՝ համալրված երեք շարժասանդուղքներով, բացի Շենգավիթ կայարանից: Յուրաքանչյուր վերգետնյա կայարան ունի աստիճաններով մեկ մուտք: Մետրոպոլիտենի վերելակներ տեղադրված չեն: Կայարանների միջին երկարությունը 105 մետր է:

Առկա թունելները կառուցվել են և՛ մեխանիկական վարման ու հորատման, և՛ պայթեցումների միջոցով: Թունելների արտաքին տրամագիծը 5,5 մետր է, որն ապահովում է 5,1 մետր ներքին տրամագիծ: Թունելների ընդհանուր երկարությունը 14,25 կիլոմետր է:

Թունելները կառուցվել են երեք տեսակի երեսարկներով՝ հավաքովի երկաթ բետոնե օղակներով, թուջե օղակներով և մոնոլիտ երկաթբետոնով: Համակարգը ընդգրկում է 5 կամուրջ և անցումներ:

Ստորգետնյա ջրերի ներհոսքը և նրա քայքայիչ ազդեցությունը թունելներում մոնտաժված գծի, էլեկտրասարքավորումների և շարժակազմերի վրա շարունակվում է պահպանվել մինչև օրս: Ջրերի մակարդակի իջեցման արհեստական մեթոդները ինչպես շինարարության ժամանակ այնպես էլ մետրոպոլիտենը շահագործման հանձնելուց հետո չտվեցին սպասվող արդյունքները: Գործող թունելներում և ստորգետնյա կառույցներում ջրերի առկայությունը մեծապես խոչընդոտում էր մետրոպոլիտենի անվտանգ շահագործմանը և սարքավորումների նորմալ աշխատանքին: Այս պայմաններում մետրոպոլիտենի շահագործումը դառնում էր վտանգավոր: Ստորգետնյա ջրերից թունելների ջրագրկումը դարձել էր այդ պահի հրամայականը: Նախագծվեց, սկսվեց և ներկայումս էլ շարունակվում է կառուցվել դրենաժային թունելը, որն արդեն տվել է իր դրական արդյունքները, բայց քանի որ թունելի շինարարությունը լիովին ավարտված չի նրա կառուցված մասի արդյունքում ձեռք բերված ջրաիջեցումը էապես չի իջեցրել ստորգետնյա ջրերի մակարդակը դեռևս չկառուցված հատվածին հարող շահագործվող թունելներում: Ներկայումս մետրոպոլիտենում շարունակվում են գործել ներթափանցվող ջրերի արտամղման 2 հզոր պոմպակայաններ, ինչպես նաև մասնակիորեն գործում է գոլոտային ջրերի մակարդակի իջեցման արհեստական համակարգը:

Գնացքների էլեկտրամատակարարումը իրականացվում է երրորդ ռելիե միջոցով՝ խորհրդային ստանդարտների պահանջներին համապատասխան: Ուղեգիծը կառուցվել է երկու ստորգետնյա թունելներով և երկու զուգահեռ վերգետնյա գծերով: Վերգետնյա հատվածներում գծերը կառուցվել են հիմնականում ավանդական ձևով՝ փայտակոճերը խիճով բալաստավորված՝ գծի վերին շինության տեսքով:

Մետրոպոլիտենի տեխնիկական տվյալներ

Մետրոյի ներկայումս շահագործվող վագոնների առանձնահատկությունները և տեղեկություններ շարժակազմի մասին

Մետրոյի համակարգը ներկայումս աշխատում է 15 երկվագոն գնացքներով, որոնցից 8-ը աշխատում են հիմնական գծի վրա, 1-ը իրականացնում է մերձքաղաքային ծառայություններ, իսկ 6 գնացքներ՝ անցնում են հաստատված ժամանակացույցին համապատասխան հերթական տեխնիկական ստուգում: Գնացքները աշխատում են առավոտյան ժամը 6:30-ից մինչև երեկոյան 23:00-ն, գերլարված ժամերին՝ հինգ րոպե հաճախականությամբ, իսկ ոչ գերլարված ժամերին՝ ութ րոպե հաճախականությամբ: Ներկայումս Երևանի Մետրոպոլիտենը 2019թ. -ին փոխադրել է միջին հաշվով օրեկան հիսուն հազար, իսկ տարեկան՝ 19 միլիոն ուղևոր: Առավելագույն ուղևորահոսքը՝ տարեկան յոթանասուն միլիոնից ավելի ուղևոր տեղափոխվել է 1993 և 1994թթ, հայտնի իրադարձություններով պայմանավորված:

Մետրոյի վագոնների տեսակները	81-717 / 81-717-5
Արտադրության տարին	1980-93թթ.
Առավելագույն երկարություն	19210 մմ
Առավելագույն բարձրություն	3695 մմ
Առավելագույն լայնություն	2712 մմ
Առավելագույն զուտ քաշ	34 տոննա
Առավելագույն աշխատանքային արագություն	80 կմ/ժ
Քարշային շարժիչների քանակը մեկ վագոնում	4 միավոր
Յուրաքանչյուր քարշային առավելագույն հզորություն	117 կՎ
Արագացում	1.1 մ/վ ²
Անիվի տրամագիծը	780 մմ
Էլեկտրամատակարարում	825 Վ ՄՀ
Էլեկտրաէներգիայի ստացում	Հպակային ռելս

Ուղեգծի բնութագիր

Մետրոյի ուղեգծի բնութագիրը հետևյալն է՝

- ուղևորափոխադրման համար նախատեսված ուղեգծի ընդհանուր երկարությունը – մոտավորապես 26.57կմ,
- դեպոյի ուղեգծի ընդհանուր երկարությունը – մոտավորապես 3.55կմ,
- այլ ուղեգծերի ընդհանուր երկարությունը – մոտավորապես 5.16կմ,
- ամբողջ ուղեգծի ընդհանուր երկարությունը – մոտավորապես 35.28կմ,
- կայարանների քանակը – 10:

Մետրոյի գործող կայարաններ

Ստորգետնյա կայարանները տեղակայված են 20-50մ խորության վրա: Յուրաքանչյուր ստորգետնյա կայարան ունի մեկ մուտք համալրված երեք շարժասանդուղիներով: Յուրաքանչյուր վերգետնյա կայարան ունի սանդուղիներով մեկ մուտք: Ոչ մի վերելակ տեղադրված չէ Մետրոյում: Կայարանների երկարությունը 105մ է, ինչը թույլ է տալիս ունենալ քառավագոն գնացքներ:

Ուղևորահոսք

Ներկայումս գործող մետրոպոլիտենը օրեկան տեղափոխում է ընդամենը մինչև 70000 ուղևոր, իսկ մայրաքաղաքում հանրային տրանսպորտով օրեկան երթևեկում են շատ անգամ ավելի ուղևորներ: Այս ընդհանուր հաշվեկշռում մետրոպոլիտենի ցածր ցուցանիշները մեծապես պայմանավորված են կարճ ուղեգծով և փոքրաքանակ կայարաններով, որոնք տեղադրված են մեկ գործող գծի վրա և բնականաբար չեն կարող սպասարկման ոլորտ ուղղակիորեն ընդգրկել քաղաքի խիտ բնակեցված թաղամասերի և ծայրամասերից երթևեկող ուղևորներին: Մայրաքաղաքում առկա վերգետնյա տրանսպորտային խնդիրները մեծապես կապված են հանրապետություն այլ երկրներից ներկրվող թանկարժեք էներգակիրների և տրանսպորտային միջոցների հետ: Դեռևս 90-ական թվականներից մետրոպոլիտենը դիտարկվում էր որպես մայրաքաղաքի ամենաառաջնություն տրանսպորտային միջոցը պայմանավորված նրա արագությամբ, անվտանգությամբ, հարմարավետությամբ և, որ ամենակարևորն է այն էկոլոգիապես մաքուր է և աշխատում է տեղում արտադրվող էլեկտրաէներգիայով:

Եթե ուշադրությամբ հետևենք նախորդ 3 տարվա ուղևորափոխադրումների արդյունքներին, ակնհայտորեն պարզ կդառնա, որ մետրոպոլիտենով երթևեկող ուղևորների քանակը զգալիորեն ավելացել է և նկատվում է

Նախկինում կոնկրետ միջոցներ չեն հատկացվել և չեն ձեռնարկվել միջոցառումներ մետրոպոլիտենի զարգացման ուղղությամբ: Ներկայումս ՀՀ կառավարությունը փորձում է զարգացնել մետրոպոլիտենը դեպի Աջափնյակ թաղամաս՝ նախապատվություն տալով նախկինում կառուցված 1054 մետր ընթացքային թունելների օգտագործման հնարավորությանը՝ կառուցելով ընդամենը մեկ կայարանային համալիր և մետրոկամուրջ:

Գործող մետրոպոլիտենի զարգացումը դեպի Աջափնյակ

Հիմնավորվում է նաև.

- Թաղամասում կարևոր սոցիալական հարց հանդիսացող տրանսպորտային խնդրի լուծման անհրաժեշտությամբ, քանի որ թաղամասի բնակչությունը հիմնականում օգտվում է բացառապես հանրային տրանսպորտից:
- Աջափնյակը քաղաքի կենտրոնի հետ կապող ուղիների սակավությամբ (որանք ներկայումս ընդամենը երկուսն են. Կիևյան և Դավիթաշենի կամուրջները):
- Կիևյան և Դավիթաշենի կամուրջների քաղաքային տրանսպորտից զգալի բեռնաթափելու հնարավորությամբ:
- Հրազդան գետի ձախ ափին կան փորված մետրոյի թունելների առկայությամբ, ինչը զգալիորեն կհեշտացնի կայարանի կառուցումը:
- Դեպի Աջափնյակ զարգացման ծրագրի իրականացումը թույլ կտա ունենալ հարմարավետ, արագընթաց, եկուղիկապես մաքուր տրանսպորտ, որը կմիացնի Հրազդան գետի կիրճով բաժանված Երևանի երկու մասերը, ինչը շատ կարևոր է ռազմավարական տեսանկյունից:

Գործող մետրոպոլիտենի դեպի Աջափնյակ զարգացման ուղղությամբ կատարված և կատարվելիք աշխատանքների կազմակերպման վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ

Երևանի մետրոպոլիտենի դեպի Աջափնյակ զարգացման՝ 3.58 կմ երկարությամբ և 77849,98 հազար խորհրդային ռուբլի ընդհանուր արժողությամբ հատվածի նախագիծն ուսումնասիրվել է Խորհրդային Միության ՀԾՍ (МПС СССР) փորձաքննության (экспертиза) վարչության կողմից և հաստատվել է 1987 թվականի սեպտեմբերի 25-ին: Այդ նախագիծը, բացի մետրոպոլիտենի գծի շարունակման գործընթացից, իր մեջ ներառում էր մի շարք այլ նշանակության հիմնական և օժանդակ օբյեկտների շարունակություն: Նախագիծը կազմվել էր տվյալ ժամանակի տեխնիկական հագեցվածության և պահանջների համապատասխան, համաձայն որի մետրոպոլիտենի գիծը հատելով Հրազդան գետի կիրճը պետք է հասներ կինոթատրոն «Արագած», այնուհետև մինչև Նոր կառուցվող Գ-3 թաղամաս ներառելով իր մեջ 3 Նոր կայարան, իսկ գործող գիծը կերկարացվեր ևս 3,58 կիլոմետրով, ներգրավելով մետրոպոլիտենի սպասարկման ոլորտը Աջափնյակի 15-րդ Գ-3, Դավթաշեն, Մալաթիա և Շահումյան թաղամասերի բնակչության զգալի մասը:

Կառուցվող մետրոպոլիտենի տնօրինությունը Երևան քաղաքի իշխանությունների գործունե աջակցությամբ և նրանց հետ միասին, սկսած 1987 թվականից արագ կերպով կառուցման գոտուց տեղափոխեցին կոմունիկացիաները, ստեղծեցին շինարարականներ, ավարտեցին նախապատրաստական փուլը, որից հետո սկսվեց մետրոպոլիտենի վերգետնյա շինարարության և թունելների հորատանցման աշխատանքները միաժամանակ չորս տեղամասերով և շարունակվեց մինչև 1992 թվականը:

Թիվ 24 հորանի տեղամաս. Կառուցվել է Մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի հետնամասում Ջեռու փողոցի հարևանությամբ: Այս հորանից կառուցվել են երկու ընթացքային թունելներ գործող մետրոպոլիտենի «Բարեկամություն» կայարանից 1054 մետր ընդհանուր երկարությամբ (մոտավորապես 2X527 հաշվարկով), որոնք ապահովում են դեպի կիրճի հարթակ էլը, որտեղից կառուցվելու է մոտավորապես 152 մետր երկարությամբ մետրոկամուրջը: Այս հորանով նախատեսված է նաև մետրոպոլիտենի առաջին հերթի քաղաքաշտապանության գլխավոր օբյեկտների՝ ստորգետնյա գեներատորային հզոր ենթակայանի, արտակարգ իրավիճակներում օդը մաքրող, ֆիլտրող, թունելների վրա մետաղական հերմետիկ դռների տեղադրման և այլնի կառուցումը: պահուստային կուտակարանի, թունելների վրա մետաղական հերմետիկ դռների տեղադրման և այլնի կառուցումը:

Թիվ 25 հորանի տեղամաս. Այս հորանը տեղադրված է Հալաբյան և Աբեյյան փողոցների հատման խաչմերուկի հարևանությամբ: Հորանից նախատեսված է ստորգետնյա կայարանի, ընթացքային թունելների, թեք հորանի, ենթակայանի և այլ կարևորագույն թունելային կառուցվածքների շինարարությունը: Հորանի միջոցով շինարարություն սկսելու համար կառուցվել են 345 մետր ընդհանուր երկարության տեխնոլոգիական թունելներ, հորատանցվել է 48 գծամետր ընթացքային թունել, սկսվել են կայարանի միջին սպասարկման սրահին առընթեր քարշային խուցի հորատանցման աշխատանքները, ամբողջությամբ կառուցված է թուփե վահանակներով եսկալատորային թեք մուտքը (ժամանակավորապես կոնսերվացված է) և այլն:

Թիվ 26 հորանի տեղամաս. Կառուցվել է Ջանիբեկյան, Բաշինջաղյան փողոցների միջնամասում: Այս հորանի օժանդակությամբ կառուցվել է 186 մետր ընթացքային թունել, որից երեսպատվել է 166 մետրը, մոտեցնող՝ 230 մետր, երեսպատվել է 220-ը: Հետերեսային ներարկումներ ընդհանրապես չեն կատարվել:

Թիվ 29 հորանի տեղամաս. Կառուցվել է Գ-1 թաղամասի հարևանությամբ: Այստեղ իրականացվել են թեք թունելի հողային աշխատանքների 22%-ը ու ընդհատվել են աշխատանքները՝ կառույցների ֆինանսավորման դադարեցման պատճառով:

Աջափնյակի երկու կայարանների կառուցման տեղամասերում ընդհանուր առմամբ հորատանցվել է 2370 գմ. տարբեր հատույթներ ու նշանակության թունելներ: Բետոնապատված (ամրակապված) չեն 66,9 մետր թունելներ: Դատարկությունների լցումն անարկումներ չեն կատարվել 1576 գծամետր թունելներում: Սա նշանակում է, որ չբետոնապատված (չամրակապված) մասերում ապարների տակ դրված են միայն ժամանակավոր ամրակապեր մետաղյա շրջանակների և գրունտների թափվելուց պահպանելու համար տախտակյա շերտի տեսքով, որոնք արդեն երկար տարիներ հորաններում օդափոխության բացակայության պայմաններում ենթարկվել են կոռոզիայի և մասնակիորեն փտել, ինչի պատճառով կորցրել են նախագծային կողողունակության մեծ մասը: Իսկ հետերեսարկային

հատվածներում ամրակապի վիճակը, արդյունքում նկատվում են ձևախախտման (դեֆորմացիա) երևույթներ ընթացքային թունելների եզրաչափային խախտումներով:

Բարեկամություն կայարանից դեպի Աջափնյակ կառուցված ստորգետնյա հատվածը մետրոպոլիտենի կարգավիճակով շահագործման պատրաստելու համար անհրաժեշտ աշխատանքների վերաբերյալ դիտարկումներ

Ինչպես նշվեց վերևում «Բարեկամություն» կայարանից մինչև կիրճ 1054 մետր ընդհանուր երկարությամբ կառուցված թունելը դեռևս շատ հեռու է շահագործման համար պահանջվող վիճակ ունենալուց: Երկու 527 մետր երկարությամբ թունելներում (1054 գծամետր) հարկավոր է իրականացնել մի շարք միջոցառումներ՝ ժամանակավոր և հիմնական աշխատանքների կատարման համար:

Ընթացքային թունելներում (1054 գծամետր) աշխատանքներ կազմակերպելու համար անհրաժեշտ կլինի լրիվ վերականգնել նրանց նախկինում մոնտաժված ժամանակավոր կոմունիկացիաները, մասնավորապես ջրատար և սեղմված օդի խողովակներ 1054 մետր էլեկտրական հոսանքի մատակարարման բաշխիչ էլեմենտներ, ավտոմատներ, ընթացքային և օժանդակ թունելներում, լուսավորության մալուխները և լուսատուները, P24 ռեյսերով շարժվող էլեկտրաքարշ, վագոնիկներ և այլ մեծ ու փոքր սարքավորումներ նյութեր տեղափոխելու և աշխատանք կատարելու համար: Թունելներում նախկինում մոնտաժված կոմունիկացիաները մեծամասամբ բացակայում են, իսկ առկա մնացորդները օգտագործման համար գրեթե պիտանի չեն:

Հիդրոմեկուսացման աշխատանքների իրականացումը պետք է կատարվի շուրջ 30 տարի աշխատանքներ չկատարված, լքված թունելներում, մինչև հիմնական աշխատանքները սկսելը առաջնահերթ պետք է կատարել մարկշեյդերական (ստորգետնյա գեոդեզիական) ստուգումներ դեֆորմացիաներ հայտնաբերելու և ուղղելու նպատակով:

Երկու ընթացքային թունելները հորատանցվել են հիմնականում պայթեցման եղանակով, քանի որ ապարները այդ հատվածում ներկայացված են 9-11 կարգի ամրության բազալտներով: Ընթացքային թունելների հիմնական ամրակապը 5,1մ ներքին տրամագծով երկաթբետոնե օղակներ են, որոնք մոնտաժվում են հավաքովի տարրերից: Թունելների վաքը (ռոտո) տարբեր հատվածներում տարբեր է՝ կան հարթ էլեմենտով և կլոր վաքերով, երկու դեպքում էլ այս կոնստրուկցիաները կարող են նորմալ աշխատել հատվածի երկարաբանական պայմաններում: Գրունտային էլ ջրերը գտնվում են ավելի խորը շերտերում, թունելներում առկա աննշան ջրերի առկայությունը պայմանավորված է վերգետնյա կոմունիկացիաների անսարքությամբ: Թունելների դեպի կիրճ դուրս եկող հատվածներում կան նաև 7,5 մետր տրամագծով թուջե վահանակներով կառուցված տեղամասեր, որոնք պայմանավորված են քաղաքաշտպանության միջոցառումներով: Թիվ 24 հորանը մինչև քաղաքաշտպանության օբյեկտների շինարարության լրիվ ավարտը չի կարող ծառայել մետրոպոլիտենին որպես օդափոխման հորան: Զաղաքաշտպանության օբյեկտների շինարարությունը ընթացքային թունելներում և նրանց հարող տարածքներում պետք է կառուցվեն այս փուլի շինարարության հետ, հակառակ դեպքում հետագայում կառուցել հնարավոր չի լինի:

Հիդրոմեկուսացման աշխատանքներ: Ինչպես նշվեց թունելների հորատանցումը կատարվել է

պայթեցումներով: Այս եղանակի առանձնահատկությունն այն է, որ ապահովում է բավական արագ առաջընթաց, սակայն հնարավոր չի լինում կարգավորել պայթեցման արդյունքները: Առաջանում են մանր ու մեծ փլուզումներ, որոնք ամրակապի հետևում մնում են որպես դատարկ խոռոչներ: Այդ խոռոչները պետք է լցնվեն ներարկումների նախնական փուլում 1:3 հարաբերությամբ ցեմենտային լուծույթով: Կառուցված հատվածներում թունելի նախնական լցումն լիարժեք իրականացված չէ, այնպես որ ամբողջ 1054 մետր թունելները պետք է նախնական լցնվեն ճնշման լցումով լիարժեք իրականացված չէ, այնպես որ ամբողջ 1054 մետր թունելները պետք է նախնական լցնվեն ճնշման տակ համոզվելու համար, որ ամրակապի հետևում առկա դատարկությունները լցնված են: Նշված ներարկումները պետք է կատարվեն գործող տեխնիկական պահանջներին (ТУ) համապատասխան: Ներարկումներից առաջ երկաթբետոնե տարրերի, ինչպես նաև թուջե վահանակների միացման կարերը պետք է կարանախցվեն (чеканка швов), իսկ տարբեր տրամագծով թունելների ճակատները պետք է բետոնապատվեն և փակվեն մետաղական շերտով ոչ պակաս քան 6 միլիմետր հաստությամբ: Հիդրոմեկուսացման աշխատանքները կատարելուց առաջ թունելները պետք է լվացվեն և մաքրվեն շինարարական աղբի մնացորդներից, իսկ նախատեսված աշխատանքների ավարտից հետո նույնպես պետք է կատարվեն շինաղբից մաքրման և լվացման աշխատանքներ մոնտաժային աշխատանքների նախապատրաստման համար:

Գծի վեռնի շինություն և հալկային ռելս: Կառուցվող տեղամասի գծի երկարությունը պետք է ընտրվի

կայարանի տեղադրման վայրից կախված՝ հաշվի առնելով հետ կայարանային շրջադարձային և անվտանգության փակուղիները: Գիծը պետք է նախատեսել և մոնտաժել P-50 առաջին կարգի բարձրորակ ռելսերով հիմնականում փայտակոճերի և չորսուների վրա 1520 միլիմետր ռելսամեջով գծերի պայմաններին համապատասխան: Սլաքային փոխարդիչները պետք է լինեն 1/9 տեսակի: Գծի պարամետրերը պլանում և պրոֆիլում պետք է համապատասխանեն մետրոպոլիտեններում գծի նախագծման նորմերին և պահանջներին համապատասխան՝ կարևորելով վերտիկալ և պլանում կորերը և ուղիղ տեղամասերը, կորության շառավղերով պայմանավորված պահանջները և նրանց լծորդման առանձնահատկությունները: Պետք է նախատեսել և տեղադրել գծային ռելսերներ կոր և ուղիղ տեղամասերի նորմաներին համապատասխան: Սլաքային փոխարդիչները, կայարանը և կամուրջը նախատեսել ուղեգծի միայն ուղիղ տեղամասերում: Որպես գծի ստորին շինություն ընդունվում է թունելների հարթ վաքը, իսկ կլոր վաքերի դեպքում հավասարեցնող մոնոլիտ բետոնը: Գծի բաց հատվածում ընդունել կամ երկաթբետոնե հիմքը կամ հողաշերտը СНИП 32-01 նորմատիվով պահանջվող առաջին կարգի երկաթգծերի համար, անհրաժեշտության դեպքում նախատեսել հողաշերտի ամրացում (уплотнение) և ջրահեռացման միջոցառումներ: Գիծը մոնտաժելուց հետո պետք է բերվի նախագծային նիշերի այնուհետև բետոնավորվի սահմանված կարգով՝ ապահովելով ջրահեռացում: Ուղեգծում նախատեսել ռելսային թելեր (ռելս) պատրաստել և մոնտաժել դրանք բազայում կամ տեղում նորմատիվ փաստաթղթերի պահանջներին և նախագծին համապատասխան երկարություններով, կամուրջների և որոշ կորության շառավղիների վրա նախատեսել պահպանիչ և աշխատող զուգառելսեր (կոստր ռելս):

Հայակային ռելսի, նրա թելերի չափերի, պատրաստման թունելներում և բաց տարածքներում տեղադրման պահանջները ներառված են նորմատիվային փաստաթղթերում:

Էլեկտրամատակարարում : Էլեկտրամատակարարումը պետք է կատարվի քաղաքային ենթակայանների երկու անկախ սնման աղբյուրներից: Էլեկտրամատակարարման հաշվարկը կատարել 6 ԿՎ նորմալ, աշխատանքային և վթարային էլեկտրամատակարարման համար: Մետրոպոլիտենում ուժային սարքավորումների, լուսավորության, կոնտակային ցանցի հաստատուն և փոփոխական հոսանքների մատակարարումը նախատեսել մետրոպոլիտենում նախագծման կորմերին համապատասխան: Յուրաքանչյուր կառուցվող կայարանի համար կառուցել մեկ ենթակայան: Ստորգետնյա կառույցներում (ընթացքային թունելներ, կայարաններ, մեքենասարահներ, ինչպես նաև ուղեգծի բաց հատվածում նախատեսել հիմնական և վթարային լուսավորություններ՝ ապահովելով պահանջվող լուսավորության աստիճանը յուրաքանչյուր օբյեկտի համար ըստ գործող նորմերի համապատասխան չափերի): Կայարաններում և թունելներում տեղադրվող սարքավորումները նախատեսել ըստ տիպային լուծումների: Հողանցման կոնտուրը և օժԿ-ները տեղադրել հաշվարկային հիմնավորմամբ: Ենթակայանում նախատեսել հեռուստամեխանիկայի և ավտոմատիկայի համապատասխան սարքավորումներ:

Օդափոխություն : Մետրոպոլիտենի կառույցներ համար պետք է նախատեսել օդափոխման, ներածման և արտամղման համակարգեր, ինչպես թունելների գլխավոր, այնպես էլ տեղային օդափոխումների նպատակով: Ստորգետնյա օդափոխման համակարգում ներառվում են նաև կայարանների, էսկալատորային թունելների, մեքենասարահների, ենթակայանների և այլ կառույցների, որոնք նախատեսված են նախագծով: Օդափոխման նախագծման և հաշվարկման համար օգտվել СНиП 32-02 և СНиП 41-01 նորմատիվային փաստաթղթերից: Ակտի ունենալով, որ թիվ 24 հորանը չէր կարող ծառայել գլխավոր օդափոխման համակարգին և հատկապես ուղեգծի բաց հատվածի և կամուրջի փակելուց հետո, անհրաժեշտ է ունենալ հզոր օդափոխման կազմակերպման համար նոր նախագծային լուծումներ:

Ջեռմամատակարարում – Կայարանների, նախասրահների և այլ արտադրական և ծառայողական բյուրների կառույցներում նախատեսել տեղային ջրամատակարարում օգտվելով հիմնականում էլեկտրաէներգիայից համեմատաբար հրդեհաանվտանգ (փակ) միջոցներով:

Ջրամատակարարում – Մետրոպոլիտենը համարվում է առաջին կարգի սպառող և պետք է ունենա երկու անկախ 24 ժամ մշտական ջրամատակարարման աղբյուրներ: Ջրամատակարարումը կախված օգտագործման բնույթից կարող է միաժամանակ օգտագործվել խմելու և տեխնիկական ջրեր՝ համապատասխան հաշվարկներով հիմնավորված, էլեկտրական անձնակազմի քանակից և հակահրդեհային միջոցառումների ծավալներից՝ օգտվելով СНиП 2.04 և СНиП 2.04-01-85 նորմատիվային փաստաթղթերից: Մետրոպոլիտենի ստորգետնյա կառույցները պետք է ջրամատակարարել միացյալ համակարգով (կայարաններ, նախասրահներ, սանհանգույցներ, օդափոխման խցեր և այլն):

Ջրահեռացում – Ստորգետնյա կայարաններում պետք է նախատեսել ջրահեռացման համակարգեր՝ կառույցներից կենտրոնացնելով հավաքվող ջրերը տեղային և գլխավոր պոմպակայաններ, որտեղից էլ պետք է արտամղվեն մակերևույթ, այնուհետև ըստ նախագծի պետք է հեռացվեն համապատասխան կոյուղագծերով: Ստորգետնյա կառույցների ջրահեռացման խողովակները պետք է լինեն 3% թեքությամբ և ոչ պակաս 100 միլիմետր տրամագծով, իսկ իրողության փոխման անկյունը՝ 120 աստիճանով: Մնացած բոլոր միջոցառումները իրականացնել էլեկտրական կոնկրետ իրավիճակից՝ սանիտարական նորմերի պահանջներին համապատասխան:

Կոյուղի – Վերգետնյա կայարանների և նախասրահների տնտեսական կոյուղիները կառուցվելու են քաղաքային կառույցների հետ համաձայնեցված տեխնիկական պայմաններով, որոնք տրվում են հաշվարկային հնարավոր ելքերին համապատասխան: Ստորգետնյա կայարաններից և կառույցներից կոյուղաջրերը 10% թեքությամբ խողովակաշարերով ներհոսում և կուտակվում են կոյուղափոսերի մեջ, որտեղից պոմպակայանների միջոցով արտամղվում են մակերևույթ:

Կապ և ազդանշանային համակարգ –

Ազդանշան

Մետրոպոլիտենի գծի երկարացումը, գործող «Բարեկամություն» կայարանից մինչև նախատեսվող կայարան նախագծում անհրաժեշտ է նախատեսել ազդանշանման, կենտրոնացման և բյուրավորման համակարգ (ԱԿԲ): «Բարեկամություն» կայարանից մինչև նախատեսվող կայարան վազորդում (перехон) հարկավոր է նախատեսել ինքնաուղեփակում (АВ) գնացքների 24 զույգ հաշվարկով և «Արագության ավտոմատ կարգավորման» (АРС) համակարգ 40 զույգ գնացքների հաշվարկով:

Կայարանում անհրաժեշտ է նախատեսել «Երթուղառելսային կենտրոնացում (МРЦ), գնացքների շրջադարձ՝ սլաքային փոխադրիչի տեղադրմամբ՝ 1/9 մակնիշի ուղեփոխիչով: Անհրաժեշտ է նաև նախատեսել անվտանգության (улавливаюший) փակուղի մոտ 150մ երկարությամբ:

Գործող գծի երկարացման համար պետք է «Բարեկամություն» կայարանում կատարել «Էլեկտրական կենտրոնացման» (ЭЦ), ինքնաուղեփակման (АВ) և «Արագության ավտոմատ կարգավորման» (АРС) կենտրոնացման» (ЭЦ), ինքնաուղեփակման (АВ) և «Արագության ավտոմատ կարգավորման» (АРС) համակարգերի սարքավորումների մոնտաժային փոփոխություններ, կայարանի ռելեային սենյակում նոր սարքավորումների տեղադրում, հին սարքավորումների փոփոխությամբ (перестройство):

Անհրաժեշտ է նաև կատարել նոր սարքավորումների տեղադրման և մոնտաժային աշխատանքներ «Կարգավարական կենտրոնացման» (ДЦ) համակարգում: Նախատեսվող կայարանում պետք է նաև նախատեսել ԱԿԲ-ի ռելեային և հերթապահի սենյակներ:

Կապ

Կառուցվող կայարանում պետք է նախատեսել մետրոպոլիտենում ներկայումս գործող կապի բոլոր տեսակները և համակարգերը:

- Կարգավարական (գնացքային, էներգո, էլեկտրամեխանիկական)

- Գնացքային ռադիոկապ
- Վարչա-տնտեսական
- Բարձրախոսային
- Հրդեհային ազդարարման

Այս բոլոր նախատեսվող կապի համակարգերը պետք է լինեն ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած՝ հնարավորություն ունենալով առկա հին համակարգերի տեխնիկական պայմաններին համապատասխանեցման:

Քանի որ ներկայումս գործող կապի բոլոր տեսակների սարքավորումները բարոյապես և ֆիզիկապես մաշված են, վաղուց արդեն իսկ հանված են արտադրությունից, հնարավոր չէ ձեռք բերել և մոնտաժել, այդ իսկ պատճառով պետք է նախատեսել նոր ժամանակակից համակարգեր:

Կառուցվող կայարանում պետք է «Բարեկամություն» կայարանից շարունակել օդակաձև մագիստրալ օպտոմանրաթելային ցանցը, տեսահսկման, ուղեվարձի, միասնական ժամանակի համակարգերի և WI-FI ցանցի կցումը գործող համակարգերին:

Կայարան: Ինչպես նշվեց վերևում, այս փուլը մետրոպոլիտենի գործող, «Բարեկամություն» կայարանից դեպի Աջափնյակ թաղամաս, սահմանափակվելու է մեկ կայարանային համալիրով և նրան հարակից շրջադարձման և անվտանգության ապահովման լրացուցիչ թունելների կառուցումով:

Կայարանի այս կամ այն տեղի ընտրությունը պետք է ֆինանսական և տեխնիկական հիմնավորումներ ունենա նախագետ կատարված լուրջ ուսումնասիրությունների, ինչպես նաև երկրաբանական և հիդրոերկրաբանական հետազոտությունների արդյունքների վրա հիմնված:

Ֆինանսական հիմնավորումը գնային առաջարկ է, որը պետք է ունենա մեր հանրապետության պայմաններին համապատասխան հաշվարկային հիմնավորում, ինչպես նաև նմանատիպ կայարանների կառուցման միջազգային փորձից վերցված, ներկայումս շրջանառվող մեկ կիրմետր մետրոպոլիտենի կառուցման արժեքի չափերի տեղայնացում:

Տեխնիկական հիմնավորումը առաջնահերթ պետք է հիմնավորվի ներկայիս իրավիճակում հնարավոր ուղևորահոսքի հաշվարկներով, ինչպես նաև վերգետնյա հանրային տրանսպորտի (տարածքի հետ առնչվող) երթուղիների փոփոխության արդյունքում ակնկալվող ուղևորահոսքի ավելացման հիմնավոր հաշվարկներով: Կայարանի տեղի ընտրությունը պետք է կատարվի նաև աջափնյա տարածքում նախատեսված կառուցապատման հետ համահունչ: Ուղևորների կայարանից օգտվելու (մուտք-ելք) գործընթացը պետք է լինի առավելապես դյուրին. բնակչության տարբեր խմբերի, ինչպես նաև հաշմանդամների մետրոպոլիտենից օգտվելու համար նախատեսել նախագծային լուծումներ, հաշվարկելով վերին և ներքին բազային հարթությունների նիշերի տարբերությունը, անհրաժեշտության դեպքում նախատեսել շարժասանդուղիներ: Նախագծել արտակարգ իրավիճակների դեպքում հրդեհային, շտապ օգնության, վթարների վերացման համար նախատեսված տրանսպորտային միջոցների դեպքում մոտեցման և գործողության հնարավորություն: Նախատեսել մարզերից, այլ թաղամասերից ելող մեքենաների համար կայանատեղեր, ինչպես նաև հանրային տրանսպորտի երթուղիների փոփոխման արդյունքում վերջին կանգառի ձևավորման հնարավորություններ: Այս փուլում կայարանը պետք է նախագծվի որպես, ոչ վերջին կայարան՝ հեռանկարում ևս մեկ կայարանի կառուցման հնարավորությամբ: Երկրորդ կայարանի կառուցման անհրաժեշտությունը հիմնավորվում է հետևյալ տրամաբանությամբ.

- Մեկ կայարան կառուցելու դեպքում թաղամասը լիարժեք չի սպասարկվի և արդյունքում ուղևորների մի ստվար զանգված դուրս կմնա սպասարկման ոլորտից, բացի այդ անհրաժեշտություն կառաջանա կառուցել միջանկյալ շրջադարձային փակուղի:

- Միաժամանակ երկու կայարան կառուցելու դեպքում շրջադարձային փակուղին կկառուցվի երկրորդ կայարանից հետո, նկատի ունենալով, որ այն իր աշխատատարության ծավալով զգալիորեն կգերազանի ստանդարտ կայարանի չափերը, կազմելով ընդհանուր ծախսերի 25-30%: Ուղեգծի վերջում տեղադրելու պարագայում հնարավոր է դառնում խուսափել ավելորդ ծախսերից, ռացիոնալ կերպով օգտագործելով միջոցները:

Կամուրջ – Պետք է նախագծել «Մետրոմոստ» տիպի կամուրջ, որոնք հաջողությամբ կառուցվել և շահագործվում են ԱՊՀ երկրների մետրոպոլիտեններում: Անհրաժեշտ կլինի միայն գործող նախագծերից որևէ մեկը տեղայնացնել Երևանի քաղաքի պայմաններին համապատասխան: Անկախ կամուրջի ձևից, թռիչքների քանակից, հիմքերի տեսակներից, ձևերից և նրա կառուցման նպատակից, հաշվի առնելով Աջափնյակ թաղամասի փոփոխական և անկայուն երկրաբանությունը՝ պետք է կատարվեն լուրջ և խորը երկրաբանական և հիդրոերկրաբանական հետազոտություններ կամուրջի հիմքերը հուսալիորեն տեղադրելու համար: Երկաթուղու կամուրջի վրա երկաթգծերը տեղադրվում են հատուկ միջոցառումներով, որոնք տեղ են գտել հիմնավորող կառուցողներում և բխում են անվտանգության կանոններից և անհրաժեշտությունից: Կամուրջը պետք է փաստաթղթերում և բխում են անվտանգության կանոններից և անհրաժեշտությունից: Կամուրջը պետք է նախատեսել ծածկված, հաշվի առնելով նրա՝ մոտավորապես 150 մետր երկարությունը, դիսամիկ բեռների ազդեցությունը, գնացքի արգելակման հետևանքով առաջացող վիբրացիոն ուժերի ազդեցությունը, ծածկման կոնստրուկցիաների առանձնահատկությունները և հաշվարկները իրականացնել այս պայմաններին համապատասխան: Կամուրջի վրա նախատեսել նաև նրա ընթացիկ սպասարկումների և ստուգումներ կատարելու հնարավորություններ, ինչպես նաև փակ սրահի լվացման և ջրահեռացման միջոցառումներ: Կամուրջի հաշվարկման ժամանակ նկատի ունենալ հեռանկարում մինչև 5 վագոնով շարժակազմերի կամուրջի վրայով երկկողմանի երթևեկության հավանականությունը:

Բաց տարածք – Կառուցված ընթացքային թունելները վերջանում են կիրճում: Նրա ճակատամուտքից մինչև նախատեսվող կամուրջի առաջին հիմքը 82 մետր է: Ուղեգծի այս հատվածը վերգետնյա է, անկախ դրանից նա ևս պետք է փակվի ինչպես կամուրջը կամ առանձին նախագծով: Բաց հատվածի փակման անհրաժեշտությունը պայմանավորված է գնացքների երթևեկության առանձնահատկություններով, որը գնացքավարի մոտ կարող է առաջացնել երթևեկության արտանոթություններ մուտք և լույս հատվածների կարճ տարածության վրա:

գոտի մտնելով: Բացի այդ, ձմռան ամիսներին սառը և տաք գոտիների փոփոխության հատվածներում կարող է առաջանալ ռելսերի սառցակալում, որից կարող է բխել արգելակման գործընթացի ժամանակ գնացքի կառավարման խնդիրներ: Բացի այդ, բաց հատվածի ճակատամուտքը (рампа) պետք է ձևավորվի հզոր հեռապատուկ կիրճից հնարավոր քարաթափումների ժամանակ գնացքները և կառույցը վնասումներից ապահովելու համար: Երկաթգծերը այդ հատվածում նստվածքներից ապահովագրելու համար պետք է կատարել երկրաբանական հետազոտություններ և անհրաժեշտության դեպքում իրականացնել հողաշերտի ամրացման միջոցառումներ: Ինչպես նշվեց վերևում, թիվ 24 հորանը չի կարող ծառայել ոչ մետրոպոլիտենի ռեժիմում, և ոչ էլ մասնակցել այս փուլի շինարարությանը, հետևաբար կառուցված 1054 մետր թունելներում հիմնական աշխատանքներ կազմակերպելու համար պետք է մշակել շինարարության կազմակերպման նախագծեր (ПОО) :

Ընդհանուր պահանջներ

- Նախագծել լիարժեք մետրոպոլիտենի կայարան բոլոր ատրիբուտներով, հաշվարկային միջակայքերով, երկկողմանի կանոնավոր երթևեկությամբ:
- Արտակարգ իրավիճակներում բնակչության պատսպարման հնարավորությունն ապահովելու համար N24 հորանի մոտեցնող թունելներում, նրան հարակից տարածքներում, ինչպես նաև ընթացքային թունելներում քաղաքաշտպանության անավարտ օբյեկտներն ավարտին հասցնելու համար նախագծում նախատեսել անհրաժեշտ շինարարական-մոնտաժային աշխատանքների ծավալները, տեղադրվող սարքավորումների ցանկը և արժեքը, հիմնավորել նրանց համապատասխանությունը տվյալ տեղամասի համար, ներկայացնել կատարվող ծախսերի հաշվարկ:
Նախագծով նախատեսված նոր կայարանի կառուցման առաջարկվող տարբերակում նրա տեղադրման վայրին համապատասխան, ելնելով գործող նորմերի պահանջներից նախատեսել լրիվ ծավալներով քաղաքաշտպանության օբյեկտների շինարարությունը, սարքավորումների մոնտաժումը և գործարկումը:
Ընդհանուր նախագծի ամփոփ (сводная смета) նախահաշվում առանձին տողով ցույց տալ քաղաքաշտպանության օբյեկտների վրա նախատեսվող ծախսերի հանրագումարը:
- Ինչպես նշված է վերևում այս փուլում նախագծվող կայարանը չհամարել որպես վերջին կայարան, քանի որ Երևանում կառուցվող մետրոպոլիտենի զարգացման հեռանկարային պլաններում (սխեման կցվում է) նախատեսված է այդ ուղեգծով (трасса) շարունակել նոր կայարանների կառուցումը: Հետևաբար, նախագծերը հարկավոր է մշակել այնպես որ նրա անվտանգության պահանջների ապահովման և այլ օժանդակ կառույցները, որոնք կիրականացվեն այս փուլում, հնարավոր լինի առավելագույնս օգտագործել հաջորդ կայարանների նախագծման և կառուցման աշխատանքներում:
- Անկախ կայարանի տեսակից նախատեսվում և կայարանում նախատեսել շինարարական նորմերով նախատեսված բոլոր նորմատիվները և սանիտարահիգիենիկ պայմանների ապահովման պահանջները:
- Շրջակա միջավայրի պահպանման պահանջները. Հաշվարկել և նախագծով ապահովել աղմուկի և վիբրացիաների համար թույլատրելի նորմերի պահանջները:
- Մշակել թափառող հոսանքների դեմ պայքարող մեխանիզմներ և հնարավորինս ապահովել կոնստրուկցիաները կոռոզիաներից :
- Կոնստրուկցիաները անհրաժեշտության դեպքում ապահովել ագրեսիվ միջավայրի ազդեցությունից:
- Նախագծել անհրաժեշտ տեղերում ավտոմատ հրդեհաշիջման և ձայնային ազդարարման միջոցառումներ: Կառույցները և զետեղարանները (помещение) կահավորել՝ պահպանելով մետրոպոլիտենի հակահրդեհային նորմերի պահանջները:
- Մշակել արտակարգ իրավիճակներում անձնակազմի տարհանման կարգ և ուղիներ:
- Մշակել և առաջարկել աջ և ձախ ափերի շինարարության կազմակերպման նախագծեր, նախատեսել նաև տեխնիկական և պահպանող գոտիներ:
- Նախատեսել սարքավորումների և գնացքների աշխատանքի կենտրոնացված վերահսկման և ավտոմատ կառավարման համակարգեր:

ԾՐԱԳՐԻ ԱՇԴԵՑՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԸՆԿՆՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ, ԶՍՓԱԳՐՈՒՄ և ԳՆԱՀԱՏՈՒՄ

Պատվիրատուն խորհրդատուին է տրամադրում ծրագրի ազդեցության տակ ընկնող տարածքում առկա անշարժ գույքի և հողատարածքների կադաստրային տեղեկատվություն, որի հիման վրա՝ համաձայնեցնելով պատվիրատուի հետ, խորհրդատուն նախագծումը իրականացնում է հնարավորինս ընդգրկելով համայնքի և (կամ) պետության սեփականությունը հանդիսացող տարածքներ, իսկ անհնարիության դեպքում, իրականացնում է չափագրում և գնահատում, ինչպես նաև պատվիրատուին է ներկայացնում հողերի օտարման և տարաբնակեցման համապատասխան ծրագիր՝ այն հատվածների համար, որտեղ առկա են երրորդ անձանց իրավունքները:

I. Ընդհանուր տվյալներ

Ձ/Ձ	Կապիտալ շինարարության օբյեկտին ներկայացված պահանջների և տվյալների ցանկ	Պահանջների բովանդակությունը, դրանց օրենսդրական, նորմատիվ, իրավական և նորմատիվ-տեխնիկական հիմնավորումը
1.1	Հիմնարար շինարարության օբյեկտի անվանումը	Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանում մետրոպոլիտենի կայարանի շինարարություն
1.2	Ֆինանսավորման աղբյուր	
1.3	Պատվիրատու	Երևանի քաղաքապետարան
1.4	Շինարարության տեսակ	Նոր շինարարություն՝ վերակառուցման տարրերով
1.5	Նախագծման փուլակայանությունը	Նախագծային փաստաթղթեր
1.6	Օբյեկտի նպատակային նշանակությունը	<p>1. Երևան քաղաքի բնակչության տրանսպորտային սպասարկման բարելավում</p> <p>2. Հրազդան գետի կիրճով իրարից բաժանված Արաբկիր և Աջափնյակ վարչական շրջանների տրանսպորտային խնդրի հանգուցալուծում</p> <p>3. Դավթաշեն և Կիկյալ կամուրջների բեռնաթափումը քաղաքային տրանսպորտից</p>
1.7	Տեղեկություններ շինարարության մասին տեղանքի	
1.7.1	Գտնվելու վայրը	ք. Երևան, Արաբկիր և Աջափնյակ վարչական շրջաններ
1.7.2	Նախագծային սահմանափակումներ	Հարում է մետրոպոլիտենի գործող գծին: Լրացուցիչ սահմանափակումները ճշտվելու են նախագծման փուլում:
1.7.3	Առկա հողօգտագործողներ	Որոշվում և ճշտվում են նախագծման փուլում
1.8	Նախագծվող օբյեկտի պատկանելիությունը գծային կամ ոչ արտադրական նշանակության օբյեկտներին	Նախագծվող օբյեկտը պատկանում է գծային օբյեկտների շարքին, ներառյալ ոչ արտադրական նշանակության օբյեկտներ
1.9	Շինարարության առանձին փուլերի համար նախագծային փաստաթղթեր պատրաստելու հնարավորություն	Տարածքի շինարարությունը նախատեսվում է 1 փուլով
1.10	Նախագծային տարբերակներ անհրաժեշտություն մշակելու	Անհրաժեշտության դեպքում մշակել նախագծային լուծումների տարբերակներ՝ ելնելով առկա կառույցների դիրքից /վիճակից/:
1.11	Շինարարության ժամկետը	Սահմանվում է շինարարությունը կազմակերպելու նախագծով /ԾԿՆ/ և շինարարության ժամանակացույցով
1.12	Նախագծային փաստաթղթերի մշակմանը ներկայացվող պահանջներ	<p>Մշակել նախագծային փաստաթղթերն ըստ բաժինների կազմության և բովանդակության, նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքների մեկնարկի պահին գործող Հայաստանի Հանրապետության օրենսդրության նորմերին և պահանջներին համաձայն:</p> <p>Նախագծային փաստաթղթերը մշակելիս օգտագործել ՀՀ կամ ԵԱՏՄ տարածքում արտադրված սարքավորումներ, կյուբեր, մալուխահողորդիչ արտադրանք:</p> <p>Նախագծային փաստաթղթերը մշակելիս օգտագործել 81-717 / 81-717-5 տիպի շարժակազմ:</p>
1.13	Նախագծման ժամկետը և փուլերը	Աշխատանքների սկիզբը՝ սկսած պետական պայմանագիրը կնքելու պահից: Աշխատանքների ավարտը՝ համաձայն աշխատանքների կատարման օրացուցային պլանի:
1.14	Կապիտալ շինարարության օբյեկտի հիմնական տեխնիկատնտեսական բնութագիրը	<p>Տեղամասի ընդհանուր երկարությունը՝ մոտավորապես 1400 մետր, չիաշված /բացառելով/ նախագծվող կայարանի հետևում գտնվող լրացուցիչ թունելները:</p> <p>Վազուրդային թունելների երկարությունը՝ մոտավորապես 1054 մետր:</p> <p>Կայարանային համալիրների քանակը՝ 1</p>

		<p>Մետրոպոլիտենի գծի վերգետնյա հատվածի երկարությունը՝ մոտավորապես 82 մետր</p> <p>Գծահատվածի թողունակությունը՝ 20 զույգ գնացք մեկ ժամում</p> <p>Երթևեկության առավելագույն չափը՝ 40 զույգ գնացք մեկ ժամում</p> <p>Վագոնների քանակը մեկ շարժակազմում՝ 5 հատ</p> <p>Գծահատվածի հիմնական տեխնիկատնտեսա-կան բնութագրերը պարզելու նախագծման աշխատանքները կատարելիս:</p> <p>Մետրոպոլիտենի գծահատվածի կապիտալ շինարարության օբյեկտների տեխնիկատնտեսական ցուցանիշները արտացոլելու նախագծային փաստաթղթերում՝ համաձայն Երևանի մետրոպոլիտենի անշարժ գույքի օբյեկտների ձևավորման սկզբունքների:</p>
1. 15	Կապիտալ շինարարության օբյեկտի շահագործման հաշվարկային ժամանակաշրջան	100 տարի
1. 16	Ցուցումներ տիպային նախագծային փաստաթղթերի և /կամ/ վերափոխված տիպային նախագծային փաստաթղթերի կիրառման վերաբերյալ	Շենքերը և շինությունները նախագծելիս հնարավորինս օգտագործել տիպային կամ կրկնակի կիրառվող նախագծեր:
1. 17	Ձեռնարկության գործելակարգը	Շուրջօրյա, անդադար
II. Ելակետային տվյալներ		
2. 1	Պատվիրատուի կողմից մինչև նախագծումը սկսելը ներկայացված տվյալներ	<ul style="list-style-type: none"> - Շինարարության տարածքում տեղակայված անշարժ գույքի և հողատարածքների կադաստրային տվյալներ - Գործող գծամասի կատարողական փաստաթղթեր, որին հարելու է շինարարության գծամասը /Էլեկտրոնային տարբերակով, pdf, dwg ձևաչափով/ - Նախագծվող գծամասի նախորդ ժամանակահատվածների նախագծային, աշխատանքային փաստաթղթերը /Էլեկտրոնային տարբերակով, pdf, dwg ձևաչափով/ - Ճարտարագետներկրաբանական, ճարտարագետաշրաքանական, ճարտարագետաէկոլոգիական հետազոտությունների արխիվային կյուրեր - Նախագծային լուծումների, քաղաքաշինական հիմնավորումների կյուրեր - Գեոդեզիական ենթահիմք-ճարտարագետա-տեղագրական հատակագիծ Մ1:500՝ կարմիր գծերով և ստորգետնյա հաղորդակցման ուղիներով /Էլեկտրոնային տարբերակով, pdf, dwg ձևաչափով/ - տարվա տարբեր ժամանակաշրջանների կլիմայական չափանիշները - մետրոպոլիտենի գործող գծի թունելների օդափոխության գծապատկերը - մետրոպոլիտենի գործող գծի թունելային ջրահեռացման գծապատկերը - Երևան քաղաքի մետրոպոլիտենում շահագործման դրական փորձ ունեցող ճարտարագիտական սարքավորումների և համակարգերի ցանկ - Երևան քաղաքի մետրոպոլիտենում շահագործման դրական փորձ ունեցող հրդեհային ավտոմատիկայի, անվտանգության համակարգերի և մուտքի վերահսկողության սարքավորումների և մալուխային արտադրանքի ցանկ - առկա շինարարական հրապարակների վերաբերյալ տեղեկություններ /հատակագծեր/ - №№ 24, 25, 26, 29 ճյուղերի կատարողական փաստաթղթերը - օգտագործվող շինարարական սարքավորումների ցանկ /առկայության դեպքում/ - Էլեկտրադեպոյի տարողունակությունը: <p>Նախագծումը սկսելուց առաջ Պատվիրատուն Կապալառուին է ուղարկում ՀՀ գործող նորմատիվ բազան /Էլեկտրոնային տարբերակով՝ pdf ձևաչափով/՝ համապատասխան ուղեկցող նամակի հետ միասին:</p>
2. 2	Նախագծման ընթացքում	- գործող ճարտարագիտական ցանցերի վերակառուցման և

	<p>կազմակերպությանը տրամադրված նախնական տվյալներ:</p>	<p>պահանջներն ու տեխնիկական պայմանները</p> <ul style="list-style-type: none"> - շինարարական հրապարակը ճարտարագիտական հաղորդակցման ուղիներին ժամանակավոր միացնելու տեխնիկական պայմանները - մշտական համակարգերի /էլեկտրամա-տակարարում, ջրամատակարարում, ջրահեռացում, ջերմամատակարարում և այլն/ միացման համար պաշարներ մատակարարող կազմակերպությունների տեխնիկական պայմանները - տվյալներ կատարվող աշխատանքների սահմաններում հայտնված տարածքների սեփականատերերի վերաբերյալ - քանդվող շինությունների և բռնագրաված տարածքների փոխհատուցման գումարի գնահատում - տեղեկանք գործող և հաշվարկային տրանսպորտային ու հետիոտնային հոսքերի երթևեկության ինտենսիվության վերաբերյալ - տեղեկություններ գործող մետրոպոլիտենի ընդհանուր գծի ուղևորահոսքի վերաբերյալ - նախագծման շրջանի համար անհրաժեշտ կլիմայական բնութագրերը, վնասակար նյութերի խորքային խտությունը - նախագծմանախահաշվային փաստաթղթերի մշակման համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր և տեղեկանքներ:
<p>2. 3</p>	<p>Նորմավորման ելակետային տվյալներ</p>	<p>Նախագծելիս՝ ՀՀ նորմատիվ իրավական ակտերի անբավարար լինելու դեպքում, ղեկավարվել ՌԴ գործող նորմերով, կանոններով և պետական ստանդարտներով, այդ թվում.</p> <ol style="list-style-type: none"> 1. ГОСТ Р 21.1101-2013 «Շինարարության համար նախատեսված նախագծային փաստաթղթերի համակարգ: Նախագծային և աշխատանքային փաստաթղթերին ներկայացվող հիմնական պահանջները»: 2. СП 120.13330.2012 «Մետրոպոլիտեններ» Արդիականացված հրատարակություն СНиП 32-02-2003. 3. ГОСТ 23961-80 (Մետրոպոլիտեններ) «Շինությունների մերձակայության, սարքավորումների և շարժակազմի եզրաչափք» 4. ГОСТ 33966.1-2016 (EN 115-1:2008+A1:2010) «Շարժասանդուղք և ուղևորատար փոխակրիչ: Սարքավորումների և տեղակայման անվտանգության պահանջները»: 5. Մաքսային միության «Վերելակների անվտանգությունը տեխնիկական կանոնակարգ TP TC 011/2011 6. СП 48.13330.2011, СНиП 12-01-2004 «Շինարարության կազմակերպումը» 7. СП 20.13330.2011, СНиП 2.01.07-85* «Բեռնվածություն և ազդեցություն» 8. СП 22.13330.2011, СНиП 2.02.01-83* «Շենքերի և շինությունների հիմնատակեր» 9. СП 116.13330.2012, СНиП 22-02-2003 «Շենքերի և շինությունների տարածքների ճարտարագիտական պաշտպանությունը վտանգավոր երկրաբանական գործընթացներից: Նախագրծման հիմնական դրույթները» 10. СП 45.13330.2012., 45.2012 СНиП 3.02.01-87 «Հողային կառույցներ: Հիմքեր և հիմնատակեր» 11. СП 70.13330.2012, СНиП 3.03.01-87 «Կրող և պատող կառուցատարրեր» 12. СНиП 12-03-2001 «Աշխատանքի անվտանգությունը շինարարության ժամանակ: Մաս 1. Ընդհանուր պահանջներ» արդիականացված հրատարակություն առ 01.02.2017 13. СП 91.13330.2012, СНиП 12-04-2002 «Աշխատանքի անվտանգությունը շինարարության ժամանակ: Մաս 2. Շինարարական արտադրություն» 14. СНиП 3.02.03-84 «Ստորգետնյա հանքափորվածք» 15. СП 47.13330.2016 «Շինարարության ճարտարագիտական հետազոտություններ» 16. СП 11-102-97 «Շինարարության ճարտարագիտա-Էկոլոգիական հետազոտություններ» 17. СП 11-103-97 «Շինարարության ճարտարագիտա-հիդրոտեխնիկական հետազոտություններ» 18. СП 11-105-97 «Շինարարության ճարտարագիտա-

III. Նախագծահետազոտական աշխատանքների ծավալը և կազմը

<p>3. 1</p>	<p>Ճարտարագիտական հետազոտություններ /տեխնիկական հաշվետվության կատարումով/</p>	<p>իրականացնել համաձայն ճարտարագիտական հետազոտությունների կատարման տեխնիկական առաջադրանքի և ճարտարագիտական հետազոտությունների Ծրագրի, այդ թվում.</p> <ul style="list-style-type: none"> - ճարտարագիտագեոդեզիական հետազոտություններ - ճարտարագիտաերկրաբանական հետազոտություններ /այդ թվում, անհրաժեշտության դեպքում, ճարտարագիտա-գեոտեխնիկական հետազոտություններ/. հաշվի առնել նախկինում կատարված ճարտարագիտաերկրաբանական հետազոտությունները, իրականացնել լրացուցիչ ճարտարագիտաերկրաբանական հետազոտություններ - ճարտարագիտափոխաբանական հետազոտություններ - ճարտարագիտաէկոլոգիական հետազոտություններ, ներառյալ գրունտերի լաբորատոր էկոլոգիական եզրակացությունը:
<p>3. 2</p>	<p>Մետրոպոլիտենի շինությունների նախկինում կառուցված և չշահագործված կառուցատարրերի տեխնիկական վիճակի ուսում-նասիրություն /տեխնիկական հաշվետվության կատարումով/</p>	<p>իրականացնել մետրոպոլիտենի մշտական և ժամանակավոր շինությունների նախկինում կառուցված և չշահագործված կառուցատարրերի /թունելային հատված/ տեխնիկական վիճակի ուսումնասիրություն՝ թունելների երեսարկման տարածության և գրունտային զանգվածի գեոֆիզիկական /սեսմոակոստիկ/ հետազոտության և գեոդեզիական մարկշեյդերական աշխատանքների կատարմամբ.</p> <ul style="list-style-type: none"> - կառուցատարրերի, դրանց մասնիկների և հանգույցների անհրաժեշտ երկրաչափական պարամետրերի չափագրում - թունելների վնասվածքների և թերությունների գաբարիտային չափերի պարամետրերի գործիքային սահմանում - հիմնական կողմ կառուցատարրերի և դրանց մասնիկների կյուբերի փաստացի ամրապինդ բնութագրերի սահմանում /վերահսկողության չքայքայող մեթոդներով/ - թունելի երեսարկման տարածության վիճակի գեոֆիզիկական ուսումնասիրություն - կառուցատարրերում վնասվածքների և թերությունների առաջացման պատճառների վերլուծություն - հետազոտվող կառուցատարրերի կողմից ընդունելի իրական շահագործման բեռնվածության և ներգործության սահմանում հաշվի առնելով գրունտային հիմնատակի ազդեցությունը - առանձին կառուցատարրերի և շինությունների հաշվարկային հատակագծերի մշակում - շահագործման բեռնվածությունն իր վրա ընդունող կառուցատարրերի հաշվարկային ճիգերի սահմանում - կառուցատարրերի կրողունակության գնահատումը ըստ վերստուգիչ հաշվարկների արդյունքների վերլուծության և հետազոտության - տեխնիկական հաշվետվության պատրաստում, որտեղ պետք է ապարունակի ուսումնասիրության եզրակացությունները և առաջարկվող միջոցառումները: <p>Հաշվետվությունը պետք է պարունակի տեղեկատվություն, որը բավարար է կառուցատարրերի վերականգնման կամ ամրացման նախագծի մշակման, վերանորոգման և վերականգնման աշխատանքներն իրականացնելու, օբյեկտը վերակառուցելու կամ հիմնանորոգելու համար:</p> <p>Փորվածքների ուսումնասիրությունը իրականացնել հետազոտվող հատվածի շինարարության համար անհրաժեշտ ծավալով:</p>
<p>3. 3</p>	<p>Ուղևորահոսքի հաշվարկ</p>	<p>Տրամադրել տեղեկատվություն նախատեսվող ուղևորահոսքերի վերաբերյալ՝ հաշվի առնելով քաղաքաշինության ներկա վիճակը և վերգետնյա հասարակական տրանսպորտի երթուղիների ակնկալվող փոփոխությունը այն շրջաններում, որտեղ տեղակայվելու է մետրոպոլիտենի նախագծվող կայարանը և ընդհանուր առմամբ մետրոպոլիտենի ողջ երկայնքով:</p> <p>Նախագծային փաստաթղթերը մշակելիս օգտագործել նախորդ ժամանակաշրջանների կյուբերը:</p>
<p>3. 4</p>	<p>«Առկա կառույցների վրա շինարարության գործընթացի ազդեցության հաշվարկային և անվտանգության» տեխնիկական</p>	<p>Աշխատանքների վերջնական ծավալը որոշվում է շինարարության և շահագործման ազդեցության գոտին նախապատրաստելուց հետո: Կատարել (ըստ անհրաժեշտության).</p> <ul style="list-style-type: none"> - շենտեռի և շինությունների կառուցատարրերի վիճակի և

		<p>Նախապատրաստմամբ և տարածքի բարեկարգմամբ): Նախապատրաստել:</p> <ul style="list-style-type: none"> - գրունտային զանգվածի լարման հետևանքով ձևախախտված վիճակի կանխատեսվող փոփոխության և շինարարության ազդեցության գոտում շինությունների նստվածքի հաշվարկային հիմնավորումները՝ ըստ յուրաքանչյուր շինության: - գրունտային ջրերի մակարդակի /ԳԶՄ/ փոփոխության հետևանքով շինությունների նստվածքի հաշվարկային հիմնավորումները (անհրաժեշտության դեպքում կատարել հիդրոերկրաբանական մոդելավորում) - շինարարության անվտանգության բարելավման առաջարկներ - լրացուցիչ ճարտարագիտական տեղագրական ծրագրեր:
3. 5	Առկա շինությունների մոնիտորինգի ծրագրի և կառույցների ամրապնդման նախագծի մշակում՝ տեխնիկական հաշվետվության պատրաստմամբ:	<p>Մշակել մոնիտորինգի ծրագիր՝ մետրոպոլիտենի մշտական շահագործման մեջ գտնվող և չշահագործվող առկա շինությունների, ինչպես նաև շինարարության ազդեցության գոտում հայտնված շրջակա կառույցների համար՝ տեխնիկական հաշվետվության կատարմամբ:</p>
3. 6	Մետրոյի շարժակազմի երթևեկությունից ակնկալվող աղմուկի և թրթռանքի գնահատում:	<p>Գնահատել վազուրդային թունելների հատվածներում, մետրոկամրջի վրայով, վերգետնյա գծահատվածում, կայարանի սահմաններում, սլաքային փոխադրիչի տեղադրման հատվածներում մետրոպոլիտենի շարժակազմի երթևեկության հետևանքով առաջացած վերգետնյա շենքերի և շինությունների թրթռումների, շինարարական տարածքում և շենքերի սենյակներում աղմուկի մեծությունը: Անհրաժեշտության դեպքում մշակել միջոցառումներ՝ շրջակա շինությունների և տնամերձ տարածքների սանիտարական նորմերի կատարումն ապահովելու համար:</p>
3. 7	Նախագծային փաստաթղթերի կառուցվածքին ներկայացվող պահանջներ	
3. 7. 1	Բաժին «Պարզաբանում»	<p>Նախագծային փաստաթղթերի բովանդակությունում ներկայացնել «Պարզաբանում» Բաժինը, որն իր մեջ պետք է ներառի.</p> <ul style="list-style-type: none"> - տեղեկություններ շրջանի կլիմայական, աշխարհագրական և ճարտարագիտա-երկրաբանական բնութագրերի մասին - շինարարության տարածքում գծային օբյեկտի երթևեկության ուղիների տարբերակների բնութագրում, ճանապարհի ընտրության հիմնավորում - նախագծվող օբյեկտի տեխնիկատնտեսական բնութագիրը (տեսակը, երկարությունը, նախագծային հզորությունը, թողունակությունը, բեռնալարվածությունը, երթևեկության ինտենսիվությունը, տվյալներ գծային օբյեկտի հիմնական տեխնոլոգիական գործառույթների վերաբերյալ, երկայնական պրոֆիլի և հատկացման գոտու հիմնական պարամետրեր) - տեղեկություններ ժամանակավոր /շինարարության ժամանակահատվածի/ կամ մշտական օգտագործման նպատակով բռնագրավող հողատարածքների վերաբերյալ - տեղեկություններ օբյեկտի տեղակայման հողակտորների տեսակի վերաբերյալ, տեղեկություններ հողատարածքների սեփականատերերի վնասները փոխհատուցելու համար պահանջվող միջոցների չափի վերաբերյալ. դրանք մշտական կամ ժամանակավոր հիմունքներով օգտագործման նպատակով բռնագրավելու դեպքում, տեղեկություններ նախագծում օգտագործված գյուտերի, իրականացված պատենտային հետազոտությունների արդյունքների մասին - տեղեկություններ նախապատրաստված և համաձայնեցված հատուկ տեխնիկական պայմանների առկայության վերաբերյալ - տեղեկություններ շենքերի և շինությունների քանդման, բնակչության վերաբնակեցման, ճարտարագիտատեխնիկական ապահովման ցանցերի տեղափոխման հետ կապված ենթադրյալ ծախսերի վերաբերյալ - գծային օբյեկտի հուսալիությունն ապահովող հիմնական նախագծային լուծումների նկարագրությունը, շինարարության հերթականությունը, նշմարվող փուլերը, շահագործման հանձնելու նախատեսվող ժամկետները և այլն:

	<p>Նախագիծ»</p>	<p>գոտու Նախագիծ» Բաժինը, որն իր մեջ պետք է ներառի.</p> <ul style="list-style-type: none"> - գծային օբյեկտի ճանապարհի բնութագիրը (տեղանքի ռեյեֆի, կլիմայական և ճարտարագիտակրթականական պայմանների, վտանգավոր բնական գործընթացների, բուսածածկի, բնական և արհեստական արգելքների, գործող, վերակառուցվող, Նախագծվող, քանդման ենթակա շենքերի և շինությունների նկարագրությունը) - գծային օբյեկտի տեղակայման համար տրամադրված հողատարածքի չափի հաշվարկը - արհեստական շինությունների, հատումների, սահմանակցությունների ցանկը՝ ներառյալ դրանց բնութագիրը, վերակառուցման ենթակա ճարտարագիտական հաղորդակցության ուղիների ցանկը - ճանապարհի ռեյեֆը կազմակերպելու լուծումների և տարածքի ճարտարագիտական նախապատրաստման նկարագրությունը - տեղեկություններ ոլորանների անկյունների և շառավիղների, ուղիղ և կոր հատվածների երկարության, երկայնական և լայնական թեքությունների, հաղթահարվող բարձրությունների վերաբերյալ գրաֆիկական մասում. - տեղագրական քարտեզ-հատակագիծը՝ վարչատարածքային կազմավորման սահմանների նշագրմամբ - ճանապարհի երկայնական պրոֆիլը՝ ճարտարագիտակրթական կտրվածքով, ուղեհատվածների, ճարտարագիտատեխնիկական ապահովման ցանցերի ճանապարհների, հատվող հաղորդակցության ուղիների նշագրմամբ - ճանապարհի հատակագիծը՝ կապի օղային գծերի հատվածների /ներառյալ հենասյունների տեղակայման հատվածները/ և կապի մալուխագծերի հատվածների, գործող, Նախագծվող, վերակառուցվող, քանդման ենթակա շենքերի և շինությունների նշագրմամբ:
<p>3. 7. 3</p>	<p>Բաժին «Գծային օբյեկտի տեխնոլոգիական և կառուցողական լուծումներ: Արհեստական շինություններ»</p>	<p>Նախագծային փաստաթղթերի կազմում ներկայացնել «Գծային օբյեկտի տեխնոլոգիական և կառուցողական լուծումներ: Արհեստական շինություններ» Բաժինը, որն իր մեջ պետք է ներառի.</p> <ul style="list-style-type: none"> - տեղեկություններ գծային օբյեկտի հիմնահատակի գրունտի դիմացկուն և ձևախախտման բնութագրերի վերաբերյալ - տեղեկություններ գրունտային ջրերի մակարդակի, դրանց քիմիական բաղադրության, գծային օբյեկտի ստորգետնյա հատվածի կառուցատարրերի և մասերի նկատմամբ վնասակարության վերաբերյալ - տեղեկություններ կառուցողական լուծումների, ամրության ցուցանիշների վերաբերյալ, կրող կառուցատարրերի աշխատանքի ընդունված սխեմաների, նորմատիվ և հաշվարկային բեռնվածության, նյութերի աշխատանքային փուլերի, հաշվարկների արդյունքների նկարագրությունը - տեղեկություններ օգտագործվող ջրամեկուսիչ և ջերմամեկուսիչ նյութերի վերաբերյալ: Դեֆորմացիոն կարերի կառուցվածքի նկարագրությունը: - տեղեկություններ մետաղական կառուցատարրերի և դրանք քայքայումից պաշտպանելու վերաբերյալ - տեղեկություններ շինարարամոնտաժային աշխատանքներ /ՇՄԱ/ իրականացնելիս զննության ենթակա պատասխանատու հանգույցների և տարրերի վերաբերյալ - օբյեկտի տեխնոլոգիական սարքավորումների և սարքերի բնութագրերը և ցուցանիշները - շինարարության ժամանակ օգտագործվող սարքավորումների, այդ թվում բեռնաբարձ, տրանսպորտային միջոցների և մեխանիզմների տեսակների և քանակի հիմնավորումը - տեղեկություններ շահագործումը կազմակերպելու վերաբերյալ - տեղեկություններ ուղևարձի վճարման համակարգի վերաբերյալ - տեղեկություններ էլեկտրամատակարարման համակարգի վերաբերյալ - էլեկտրամատակարարման աղբյուրների բնութագիրը՝ հիմնարար շինարարության օբյեկտը հանրային օգտագործման էլեկտրամատակարարման ցանցին միացնելու տեխնիկական պայմաններին համապատասխան

կարգավարման, կառավարման, ռելեական պաշտպանության, ռեակտիվ հզորության փոխհատուցման նախագծային լուծումների նկարագրությունը

- էլեկտրաէներգիայի տնտեսմանն ուղղված միջոցառումների ցանկ
- տեղեկություններ ցանցային և տրանսֆորմատորային օբյեկտների հզորության վերաբերյալ
- տեղեկություններ օբյեկտի շինարարության ընթացքում օգտագործման ենթակա հաղորդալարերի և լուսավորման ամրանների դասի և տեսակի վերաբերյալ
- աշխատանքային և վթարային լուսավորման համակարգերի նկարագրությունը
- էլեկտրաէներգիայի լրացուցիչ և պահուստային աղբյուրների նկարագրությունը
- քարշային ցանցի նկարագրությունը
- տեղեկություններ հոսանքի իջեցման և քարշային իջեցման ենթակայանների վերաբերյալ
- տեղեկություններ օբյեկտի շահապաշտպանության վերաբերյալ
- տեղեկություններ թափառող հոսանքը վերահսկելու վերաբերյալ
- տեղեկություններ էլեկտրական հաղորդաթիթեղների, մետաղական կոնստրուկցիաների և այլ կառուցատարրերի վերաբերյալ
- տեղեկություններ ջրամատակարարման համակարգի վերաբերյալ
- տեղեկություններ կեղտաջրերի ծավալի հաշվառման և հսկողության համակարգերի վերաբերյալ
- տեղեկություններ ջրասպառման ծավալների հաշվառման և հսկողության համակարգերի վերաբերյալ
- տեղեկություններ ջեռուցման, օդափոխության և օդի օդորակման համակարգերի, ջերմային ցանցերի վերաբերյալ
- ջեռուցման, օդափոխության և օդորակման գործընթացների ավտոմատացման և կարգավարման համակարգերի նկարագրությունը
- տեղեկություններ հեղուկային ջեռուցման համակարգի վերաբերյալ
- տեղեկություններ գնացքների երթևեկության ավտոմատիկայի և հեռուստամեխանիկայի համակարգերի վերաբերյալ
- տեղեկություններ կապի ցանցերի և էլեկտրոնային ժամացույցների համակարգերի վերաբերյալ
- տեղեկություններ գծերի և հպակային ռելեների վերաբերյալ
- բաց գծահատվածների հողապաստառի և ջրատար համակարգի նկարագրությունը
- տեղեկություններ անվտանգության ազդանշանային և մուտքի կառավարման համակարգերի վերաբերյալ
- տեղեկություններ կայարանի և թունելների հարակից շինությունների ճարտարապետական և ծավալային նախագծային լուծումների վերաբերյալ
- կառամատույցի և նախասրահի ճարտարապետական լուծումների կոնցեպցիա: **Բոռշուռ.**
- տեղեկություններ ճարտարագիտական ցանցերը օբյեկտի շինհրապարակին մոտեցնելու վերաբերյալ
- տեղեկություններ օբյեկտի շահագործման ժամանակահատվածում ճարտարագիտական ցանցերը մոտեցնելու վերաբերյալ
- կապուղիների կազմակերպման տեխնիկական լուծումների նկարագրությունը
- տեղեկություններ թվային և վերլուծական տեսահսկման համակարգերի վերաբերյալ
- համացանցի լայնաշերտ հասանելիության ալիքներ տրամադրելու տեխնոլոգիաների նկարագրությունը,

գրաֆիկական մասում.

- օբյեկտի սխեմա՝ տեխնոլոգիական սարքավորումների տեղադրման հատվածների նշագրմամբ
- կողո կառուցատարրերի և հենարանների առանձին տարրերի կառուցողական լուծումների գծագրեր
- արհեստական կառույցների, շինությունների հիմնական տարրերի գծագրեր
- ամրանավորման հիմնական սխեմաները
- ջրամեկուսացման, մետաղամեկուսացման սարքերի,

		<p>- օգտագործվող ելարանային սարքերի կառուցվածքը - կառուցատարրերի ամրացման սխեմաներ: Օպերատիվ կառավարումը և ճարտարագիտական համակարգերի աշխատանքների հսկողությունը նախատեսել մետրոպոլիտենի նախագծվող կայարանից՝ գծի գործող կետերին կարգավարական կառավարմանը միանալու միջոցով:</p>
<p>3. 7. 3. 1</p>	<p>Ենթաբաժին «Ճարտարապետական լուծումներ»</p>	<p>Մշակել նորմավորման ելակետային տվյալներին համապատասխան տեխնիկական լուծումներ, համաձայն սույն առաջադրանքի 2. 3 կետի: Ճարտարապետական պատկերը և նախագծվող գծահատվածի, կայարանի, մետրոկամուրջի և այլ օբյեկտների կառուցատարրերի լուծումները պետք է համապատասխանեն տեղակայման տարածքին և ներդաշնակ լինեն քաղաքային ու բնական լանդշաֆտին: Կայարանի և գծահատվածի ծառայողական և օժանդակ շինությունների հարդարումը իրականացնել եսթետիկայի և հիգիենայի պահանջներին համապատասխան: Նախատեսել տեղեկատվական և նավիգացիոն համակարգեր՝ նախագծային փաստաթղթերի նախապատրաստման համար, մետրոպոլիտենի ծառայությունների տեխնիկական պայմաններին համապատասխան:</p>
<p>3. 7. 3. 2</p>	<p>Ենթաբաժին «Կառուցողական և ծավալային պլանային լուծումներ»</p>	<p>Մշակել նորմավորման ելակետային տվյալներին համապատասխան սույն առաջադրանքի 2. 3. կետին համաձայն: Ենթակառուցվածքների օբյեկտների տեխնիկական հագեցվածությունը մշակել ելնելով 81-717 / 81-717-5 տեսակի 5 վագոններից ձևավորված շարժակազմի շահագործմամբ Նախագծումն իրականացնել առաջադեմ տեխնոլոգիաների և սարքավորումների կիրառմամբ՝ հաշվի առնելով գործող մետրոպոլիտենի համատեղելիությունը կիրառվող սարքավորումների հետ: Կայարանային համալիր. Կայարանային համալիրը նախագծել Հրազդան գետի աջափնյա գոտում՝ հաշվի առնելով նախատեսվող կառուցապատումը և գիծը շարունակելու, ևս մեկ կայարան կառուցելու հեռանկարը, ինչպես նաև կայարանային համալիրի նախասրահի անմիջական հարևանությամբ հանրային տրանսպորտի վերջին կայան կառուցելու հնարավորությունը: Կամուրջ Հնարավորության սահմաններում, Երևան քաղաքի պայմաններին համապատասխան, տեղայնացնել «Մետրոմոստ» ընկերության գործող նախագծերից որևէ մեկը, որը կառուցվել և շահագործվում է ԱՊՀ երկրների մետրոպոլիտեններում: Կամուրջը նախագծել սեփական կառուցատարրերով՝ գծերը գմբեթի տակ տեղակայումով: Կամուրջի հաշվարկները կատարել ելնելով 5 /հինգ/ վագոններից ձևավորված շարժակազմի երկկողմանի երթևեկությունից՝ հաշվի առնելով դինամիկական, սեյսմիկ բեռնվածությունը, արգելակման և քարշուժի առաջացրած բեռնվածությունը, շարժակազմի լայնական հարվածքները, ջերմակլիմայական ազդեցությունը: Համարել ընթացիկ սպասարկման և մոնիտորինգի իրականացման հնարավորությունը: Մետրոպոլիտենի գծի թունելային հատված Հիմք ընդունելով մետրոպոլիտենի շինությունների նախկինում կառուցված կառուցատարրերի տեխնիկական վիճակի հետազոտության արդյունքներով կազմված տեխնիկական հաշվետվությունը (սույն առաջադրանքի 3. 2. կետը), որոշում կայացնել նախագծային և շահագործման բնութագրերը վերականգնելու աշխատանքների ծավալի և կառուցվածքի մասին: Մետրոպոլիտենի գծի վերգետնյա հատված Գծի վերգետնյա հատվածը նախագծել ծածկված: Թունելի թեքահարթակը նախագծել հենապատերով՝ ճակատամուկի փորվածքի կայունության, գրունտի սողանքից և հնարավոր քարաթափից պաշտպանվելու համար: Նախագծելիս իրականացնել գծային հատվածի հիմնական և inoanohs օբեկտների կառուցողական լուծումների ընտրությունը՝</p>

3. 7. 3. 3	Ենթաբաժին «Էլեկտրամատակարարման համակարգ»	<p>հուսալիության հաշվարկից:</p> <p>Մշակել նորմավորման ելակետային տվյալներին համապատասխան, սույն առաջադրանքի 2. 3 կետի և Երևանի մետրոպոլիտենի տեխնիկական պահանջներին համաձայն.</p> <ul style="list-style-type: none"> - Ցանցեր 6 կՎ, էլեկտրատեխնիկական հաշվարկներ. Միջին և արդյունավետ հոսանքների համար բարձրավիտ սխեմաների հաշվարկ - Զարշային ցանց 825Վ - Զարշային ցանց 825Վ ենթակայանների միջև ուղեփակման կապ և անջատիչների կառավարում - հոսանքի քարշախօջեցման ենթակայաններ, հոսանքի իջեցման ենթակայաններ - Ուժափոխարկիչ ենթակայաններ - Էլեկտրական լուսավորություն - Մալուխակիր կառուցատարրեր, տարբեր նշանակության գլխավոր մալուխների անցկացում - Թունելների հարակից շինությունների ուժափոխարկիչ էլեկտրասարքավորումներ և էլեկտրական լուսավորություն: <p>Էլեկտրամատակարարումը նախագծել քաղաքային ենթակայանների սնուցման երկու անկախ աղբյուրներից: Էլեկտրամատակարարման հաշվարկը իրականացնել սովորական աշխատանքային և վթարային 6 կՎ էլեկտրամատակարարման համար: Ուժափոխարկիչ սարքավորումների, լուսավորության, հպումային ցանցի մշտական և փոփոխական հոսանքի մատակարարումը՝ նախատեսել նախագծային նորմերին համապատասխան: Կառուցվող կայարանի համար նախատեսել մեկ ենթակայան, իսկ ենթակայանում՝ հեռուստամեխանիկայի և ավտոմատիկայի համապատասխան սարքավորումներ:</p> <p>Ստորգետնյա շինություններում, ինչպես նաև երթևեկության բաց տարածքում նախատեսել հիմնական և վթարային լուսավորություն՝ ապահովելով յուրաքանչյուր օբյեկտի համար ապահովելով գործող նորմերին համապատասխան լուսավորության պահանջված աստիճան: Կայարանի և թունելների սարքավորումների տեղադրումը իրականացնել համաձայն տիպային լուծումների: Ենթաբաժնի կազմում մշակել.</p> <ul style="list-style-type: none"> - էլեկտրաընդունիչների էլեկտրամատակարարման հիմնական սխեմաներ - լուսավորության ցանցի հիմնական սխեմա - վթարային լուսավորության ցանցի հիմնական սխեմա - հողակցումների (գոյացումների) և շանթապաշտպանության սխեմաներ; - էլեկտրամատակարարման ցանցերի գծագիր - էլեկտրասարքավորումները տեղակայելու սխեմա - քարշային ցանցի հիմնական սխեմա - ենթակայանների միջև ուղեփակման կապի սխեմաներ:
3. 7. 3. 4	Ենթաբաժին «Ջրամատակարարման համակարգ»	<p>Մշակել նորմավորման ելակետային տվյալներին համապատասխան, սույն առաջադրանքի 2. 3 կետի և Երևանի մետրոպոլիտենի տեխնիկական պահանջներին համաձայն:</p> <p>Մետրոպոլիտենի շինությունների /կայարաններ, սպասասարահներ, սանհանգույցներ, օդափոխիչ խցիկներ/ ջրամատակարարումը պետք է ապահովել միասնական համակարգով՝ շուրջօրյա մշտական ջրամատակարարման երկու անկախ աղբյուրներից:</p> <p>Ենթաբաժնի կազմում մշակել.</p> <ul style="list-style-type: none"> - ջրամատակարարման համակարգերի հիմնական սխեմաներ - ջրամատակարարման ցանցի գծագիր - ներանցման և հաշվառման հանգույցներ կառուցման հիմնական սխեմաներ:
3. 7. 3. 5	Ենթաբաժին «Ջրահեռացման և կոյուղիների համակարգ»	<p>Մշակել նորմավորման ելակետային տվյալներին համապատասխան, սույն առաջադրանքի 2. 3 կետի և Երևանի մետրոպոլիտենի տեխնիկական պահանջների համաձայն:</p> <p>Ենթաբաժնի կազմում մշակել.</p> <ul style="list-style-type: none"> - Ջրահեռացման և կոյուղիների համակարգերի հիմնական սխեմաներ

		<p>- ջրահեռացման և կոյուղիների ցանցի գծագիր - ջրահեռացման և կոյուղիների ներանցման և հաշվառման հանգույցներ կառուցելու հիմնական սխեմաներ:</p>
<p>3. 7. 3. 6</p>	<p>Ենթաբաժին «Ջեռուցում, օդփոխություն և օդորակում: Ջերմային ցանցեր»</p>	<p>Կայարանների, նախասրահների և այլ արտադրական ու ծառայողական հատվածների սենյակներում նախատեսել տեղային ջերմամատակարարում: Նախատեսել բարձրարդյունավետ էներգախնայող համակարգերի և տեխնոլոգիաների կիրառումը: Ջեռուցման, օդափոխության և տաք ջրամատակարարման համակարգերը նախագծելիս, որպես սնուցման աղբյուր օգտագործել էլեկտրաէներգիան: Ենթաբաժնի կազմում մշակել. - Ջեռուցման, օդփոխության և օդորակման համակարգերի հիմնական սխեմաներ - ջերմամատակարարման ցանցերի գծագիր - ներանցման և հաշվառման հանգույցներ կառուցելու հիմնական սխեմաներ - ծխատար համակարգերի հիմնական սխեմաներ: Վազուրդային թունելների, կայարանների թունելային օդափոխության, ինչպես նաև կայարանների ենթակայանների և նախագծով նախատեսված այլ շինությունների սենյակների տեղային օդափոխության համար նախատեսել օդափոխման, ներհոսման և արտածման համակարգեր:</p>
<p>3. 7. 3. 7</p>	<p>Ենթաբաժին «Քնացքների երթևեկության ավտոմատիկա և հեռուստամեխանիկա»</p>	<p>Մշակել նորմավորման ելակետային տվյալներին համապատասխան, սույն առաջադրանքի 2. 3 կետի և Երևանի մետրոպոլիտենի տեխնիկական պահանջների համաձայն: Ենթաբաժնի կազմում մշակել. - ճանապարհային զարգացման երթուղիների սխեմա - սարքավորումների տեղակայման սխեմա և մալուխային գծագիրը - Քնացքների երթևեկության ավտոմատիկայի և հեռուստամեխանիկայի սարքավորումներում գծերի կամ հատվածների հիմնական տեխնիկական լուծումների գծագրեր - Քնացքների սարքասրահներում երթևեկության ավտոմատիկայի և հեռուստամեխանիկայի սարքերի տեղաբաշխման սխեման: Արագության ավտոմատ կարգավորման /ԱԱԿ/ բլոկ-տեղամասի հաշվարկը իրականացնել 81-717 / 81-717-5 տեսակի շարժակազմի բնութագրերին համապատասխան: Քնացքների երթևեկության կազմակերպման և կարգավորման, անվտանգության ապահովման համալիրում նախատեսել. - տարածության կարգավորման և Քնացքների երթևեկության անվտանգության համակարգը /Քնացքների երթևեկության ավտոմատիկա հեռուստամեխանիկա՝ ԳԵԱԶ/ - լուսաֆորներ և երթևեկության լուսադիրոլային ցուցանակներ - կիսավտոմատ գործողության լուսաֆորների /ԱԼ/ մոտ բացարձակ կանգառի ազդանշաններ - Քնացքների երթևեկության ժամանակ որպես ազդանշանային հիմնական միջոց նախատեսել ավտոմատ լոկոմոտիվային ազդանշանը՝ արագության ավտոմատ կարգավորմամբ և նախագուշացնող ազդանշանով - որպես ազդանշանային համակարգի պահուստային միջոց նախատեսել ավտոմատ բլոկավորումը /ԱԲ/ - սլաքների և ազդանշանների կարգավարական կենտրոնացում ավտոմատացված աշխատավայրերով /անհրաժեշտության դեպքում/ - ԳԵԱԶ համակարգի նախագծում 100% պահուստավորմամբ նոր տարրային բազայի վրա ռելսաշղթաների կիրառմամբ Գործող գիծը երկարացնելու նպատակով անհրաժեշտ է մետրոյի «Բարեկամություն» կայարանում իրականացնել «Էլեկտրական կենտրոնացման» /ԷԿ/, ավտոբլոկավորման /ԱԲ/ և «Արագության ավտոմատ կարգավորման» /ԱԱԿ/ համակարգերի մոնտաժային փոփոխություններ, ռելեային կայանում նոր սարքավորումների տեղադրում հնի փոխարինմամբ /վերականգնումը/: Անհրաժեշտ է նաև նոր սարքեր տեղադրել և իրականացնել մոնտաժային աշխատանքներ «Կարգավարական կենտրոնացման» /ԿԿ/ համակարգում:</p>

		<p>տեխնիկական պահանջների համաձայն: Նախագծվող կայարանում նախատեսել կապի և համակարգերի ներկայումս գործող բոլոր տեսակները.</p> <ul style="list-style-type: none"> - կարգավարական /գնացքների, էներգո, էլեկտրամեխանիկական/ - թունելային - սլաքային - գնացքների ռադիոկապ - վարչատնտեսական - բարձրախոս <p>Նախագծվող կայարանում նախատեսել գլխավոր օպտիկամանրաթելային օղակավոր ցանցի շարունակությունը՝ սկսած «Բարեկամություն» կայարանից, տեսահսկման, տարիֆիկացման համակարգերի, միասնական ժամանակի և WI-FI ցանցի միացումը գործող համակարգերին:</p> <p>Նախագծային փաստաթղթերում ներկայացնել.</p> <ul style="list-style-type: none"> - կայարանային համալիրների կապի սարքավորումներ - կապի թունելային ցանցեր - բարձրածայն ազդարարման համակարգի /ԲԱՐ/ թունելային ցանցեր - գնացքների ռադիոկապի համակարգեր - բարձրածայն ազդարարման համակարգ /ԲԱՐ/ - կայարանի տեղային հաշվողական ցանց - կապի գլխավոր ցանցեր՝ ֆիզիկական շղթաների կիրառմամբ - կապի մագիստրալային ցանցեր՝ կապի օպտիկամանրաթելային գծերի /ԿՕՄԳ/ կիրառմամբ - տեսահսկման համակարգեր /տեսահսկման մտավոր համակարգ՝ ՏՄՐ/ - թունելի մուտքի հսկողության սարք /ԹՄՐՍ/ <p>Ենթաբաժնի կազմում մշակել.</p> <ul style="list-style-type: none"> - կապի միջոցների և այլ թույլ հոսանքային ցանցերի սխեմա - ծայրային սարքավորումների, այլ տեխնիկական, ռադիոէլեկտրոնային միջոցների և բարձր հաճախականության սարքերի տեղակայման սխեմաներ - համալիր հիմնական ցանցերի սխեմա - համացանցի լայնաշերտ հասանելիության համակարգերի սխեմա - բարձրածայն ազդարարման սխեմաներ - տեղեկատվության ծայնագրման և պաշտպանության համակարգերի սխեմա /ըստ անհրաժեշտության/:
<p>3. 7. 3. 9</p>	<p>Ենթաբաժին «Գծի և հպակային ռելս»</p>	<p>Մշակել նորմավորման ելակետային տվյալներին համապատասխան, սույն առաջադրանքի 2. 3 կետի և Երևանի մետրոպոլիտենի տեխնիկական պահանջների համաձայն:</p> <p>Ենթաբաժնի կազմում մշակել.</p> <ul style="list-style-type: none"> - գծի վերին կառուցվածքի և հպակային ռելսի կիրառելի կառուցատարրերի գծագրեր - գծի բաց վերգետնյա հատվածում հողապաստառի լայնական պրոֆիլներ և ջրահեռացման սարքերի պլան - փակահեռակների, գեոդեզիական նշանների ընդհանուր գծագրեր: <p>Գծի բոլոր տարրերը պետք է ապահովեն.</p> <ul style="list-style-type: none"> - գնացքների անվտանգ և անխոչընդոտ երթևեկությունը՝ սահմանված առավելագույն արագությամբ - ռելսամեջերի և առհասարակ գծերի կայունությունը; - էլեկտրական ռելսաշղթաների մեկուսացումը: <p>Գծի կառուցատարրերը պետք է լինեն միատիպ և վերանորոգման պիտանի /բազմանգամյա/:</p> <p>Գծի վերին կառուցվածքի կառուցատարրեր համարել.</p> <ul style="list-style-type: none"> - երկաթուղագիծը՝ ստորին հոսանքահանի հետ և 1520մմ ռելսամեջերի լայնությամբ, թունելի միջով անցնող գծերի վերին կառուցվածքներում անհրաժեշտ է նախատեսել P50 տեսակի ռելսեր, փայտյա կոճերով անվտանգ P50 տեսակի զուգառելսեր: Վերգետնյա և Եստակադային հատվածներում նախատեսվում է ռելսերի նույն տեսակը, երկաթբետոնյա կամ փայտյա կոճերով և խճային վերնալիքի շերտ: Սլաքային փոխադրիչներ 1/9 մակնիշի և խաչածև թեքահարթակներ 2/9 մակնիշի, տեղադրվում են փայտյա երկաթաթևի հեմիտրանի և ինժեռնի մեծամասն շերտի մոտ:

		<p>կոր և ուղիղ հատվածների նորմերին համապատասխան: Թունելներում գծի ստորին կառուցվածք համարել թունելի կառուցատարրերի հարթ ճոռը, իսկ կլոր հատույթի դեպքում հարթեցնող մոնոլիտ բետոնը: Գծի բաց վերգետնյա հատվածում ընդունել կամ երկաթբետոնյա հիմք, կամ առաջին դասի երկաթբետոնյա համար նախատեսված հողապատահար, «Շինարարական նորմերի և կանոնների 32-01» նորմի պահանջներին համապատասխան, անհրաժեշտության դեպքում նախատեսել հողապատահարի գրունտի կարծրացում և ջրահեռացման միջոցառումներ: Գծի մոնտաժից հետո այն հասցնել մինչև նախագծային նիշը, այնուհետև, սահմանված կարգով ամրացնել բետոնով՝ ապահովելով ջրահեռացման գործընթացը: Եռակցված ուղիներ կառուցելու համար ռելիեֆը պետք է էլեկտրահպումային մեթոդով եռակցել մինչև 137. 5մ երկարության ռելիեֆներին: Այնուհետև, թունելում այլումինաթերմիտային մեթոդով դրանք եռակցել միմյանց: Գծի վերգետնյա հատվածներում պետք է նախատեսել անվտանգության հարմարանքներ՝ անկյունակների կամ կամրջային զուգառելիքների տեսքով: Հպակային ռելիեֆ տեղակայվում է ձախ կողմում՝ գնացքների երթևեկության ուղղությամբ, իսկ կայարանի կառամատույցի սահմաններում՝ կառամատույցի տակ: Անհրաժեշտության դեպքում, համաձայն նախագծի սլաքային փոխադրիչների, առանձին հատվածներում և որոշ տեղերում տեղադրել աջ կողմից: Հպակային ռելիեֆը և ծայրային արմունկները ծածկել ապակեպլաստե էլեկտրամեկուսիչ պաշտպանիչ արկղիկներով: Թունելներում, բաց վերգետնյա կամ վերերկրյա հատվածներում հպակային ռելիեֆ տեղադրումն իրականացվում է նորմատիվ փաստաթղթերին համապատասխան: Նախատեսել աղմուկա և թրթիռապաշտպան-նուրթյունը՝ հիմք ընդունելով մետրոպոլիտենի գնացքների երթևեկության հետևանքով ակնկալվող թրթիռաձայնային գնահատականի մասին հաշվետվությունը:</p>
3. 7. 3. 10	Ենթաբաժին «Անվտանգության ավտոմատ ազդանշանային համակարգեր և հասանելիության հսկողության կառավարում»	<p>Մշակել նորմավորման էլակետային տվյալներին համապատասխան, սույն առաջադրանքի 2. 3 կետի և Երևանի մետրոպոլիտենի տեխնիկական պահանջների համաձայն:</p> <p>Ենթաբաժնի կազմում մշակել.</p> <ul style="list-style-type: none"> - մետրոպոլիտենի օբյեկտի ազդանշանային համակարգերի և հասանելիության հսկողության կառավարման սխեմա - ծայրային սարքավորումների, այլ տեխնիկական, ռադիոէլեկտրոնային միջոցների և բարձր հաճախականության սարքերի տեղակայման սխեմա - տեսահսկման սարքավորումների հիմնական սխեմաներ:
3. 7. 3. 11	Ենթաբաժին «Ավտոմատացում և կարգավարում»	<p>Մշակել նորմավորման էլակետային տվյալներին համապատասխան, սույն առաջադրանքի 2. 3 կետի և Երևանի մետրոպոլիտենի տեխնիկական պահանջների համաձայն:</p> <p>Կարգավարումն իրականացնել հույժ կարևոր կառավարման տեղեկատվական տեխնոլոգիաների /ԿՏՏ/, անվտանգության համակարգերի, էլեկտրամատակարարման, շարժասանդուղիների համակարգերի և սարքերի, գնացքների երթևեկության համար: Օբյեկտի ճարտարագիտական համակարգերի կարգավարումը իրականացնել գործող կարգավարական վահանակների վրա՝ առանց վերակառուցման:</p>
3. 7. 3. 12	Ենթաբաժին «Էներգետիկ արդյունավետության պահանջների և շենքերը, շինությունները ու կառույցները օգտագործած էներգետիկ պաշարները հաշվառքի սարքերով զինելու պահանջների ապահովման միջոցառումներ»	<p>Մշակել նորմավորման էլակետային տվյալներին համապատասխան, սույն առաջադրանքի 2. 3 կետի և Երևանի մետրոպոլիտենի տեխնիկական պահանջների համաձայն:</p> <p>Ենթաբաժնի մշակել հիմնվելով տարածաշրջանի կլիմայական տվյալների վրա՝ հիմնական էներգախնայողական ուղղություններով ջերմապաշտպանության նորմավորված ցուցանիշներին համապատասխան:</p> <p>Ենթաբաժնի կազմում մշակել.</p> <ul style="list-style-type: none"> - ճարտարապետանախագծային և կառուցողական լուծումներ - սարքավորումների և սարքավորումների օբյեկտային տեղադրումներ

<p>3. 7. 3. 13</p>	<p>Ենթաբաժին «Սահմանափակ շարժունակություն ունեցող բնակչության խմբերի համար հասանելիության ապահովման միջոցառումներ»</p>	<p>ըրամատակարարման, էլեկտրամատակարարման համակարգերի էներգախնայողական միջոցառումներ:</p> <p>Մշակել օբյեկտի ոչ արտադրական հատվածի (կայարանի) համար համապատասխան նորմավորման ելակետային տվյալների, սույն առաջադրանքի 2.3 կետի համաձայն:</p> <p>Հասանելիության տեխնիկական պահանջներն ապահովել շարժունակության բոլոր խմբերի, ներառյալ հաշմանդամների և բնակչության սահմանափակ շարժունակության խմբերի համար.</p> <ul style="list-style-type: none"> - առանց խոչընդոտների միջավայրի ապահովում մուտքային/ելքային խմբերի համար, - տեղաշարժման ուղիների ապահովում, այդ թվում՝ շարժասանդուղքների (բացառությամբ՝ սայլակով հաշմանդամների), տուրնիկետների միջով, սանդուղքների վրայով՝ թեքահարթակով, վերելակով. - հարթակի (վերելակի) առկայություն՝ մետրոպոլիտենի կայարանի տարածք սահմանափակ շարժունակություն ունեցող բնակչության խմբերի անխոչընդոտ մուտքն ապահովելու համար. - շոշափելի գծերի առկայություն աստիճանահարթակի առջև, ցայտուն արտահայտված առաջին և վերջին աստիճաններ. - առաջին վագոնում շարժական թեքասանդուղքի առկայություն՝ գնացքի վագոն մուտք գործելիս օգնություն ցուցաբերելու համար: Կայարաններում նախատեսել սահմանափակ շարժունակություն ունեցող ուղևորների վերևելք/վայրեջք իրականացնող մետրոպոլիտենի աշխատակիցների կանչի կոճակ: Նախատեսել շենքի ներսում այցելուների կողմնորոշվածությունը դյուրին դարձնող տեղեկատվական սարքավորումներ և միջոցներ: Տեսողական տեղեկատվական համակարգերի այբբենական, թվային և գունավոր կոդավորումն օգտագործելիս նախատեսել տեղեկատվության ճանաչման բնութագրեր:
<p>3. 7. 4</p>	<p>Բաժին «Շինարարության կազմակերպման նախագիծ»</p>	<p>Մշակել նորմավորման ելակետային տվյալներին համապատասխան, սույն առաջադրանքի 2. 3 կետի և Երևանի մետրոպոլիտենի տեխնիկական պահանջների համաձայն:</p> <p>Աշխատանքների կատարման տեխնոլոգիական հերթականության մեջ սահմանել շինարարական հրապարակի ճարտարագիտական նախապատրաստման առաջնահերթությունը, որից հետո միայն իրականացնել մետրոպոլիտենի գծահատվածի հիմնական օբյեկտների շինմոնտաժային աշխատանքները:</p> <p>Մետրոյի նոր կառուցվող հատվածը ելակետային տվյալներով ապահովելու համար ստեղծել գեոդեզիական բաժանարար հիմատակ՝ տեխնիկական հաշվետվության կատարմամբ:</p> <p>Նոր շինությունը գծի գործող հատվածին հարելու և այն շահագործման հանձնելու մասով նախագծի բաժնի նախապատրաստումը իրականացնել ելնելով մետրոպոլիտենի անդադար գործելու սկզբունքից:</p> <p>Նախագծով նախատեսել շինարարամոն-տաժային և գործարկակարգավորիչ աշխատանքների կազմակերպչատեխնիկական աշխատանքների կազմակերպման ամբողջական ծավալը:</p> <p>Բաժնի կազմում ներկայացնել՝</p> <p>Տեքստային մասում՝</p> <ul style="list-style-type: none"> - ճանապարհի, շինարարական տարածքի բնութագրերը, հատկացման գոտու և ճանապարհի վրա գծային օբյեկտի կազմում նախագծված և նրա ֆունկցիոնալությունն ապահովող շենքերի, շինությունների և կառույցների վայրերի նկարագիր, - տեղեկություններ շինարարական մեխանիզմները տեղակայելու, գրունտի, այդ թվում բուսականության թափոնակույտի և պահուստի, շրջանցման սարքերի, հաղորդակցման ուղիների դասավորության, կյութերի և ապրանքների պահեստավորման համար շինարարության ժամանակահատվածում ժամանակավոր հատկացված հողատարածքների չափերի վերաբերյալ, - տեղեկություններ շինարարությունը մատակարարող կյութատեխնիկական ապահովման բազաների, արտադրական ուսման կայանների և Բնագետին ապահովման օբյեկտների

- հիմնական շինարարական մեքենաների, մեխանիզմների, տրասպորտային միջոցների, էլեկտրական էներգիայի, ջրի և այլն, ինչպես նաև ժամանակվոր շենքերի և շինությունների պահանջարկի հիմնավորում,
- զննության ենթակա շինարարական և մոնտաժային աշխատանքների հիմնական տեսակների, պատասխանատու կառուցատարրերի, ճարտարագիտա-տեխնիկական ապահովման ցանցերի հատվածների ցանկը՝ հետագա աշխատանքներ կատարելուց և հետագա կառուցատարրեր կառուցելուց առաջ հանձնման-ընդունման համապատասխան ակտերի կազմամբ,
- շինարարության ընթացքում վտանգավոր ճարտարագիտաերկրաբանական և տեխնոծին երևույթները, այլ վտանգավոր բնական գործընթացները կանխարգելելու միջոցառումների ցանկ,
- շինարարության ընթացքում օբյեկտի տարածքում անվտանգ երթևեկության ապահովման միջոցառումների ցանկ,
- Նախագծային լուծումների նկարագրություն և շինարարության ընթացքում շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումների ցանկ,
- Նախագծային լուծումների նկարագրություն և մետրոպոլիտենի ստորգետնյա օբյեկտների արտադրողական անվտանգության միջոցառումների ցանկ,
- Գրաֆիկական մաս՝
- շինհրապարակների գլխավոր շինարարական պլան,
- շինարարության օրացույցային ժամանակացույց,
- գործընթացները սպասարկող ամփոփագրեր,
- թունելների անցահատումների հիմնական սխեմաներ,
- ծածկված եղանակով թունելների կառույցների շինարարության հիմնական սխեմաներ,
- աշխատանքների բաց եղանակով կառուցվածքների կանգնեցման տեխնոլոգիական սխեմաներ,
- կամրջի հատվածի և կայարանի շինարարության հիմնական սխեմաներ: ՀՕՇԱՍ /հատուկ օժանդակ շինություններ և սարքեր/,
- ջրահեռացման և ջրի իջեցման սխեմաներ,
- հիմքերի ամրացման և հակաֆիլտրացիոն ծածկույթի ստեղծման սխեմաներ,
- գրունտերի ամրացման հատուկ եղանակ,
- պարսպապատման կառուցատարրերի կառուցման և փոսորակների ամրացման սխեմաներ,
- հողագործական աշխատանքների սխեմաներ,
- ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմաներ,
- ռեյիեֆի կազմակերպման սխեմաներ,
- Բաժնի կազմում մշակել ենթաբաժիններ
- «Շինարարության կազմակերպում»,
- «Արդյունաբերական անվտանգություն»,
- «Շինարարության ժամանակահատվածում անվտանգ երթևեկության ապահովման միջոցառումներ»,
- «Արտաքին ճարտարագիտական ցանցեր՝ շինարարության ժամանակահատվածի համար»,
- «Շենքերի, շինությունների և հաղորդակցման ուղիների պահպանության միջոցառումներ»,
- «Աշխատանքների կատարման ժամանակ հողային մակերեսի կանխատեսվող տեղաշարժի մեծությունների հաշվարկ» /տեղաշարժման տաշտափոս/,
- «Աշխատանքների հատուկ միջոցների նախագծերի մշակման անհրաժեշտություն» /ԱՀՄՄ/ /անհրաժեշտության դեպքում/:

3. 7. 4. 1 Թունելային հատված

Նախագծելիս օգտագործել №№ 24, 25, 26, 29 հատվածներում կառուցված հանքահորերը:
 Աշխատանքները №№ 24, 25, 26, 29 հանքահորերի տարածքներում աշխատանքներ կազմակերպելու համար կառուցված թունելներում հաշվի առնել նախկինում կառուցված ժամանակավոր հաղորդակցման ուղիները, մասնավորապես, ջրատար և սեղմված օդի խողովակները, էլեկտրամատակարարման բաժանարար կետերի ավտոմատները, լուսավորության մալուխները, ռելսագծերը

		<p>մշակել:</p> <ul style="list-style-type: none"> - տրանսպորտի, օդափոխության սխեմաներ - «Հակահրդեհային պաշտպանության նախագիծ» բաժին
<p>3.7.4.2</p>	<p>Կամրջային հատված</p>	<p>Ի լրումն պահանջների, կամրջային հատվածի համար անհրաժեշտ է մշակել՝</p> <ul style="list-style-type: none"> - Բնական խոչընդոտները և արգելքները հատուկ միջոցներով շրջանցելու կամ դրանք հաղթահարելու, ջրային օբյեկտների անցումների վայրերի սահմանում, - Շինարարության կարիքների համար նախագծված առանձին օբյեկտների հնարավոր օգտագործման տեխնիկական լուծումների նկարագրություն, - Շինարարության ընթացքում վտանգավոր ճարտարագիտաերկրաբանական և տեխնոծին երևույթները, այլ վտանգավոր բնական գործընթացները կանխելու միջոցառումների ցանկ, - Շինարարության ժամանակահատվածում գծային օբյեկտում անվտանգ երթևեկությունն ապահովելու միջոցառումների ցանկ, - Շինարարության սահմանված տևողության հիմնավորում, - Նախագծային լուծումների նկարագրությունը և շինարարության ժամանակահատվածում աշխատանքի պաշտպանությունը, անվտանգության տեխնիկական և շրջակա միջավայրի պահպանությունն ապահովող միջոցառումների ցանկ <p>Գրաֆիկական մասում՝</p> <ul style="list-style-type: none"> - Օբյեկտի կառուցման օպտիմալ հերթականությունը արտացոլող կազմակերպ-չատեխնոլոգիական սխեմաներ՝ աշխատանքների տեխնոլոգիական հերթականության նշագրմամբ, - Հատուկ օժանդակ շինությունների և սարքերի կառուցատարրեր /ՅՕՇՍ/ մնհրաժեշտության դեպքում՝ - Հիմնատակերի ամրացման և հակաֆիլտրացիոն /հակածծանցման/ պատվարի ստեղծման սխեմաներ:
<p>3.7.5</p>	<p>Բաժին «Գծային օբյեկտի քանդման (ապամոնտաժման) աշխատանքների կազմակերպման նախագիծ»</p>	<p>Մշակել նորմավորման ելակետային տվյալներին համապատասխան, սույն առաջադրանքի 2. 3 կետի և Երևանի մետրոպոլիտենի տեխնիկական պահանջների համաձայն:</p> <p>Բաժնի կազմում ներկայացնել շինարարության ժամանակահատվածում ժամանակավոր ճարտարագիտական ցանցեր կառուցելու նախագծային լուծումների ցանկը, ինչպես նաև՝</p> <ul style="list-style-type: none"> - քանդման (ապամոնտաժման) ենթակա հիմնարար շինարարության օբյեկտների, շենքերի, շինությունների և կառույցների ցանկ, - հիմնարար շինարարության օբյեկտների շենքերը, շինություններն ու կառույցները շահագործումից հանելու միջոցառումների ցանկ - քանդման (ապամոնտաժման) ընդունված եղանակի նկարագրություն և հիմնավորում, - փլուզման և վտանգավոր գոտիների չափի հաշվարկներ և հիմնավորումներ՝ կախված քանդման (ապամոնտաժման) ընդունված եղանակից, - քանդման (ապամոնտաժման) ընթացքում ճարտարագիտական ենթակառուցվածքների, այդ թվում՝ ճարտարագիտա-տեխնիկական ապահովման ստորգետնյա գործող ցանցերի վնասման հավանականության գնահատում, - ճարտարագիտատեխնիկական ապահովման ցանցերի պաշտպանիչ սարքերի և պաշտպանության եղանակների նկարագրություն և հիմնավորում համաձայնեցված այդ ցանցերի սեփականատերերի հետ, - քանդման (ապամոնտաժման) աշխատանքներն անվտանգ կատարելու եղանակով կատարելու լուծումների հիմնավորում և նկարագրություն, - բնակչության անվտանգության ապահովման, այդ թվում՝ նրա իրազեկման և տարհանման միջոցառումների ցանկ, - թափոնների արտահանման և վերամշակման լուծումների նկարագրություն, - քանդվող շենքերի և շինությունների արժեքի գնահատում: Գրաֆիկական մասում՝ - հողատարածքների և հարակից տարածքների հատակագիծը՝ քանդման ենթակա օբյեկտների, ճարտարագիտատեխնիկական

		ապամոնտաժված նյութերի, կառուցատարրերի, ապրանքների և սարքավորումների պահեստավորման վայրերի նշագրմամբ:
3.7.6	Բաժին «Շրջակա միջավայրի պահպանման միջոցառումներ»	<p>Մշակել նորմավորման ելակետային տվյալներին համապատասխան, սույն առաջադրանքի 2. 3 կետի և Երևանի մետրոպոլիտենի տեխնիկական պահանջների համաձայն:</p> <p>Բաժնի կազմում ներկայացնել՝</p> <ul style="list-style-type: none"> - շրջակա միջավայրի վրա ներագդեցության գնահատման արդյունքները, - շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ներգործությունը նվազեցնելու և/կամ կանխելու, շինարարության և օբյեկտի շահագործման ժամանակահատվածում բնական պաշարների արդյունավետ օգտագործման միջոցառումների ցանկ, - բնապահպանական միջոցառումների իրականացման և փոխհատուցման վճարների ծախսերի հաշվարկ և ցանկ, - գծային օբյեկտի տեղակայման և տարածքը հատուկ պայմաններով օգտագործման գոտու սահմանները ներկայացնող նախագիծ, - օբյեկտում վթարի հետևանքով շրջակա միջավայրի հնարավոր աղտոտման և Էկոլոգիական ռիսկի գոտու սահմանների նախագիծ: <p>Բաժնի կազմում մշակել ենթաբաժիններ՝</p> <ul style="list-style-type: none"> - «Բնական և բնական-մարդածին օբյեկտների գույքագրում», - «Աղտոտված գրունտի ծավալների որոշում և դրանց մաքրման առաջարկությունների մշակում», - «Աղտոտված գրունտի վերամշակման միջոցառումներ»:
3.7.7	Բաժին «Հրդեհային անվտանգության ապահովման միջոցառումներ»	<p>Մշակել նորմավորման ելակետային տվյալներին համապատասխան, սույն առաջադրանքի 2. 3 կետի և Երևանի մետրոպոլիտենի տեխնիկական պահանջների համաձայն: Նախագծվող կայարանում նախատեսել հակահրդեհային ազդանշանային համակարգ:</p> <p>Բաժնի կազմում ներկայացնել՝</p> <ul style="list-style-type: none"> - օբյեկտի հրդեհային անվտանգության ապահովման համակարգի նկարագրություն, - տեխնոլոգիական գործընթացների հրդեհային վտանգի բնութագիր, - օբյեկտի հրդեհային անվտանգությունն ապահովող նախագծային լուծումների նկարագրություն և հիմնավորում, - գծային օբյեկտի, այդ թվում նրա կազմում գտնվող և նրա հրդեհային անվտանգությունն ապահովող շենքերի, շինությունների և կառույցների տեղակայման նախագծային լուծումների նկարագրություն, - օբյեկտի գործունեությունն ապահովող ծավալանախագծային և կառուցողական լուծումների, հրդեհային վտանգի կառուցողական դասի և հրակայունության աստիճանի, շինարարական կառուցատարրերի հրդեհային վտանգի դասի և հրակայունության սահմանի նկարագրություն և հիմնավորում, - հակահրդեհային պաշտպանության տեխնիկական համակարգերի նկարագրությունն ու հիմնավորումը, - հողատարածքի կազմակերպման իրավիճակային պլան, - հակահրդեհային պաշտպանության /հրդեհաշիջման ավտոմատ սարքեր, հակահրդեհային ազդանշանային ավտոմատ համակարգ, ներքին հակահրդեհային ջրուղիներ/ տեխնիկական համակարգերի (միջոցների) կառուցվածքային սխեմաներ:
3.7.8	Բաժին «Շինարարության նախահաշիվ»	<p>Նախահաշվային փաստաթղթերը մշակել տարածքային նախահաշվային նորմատիվների /ՏՀՈ-2001/ գներով և նորմերով, ինչպես նաև ընթացիկ գներով /գներին անհրաժեշտ ընթացիկ մակարդակը սահմանում է Պատվիրատուն):</p> <p>Նախահաշվային փաստաթղթերով նախատեսել՝</p> <ul style="list-style-type: none"> - հնարավոր կանաչ տարածքների վերացման վնասի հատուցման և բարեկարգման վերականգնման ծախսեր, - մշակութային ժառանգության օբյեկտների պահպանման ապահովման համար աշխատանքների իրականացման ծախսեր, - շինարարության գոտում հայտնված ճարտարագիտական հաղորդակցման ուղիների վերատեղադրման ծախսեր, - շինարարական աղբի և գրունտի վերամշակման ծախսեր, - ճարտարագիտատեխնիկական ապահովման ցանցերին տեխնոլոգիական միացման վճար (անհրաժեշտության դեպքում), - հողատարածքների վերազնման (անհրաժեշտության դեպքում) և

		<ul style="list-style-type: none"> - ձմեռային ժամանակահատվածում շինարարամուտաժային աշխատանքների իրականացման ծախսեր, - տեխնիկական վերահսկողության ծախսեր, - հեղինակային վերահսկողության ծախսեր, - գործարկման-կարգավորման ծախսեր՝ համաձայն Պատվիրատուի տվյալների, - տեխնիկական /սկզբնական/ գույքագրման և կադաստրային աշխատանքներ իրականացման ծախսեր, - գեոդեզիական հավասարեցման հիմնատակի ստեղծման ծախսեր, - գեոդեզիական-մարկշեյթերական աշխատանքների կատարման ծախսեր, - սահմանել չնախատեսված ծախսերի պահուստային միջոցներ՝ 5% -ի չափով, - ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ երրորդ անձանց վճարվող այլ հատուցումներ: <p>Նախահաշվային փաստաթղթերը կատարել APIC ձևաչափով, որպես տարբեր նախահաշվային խրագրային համալիրների միջև տվյալների փոխանակման միասնական ձևաչափ՝ (տեղային նախահաշվային հաշվարկները APIC 1.10 և PDF ձևաչափով, օբյեկտի նախահաշվային հաշվարկներ, ամփոփված նախահաշվային հաշվարկները և ծախսերի ամփոփագիրը՝ EXCEL և PDF ձևաչափով):</p>
--	--	---

IV. Լրացուցիչ պահանջներ

4. 1	Նախագծանախահաշվային փաստաթղթերի քանակը	<p>Նախագծային փաստաթղթերը պետական փորձաքննության ներկայացնելու համար անհրաժեշտ է դրանք տրամադրել էլեկտրոնային կրիչի վրա՝ ներկայացման պահին պետական փորձաքննության մարմնի կողմից հաստատված տեսքով, ինչպես նաև ներկայացնել նախահաշվային փաստաթղթերը PDF, EXCEL ձևաչափով:</p> <p>Նախապատրաստել և պետական պատվիրատուին փոխանցել Պետական փորձաքննության դրական եզրակացությունը ստանալուց հետո.</p> <ul style="list-style-type: none"> - նախագծանախահաշվային փաստաթղթերը թղթային կրիչ վրա՝ 4 /չորս/ օրինակից - նախագծային փաստաթղթերը էլեկտրոնային կրիչի վրա PDF, DWG/DGN ձևաչափով՝ 1 /մեկ/ օրինակից - նախահաշվային փաստաթղթերն էլեկտրոնային կրիչով PDF, XLSX և APIC ձևաչափով՝ 1 /մեկ/ օրինակից
4. 2	Պրեզենտացիոն նյութեր նախապատրաստելու անհրաժեշտությունը	<p>Տեղեկատվական ապահովման միջոցառումների համար նախապատրաստել պրեզենտացիոն նյութ.</p> <ul style="list-style-type: none"> - էլեկտրոնային կրիչի վրա PDF ձևաչափով՝ 2 /երկու/ օրինակից - թղթային կրիչի վրա /բրոշյուրա/՝ երկու օրինակից
4. 4	Գիտահետազոտական և փորձարարական աշխատանքների կատարում	<p>Կատարել անհրաժեշտ հաշվարկներ, կապված. սեյսմիկ մասով՝ շինարարական տարածքի երկրաբանական վիճակի, և Հրազդան գետի ջրերի սեզոնային առավելագույն բարձրացման հաշվարկի մասով՝ հիդրոերկրաբանական վիճակի հետ:</p>
4. 5	«Շինարարության կազմակերպման նախագիծ» Բաժնի մշակմանը ներկայացվող լրացուցիչ պահանջներ	<p>Մշակել շինարարության կազմակերպման ամփոփիչ նախագիծ /այսուհետ՝ ամփոփիչ շինարարական գլխավոր նախագիծ/՝ մետրոպոլիտենի օբյեկտների կառուցման, ճարտարագիտական ցանցերի շինարարության և վերակառուցման աշխատանքների կատարման ժամկետների ու տևողության փոխադարձ համաձայնեցվածությամբ:</p> <p>Ամփոփիչ շինարարական գլխավոր նախագիծը կատարել տեղային շինարարական գլխավոր նախագծերի հիման վրա: Ամփոփիչ շինարարական գլխավոր նախագծի հատուկ համաձայնեցում չի պահանջվում:</p> <p>Անհրաժեշտության դեպքում նախատեսել աշխատանքների կատարման հատուկ եղանակներ:</p>
4. 6	Կապալառուի կողմից նախագծային փաստաթղթերի փորձագիտական աջակցությանը ներկայացվող պահանջներ	<p>Նախագծային և նախահաշվային փաստաթղթավորումը իրականացվում է ճարտարագիտական հետազոտությունների արդյունքների և նախագծային փաստաթղթերի պետական փորձաքննությունն անցկացնելու, ինչպես նաև օբյեկտի շինարարության նախահաշվառման սահմանված արժեքի</p>

**ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՂԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԼՐԱՑՈՒՑԻՉ
ՊԱՅԱՆՁՆԵՐ**

1. Տեխնիկական առաջադրանքի նախնական տարբերակում նշված կամուրջի վրա կայարանի տեղակայման մասով կողմերի քննարկման արդյունքում որոշվեց ներկայացնել կայարանի տեղակայման այլընտրանքային լուծումներ,
2. Նախագիծն անհրաժեշտ է ներկայացնել հայերեն, ռուսերեն և անգլերեն տարբերակով՝ պաշտոնական և մասնագիտական թարգմանությամբ,
3. Ներկայացնել նախագծային և վերլուծական 1-ից ավելի առաջարկներ,
4. Ներկայացնել շինարարական աշխատանքների ձեռքբերման միջազգային մրցույթների անցկացման եղանակով հայտի պատրաստման ձևը,
5. Գնային բոլոր հաշվարկները կատարել Հայաստանի Հանրապետությունում գործող գներով, բացակայության դեպքում Եվրասիական տնտեսական միության, դրա բացակայության դեպքում՝ միջազգային գներով,
6. Նախագիծն իրականացնել հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետությունում գործող մետրոպոլիտենի վերաբերյալ նորմատիվային բազան, դրա բացակայության դեպքում, հնարավոր է կիրառել Եվրասիական տնտեսական միության, հատկապես Ռուսաստանի Դաշնության նորմատիվային բազան, դրա բացակայության դեպքում միջազգային նորմատիվային բազան՝ պատվիրատուի և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի հետ համաձայնեցման դեպքում,
7. Նախագիծն իրականացնել երեք փուլով.
 - 7.1. 1-ին փուլ - մեկնարկային հաշվետվության փուլ, որը ներառում է նախագծի բոլոր հետազոտությունները, չափագրումները, վերլուծությունները, ուսումնասիրությունները և այլն: Եսքիզային տարբերակների ներկայացում իրենց հիմնավորումներով (ֆինանսական, տնտեսական, սոցիալական, բնապահպանական և այլն), որը ներկայացվում է պատվիրատուին ընտրության համար: Արդյունքում, ձևավորվում է նախագծի հիմնական կոնցեպտուալ տարբերակն՝ իր վերլուծություններով, խոշորացված հաշվարկներով և պատվիրատուի համար անվտանգության և հարմարավետության սահմանումով:
 - 7.2. 2-րդ փուլ-նախնական նախագիծ, որը ի թիվս նախնական նախագծի ներառում է նաև շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում, սոցիալտնտեսական ազդեցության գնահատում, հողի օտարման և տարաբնակեցման ծրագիր, մշակութային հետազոտության և այլն, ինչպես նաև հանրային լուծումների իրականացում:
 - 7.3. 3-րդ փուլ – տրամադրվում է ամբողջական, լիարժեք նախագծանախահաշվային փաստաթղթերը և պատվիրատուի կողմից տեխնիկական առաջարկում նշված բոլոր պահանջվող փաստաթղթերը:

**ԱԶԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍՈՒԽ ՄԵՏՐՈՂՈՒԽՏԵՆԻ ԿԱՅԱՐԱՆԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՅՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

I. Ընդհանուր դրույթներ

Երևան քաղաքի Աջափնյակ թաղամասում մետրոպոլիտենի կայարանի շինարարության նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմը և ծավալը (գնման ծածկագիրը՝ «EQ- EPMAshDzB-21/1») սահմանված են Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարանի կողմից որոշված տեխնիկական բնութագրերով և նախագծման ու շինարարության ոլորտի գործող նորմատիվ իրավական ակտերով (Տեխնիկական բնութագրերի թիվ 1.1 Հավելվածի 2.3 կետ):

Ի լրումն առկա պահանջներին, «Մետրոգիպրոտրանս» բաժնետիրական ընկերությունում (այսուհետ տեքստում՝ «Մետրոգիպրոտրանս» ԲԸ, Ընկերություն) որոշվել է նախագծային փաստաթղթերի մշակման, նախահաշիվների թողարկման մեթոդաբանությունը, հաստատվել են պարտադիր կատարման ենթակա մի շարք փաստաթղթեր՝ մանրամասնող տեխնոլոգիաներ (ՏՊ) և կարգեր (ՈՔ), այդ թվում՝

- ՈՔ-8.1/01–2017 «Պլանավորման կարգը»,
- ՈՔ-8.2.2/01–2017 «Պայմանագիր կնքելու կարգը»,
- ՏՊ-8.5.1/03–2017 «Ինժեներագեոդեզիական հետազոտությունների տեխնոլոգիան»,
- ՏՊ-8.5.1/07–2018 «Մետրոպոլիտենի գծերի, ստորգետնյա կառույցների և փոստրակային տիպի կառույցների նախագծման ինժեներագեոդեզիական հետազոտությունների տեխնոլոգիան»;
- ՈՔ-8.5.1/08–2018 «Ինժեներական հետազոտությունների ծրագիր կազմելու կարգը»,
- ՈՔ-8.5.1/09–2018 «Նախագծահետազոտական աշխատանքների կատարման օպերատիվ վերահսկողություն կազմակերպելու կարգը»,
- ՈՔ-8.5.1/02–2017 «Փաստաթղթերի մշակման, ձևակերպման և փոփոխություններ կատարելու կարգը»,
- ՈՔ-8.4/03–2018 «Ենթակապալառու կազմակերպությունների նախագծային արտադրանքի գնման կարգը»,
- ՈՔ-8.5.1/05–2019 «Նախագծահետազոտական աշխատանքների նախահաշիվները կազմելու, քննարկելու և համաձայնեցնելու կարգը և հեղինակային հսկողությունը»,
- ՈՔ-8.5.1/10–2018 «Աշխատանքների ծավալների փոխանցման և նախահաշվային բաժնի կողմից նախահաշիվների թողարկման կարգը»,
- ՈՔ-8.6/01–2017 «Նորմահսկողություն իրականացնելու կարգը»,
- ՈՔ-8.6/02–2018 «Նախագծային արտադրանքի որակի վերահսկողության իրականացման կարգը»,
- ՈՔ-8.2.1/01–2018 «Փորձագիտական մարմինների համաձայնեցմամբ և եզրակացությամբ նախագծի ճշգրտման կարգը»,
- ՈՔ-8.2.1/02–2018 «Փորձագիտության դիտողությունների հիման վրա նախահաշվային փաստաթղթերի ճշգրտման կարգը»,
- ՈՔ-8.5.4/01–2018 «Նախագծանախահաշվային փաստաթղթերի ձևակերպման, լրակազմման, պատվիրատուներին ուղարկելու և արխիվ հանձնելու կարգը» և այլն:

Փաստաթղթերը համապատասխանում են ISO 9001-2015 միջազգային ստանդարտի բոլոր պահանջներին (Հավաստագիր № РОСС 04ЖПК1.RU.1301.MK0005, 16.09.2018)՝ ըստ անվանացանկի, և գտնվում են կառավարվող վիճակում:

Նախագծման մեթոդների և սկզբունքների, նախագծերի ստեղծման ընթացքում կիրառվող կանոնների և ընթացակարգերի ամբողջությունը, որը նկարագրված է վերոնշյալ փաստաթղթերում, թույլ է տալիս արդյունավետ տեխնիկական որոշումներ կայացնել, նվազեցնել ՇՄԱ (շինմոնտաժային աշխատանքների), օգտագործվող նյութերի արժեքն ու ծավալները, ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և այլն:

«Մետրոգիպրոտրանս» ԲԸ-ում գործող՝ ինժեներական հետազոտությունների կատարման և նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման մեթոդաբանությունն իր մեջ միավորում է երկու մոտեցում նախագծի կենսացիկլի նկատմամբ՝ կասկադային և իտերացիոն մոդելները:

Աշխատանքների կատարման մեթոդաբանությունը (հնարքներ, ընթացակարգեր, ալգորիթմեր, տեխնոլոգիաներ) ենթակա է պարտադիր կատարման Նախագծերի գլխավոր ինժեներների (ԳՈՔ, ՆԳԻ) և «Մետրոգիպրոտրանս» ԲԸ բոլոր ստորաբաժանումների աշխատակիցների կողմից:

II. Նախագծահետազոտական աշխատանքների կատարման մեթոդաբանություն

Նախագիծը մշակվելու է Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան. նախագծի կազմն և բովանդակությունն ընդունվելու են մրցութային փաստաթղթերի տեխնիկական մասին խիստ համապատասխան:

- Նախագիծը կատարվելու է 4 փուլով:
- Փուլ 1՝ սկզբնական փուլ, որը ներառում է բոլոր նախագծային հետազոտությունները, մետրոպոլիտենի կառույցների նախկինում կառուցված և չհաջողությամբ շինարարական կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի գնումը, ինժեներագեոդեզիական, ինժեներաերկրաբանական, ինժեներա-հիդրոդերևույթաբանական և ինժեներաէկոլոգիական հետազոտությունները, սկզբնական հաշվետվության կազմումը և փոխանցումը Պատվիրատուին:
- Փուլ 2՝ նախնական հաշվետվության կազմում և փոխանցում Պատվիրատուին, որը ներառում է շրջակա

վերաբնակեցման ծրագիրը, մշակութաինագիտական հետազոտությունները և այլն, ինչպես նաև հանրային լուսմեր անցկացնելը:

Փուլ 3՝ Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում վերջնական նախագծի կազմում և փոխանցում Պատվիրատուին:

Փուլ 4՝ միջգերատեսչական համալիր փորձաքննությունում նախագծի ուղեկցման փուլ:
Աշխատանքների կատարման ժամկետները՝ ըստ փուլերի, ներկայացված են սույն Մեթոդաբանության թիվ 1 Հավելվածում:

Տեխնիկական բնութագրերով որոշված աշխատանքների ժամանակին և որակյալ կատարման նպատակով «Մետրոգիպրոտրանս» ԲԸ-ն կապահովի նախագծահետազոտական աշխատանքների կազմակերպման և կատարման որակի վերահսկողության անհրաժեշտ մակարդակը:

Նախագծահետազոտական աշխատանքների կատարման տեխնոլոգիական գործընթացը պայմանականորեն բաժանվելու է հետևյալ փուլերի՝

- 1-ին փուլ՝ նախապատրաստական փուլ,
- 2-րդ փուլ՝ զննումների, ինժեներական հետազոտությունների, նախագծային աշխատանքների կատարում,
- 3-րդ փուլ՝ նախագծի լրակազմում և թողարկում,
- 4-րդ փուլ՝ նախագծի համաձայնեցում, հանձնում Պատվիրատուին, հատուկ միջգերատեսչական համալիր փորձաքննության ընթացքում նախագծի ուղեկցում:

Նախքան նախագիծը մշակելը «Մետրոգիպրոտրանս» ԲԸ Նախագահը Ընկերության ղեկավար կազմի և արտադրական ստորաբաժանումների պետերի հետ խորհրդակցություն կիրառվի նախագծի նախապատրաստման արդյունքները քննարկելու և նպատակային խնդիրներն առաջադրելու նպատակով:

Նախքան նախագծային աշխատանքներն սկսելը ГИП-ն բոլոր արտադրական ստորաբաժանումներին կտրամադրի նախագծի մշակման առաջադրանքը:

Նախագծի մշակումն իրականացվելու է մշակման տեխնոլոգիան ու ժամկետները սահմանող հետևյալ ժամանակացույցներով՝

- նախագծի մշակման ու թողարկման հիմնական փուլերի կատարման ժամանակացույց (կազմվում է պլանային արտադրական բաժնի կողմից՝ նախագծվող բոլոր օբյեկտների հետ համատեղ, համաձայնեցվում է ГИП-ի, առաջին փոխնախագահ - «Մետրոգիպրոտրանս» ԲԸ գլխավոր ինժեների հետ և հաստատվում Նախագահի կողմից),
- նախագծի մշակման ժամանակացույց (կազմվում է ГИП-ի կողմից, համաձայնեցվում բաժինների պետերի և հաստատվում առաջին փոխնախագահ - «Մետրոգիպրոտրանս» ԲԸ գլխավոր ինժեների կողմից)
- արտադրական բաժինների և մասնագիտությունների միջև փոխգործակցության ժամանակացույց (կազմվում է ГИП-ի կողմից, համաձայնեցվում բաժինների պետերի և հաստատվում՝ առաջին փոխնախագահի կողմից):

Նախագծի մշակումն իրականացվելու է այնպիսի կարգով, որը կապահովի վերջինիս առանձին մասերի մշակման հնարավոր զուգահեռությունը՝ հաշվի առնելով աշխատանքների առավելագույն ավտոմատացումը:

Հատուկ ուշադրություն կդարձվի փոխգործակցության ժամանակացույցներով սահմանված՝ հարակից բաժինների ու բաժնի ներսում հարակից մասնագիտությունների միջև տեխնոլոգիական կապերի և արտադրական բաժիններից մեկից մյուսին ու բաժնի ներսում միջանկյալ կյուբերի փոխանցման ժամկետների խիստ պահպանմանը: Արտադրական առաջադրանքների փոխանցումն իրականացվելու է միայն ГИП-ի ստորագրությամբ:

1. Նախապատրաստական փուլի աշխատանքների կատարման մեթոդաբանություն

Նախապատրաստական շրջանի հիմնական խնդիրը սահմանված ժամկետներում և բարձրորակ նախագծի մշակման համար անհրաժեշտ ելակետային տվյալների ստացումն ապահովող նախապատրաստական աշխատանքների կատարումը:

Նախապատրաստական աշխատանքներն ապահովում են՝

- զննումների և նախագծահետազոտական աշխատանքների պլանավորումը,
- նախագծի մշակման տեխնոլոգիան,
- անհրաժեշտ ելակետային տվյալները ժամանակին ստանալը,
- համաձայնեցումների կատարումը:

Նախապատրաստական աշխատանքներն ընդգրկում են՝

- նախագծի գլխավոր ինժեներ (ГИП, ՆԳԻ) նշանակելը,
- Տեխնիկական Առաջադրանքների և զննումների ու հետազոտությունների ծրագրերի կազմումը,
- օբյեկտի կազմում ընդգրկված համակարգերի ու կառույցների մասով Տեխնիկական Առաջադրանքների նախապատրաստումը,
- նախագծման համար ելակետային տվյալներ ստանալը,
- աշխատանքների կազմը որոշելը,
- մասնագետների խմբերի մուտքը տեղանք լրացուցիչ ելակետային տվյալներ ստանալու և աշխատանքների կատարման համար օպտիմալ պայմաններ ընտրելու նպատակով,
- մասնագիտացված ենթակապալառու կազմակերպությունների կողմից կատարման ենթակա աշխատանքների կատարման ժամկետների համաձայնեցումը,
- նախագծի մշակման մանրամասնած ժամանակացույցի կազմումը:

Նախագծային աշխատանքների պլանավորում

Նախագծային աշխատանքների պլանավորումը նախագծի մշակման կառավարման գործընթացի մի մասն է

փաստաթղթերում, տեխնիկական առաջադրանքում և փաստաթղթերի թողարկման ժամանակացույցում նշված պահանջներն ու պայմանները:

Նախագծային աշխատանքների պլանավորումը կատարվում է նախագծմանը նախապատրաստման փուլում: Նախագծի մշակման ժամանակացույցը կազմվելու է ГИП-ի կողմից, համաձայնեցվելու է արտադրական բաժինների պետերի կողմից, կիսատատվի համաձայն ПР-8.1/01-2017 փաստաթղթավորված ընթացակարգի:

Համակատարող ստորաբաժանումների միջև կազմակերպատեխնիկական փոխգործակցությունն ապահովվելու է նախագծի առանձին բաժինների մշակման առաջադրանքներ տալու միջոցով: Արտադրական առաջադրանքների փոխանցումն իրականացվելու է ГИП-ի կողմից հաստատվելուց հետո:

Փոխգործակցության ժամանակացույցներով սահմանված՝ հարակից բաժինների (ու բաժնի ներսում հարակից մասնագիտությունների) միջև տեխնոլոգիական կապերի և արտադրական բաժիններից մեկից մյուսին (ու բաժնի ներսում) միջանկյալ նյութերի փոխանցման ժամկետների պահպանման պատասխանատվությունը կրելու են արտադրական բաժինների պետերը:

Ելքային տվյալների մուտքային վերահսկողությունը

Ելքային տվյալների մուտքային վերահսկողությունն իրականացնում է Նախագծի գլխավոր ինժեները (ГИП, ՆԳԻ), ներգրավելով շահագրգիռ արտադրական ստորաբաժանումները:

Երևան քաղաքի Աջափնյակ թաղամասում մետրոպոլիտենի կայարանի շինարարության նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման դեպքում մուտքային վերահսկողության ենթակա են Տեխնիկական բնութագրերի թիվ 1.1 Հավելվածի 2.1 և 2.2 կետերում նշված փաստաթղթերը:

Պայմանագրի իրագործման համար ելակետային տվյալների մուտքային վերահսկողության իրականացման կարգը կանոնակարգված է «Մետրոգիպրոտրանս» ԲԸ-ի ПР-8.2.2/01-2017 «Պայմանագիր կնքելու կարգը», ПР-8.1/01-2017 «Պլանավորման կարգը» փաստաթղթերում:

Մուտքային վերահսկողության արդյունքները վավերացվում են փաստաթղթերի հանձնման-ընդունման ակտում և արտադրական ստորաբաժանումներին տրված առաջադրանքներում ГИП-ի դրված ստորագրությամբ:

Լրացուցիչ ելակետային տվյալների անհրաժեշտության հայտնաբերման դեպքում դրանք «Մետրոգիպրոտրանս» ԲԸ-ի կողմից գրավոր կպահանջվեն Պատվիրատուից:

Պատվիրատուի մոտ լրացուցիչ ելակետային տվյալներ տրամադրելու հնարավորության բացակայության դեպքում «Մետրոգիպրոտրանս» ԲԸ-ն լուծման տարբերակներ է մշակում և իրագործում ներկայացված խնդիրները փաստացի առկա տվյալների հիման վրա:

2. Մետրոպոլիտենի շինությունների նախկինում կառուցված շինարարական կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի գնման ու գնահատման մեթոդաբանությունը

Չնունը ներառելու է համալիր միջոցառումներ, որոնք թույլ կտան իրականացնել մետրոպոլիտենի մշտական և ժամանակավոր կառույցների (թունելային հատված) նախկինում կառուցված շինարարական կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի արատորոշում, կատարելով թունելների հետերեսարկային տարածության և գրունտային զանգվածի երկրաֆիզիկական (սեյսմակուստիկ) գնում և գեոդեզիական-մարկշեյքերական աշխատանքներ:

Կոնստրուկցիաների գնումը կատարվելու է երեք փոխկապակցված փուլով՝

- նախապատրաստում գնմանը,
- նախնական (տեսողական) գնում,
- մանրամասն (գործիքային) գնում:

Նախապատրաստական աշխատանքներ.

- ծանոթացում գնման օբյեկտներին, դրանց ծավալապլանավորման և կառուցողական լուծումներին, ինժեներաերկրաբանական հետազոտությունների նյութերին՝
- նախագծատեխնիկական փաստաթղթերի հավաքում և վերլուծություն,
- աշխատանքների ծրագրի կազմում (անհրաժեշտության դեպքում):

Նախնական (տեսողական) գնում.

կոնստրուկցիաների անընդհատ տեսողական գնում և արտաքին հատկանիշներով թերությունների ու վնասվածքների հայտնաբերում՝ անհրաժեշտ չափումներով, և դրանց արձանագրում:

Մանրամասն (գործիքային) գնում.

- կոնստրուկցիաների, դրանց տարրերի ու հանգույցների անհրաժեշտ երկրաչափական պարամետրերի չափման աշխատանքներ, այդ թվում՝ գեոդեզիական սարքերի կիրառմամբ (հնարավոր է լազերային տեսաներաժման կատարում),
- թերությունների ու վնասվածքների պարամետրերի գործիքային որոշում,
- հիմնական կրող կոնստրուկցիաների և դրանց տարրերի նյութերի ամրության փաստացի բնութագրերի որոշում,
- կոնստրուկցիաներում թերությունների ու վնասվածքների առաջացման պատճառների վերլուծություն,
- գննվող կոնստրուկցիաների կողմից ընկալվող շահագործման իրական բեռնվածքների և ազդեցությունների որոշում՝ հաշվի առնելով գրունտային հիմքի դեֆորմացիաների ազդեցությունը,
- կառույցի և դրա առանձին կոնստրուկցիաների հաշվարկային սխեմայի մշակում,
- շահագործման բեռնվածքներ ընկալող կրող կոնստրուկցիաներում հաշվարկային ճիգերի որոշում,
- կոնստրուկցիաների կրողունակության գնահատում՝ գնման և ստուգողական հաշվարկների արդյունքների վերլուծության արդյունքներով,

գնման արդյունքում երաշխավորվելու է մեթոդական փաստաթուղթի նախագծում:

«Մետրոգիպոլտրանս» ԲԸ-ն կապահովի ինժեներական զննման աշխատանքների պլանավորման ու կատարման արդյունավետ կազմակերպում:

Ընտրվելու են զննման ժամանակակից մեթոդիկաներ և կիրառվող սարքավորումներ, աշխատանքներ կատարելու համար կնշանակվեն որակավորված աշխատակիցներ, հաշվի կառնվի զննվող օբյեկտների շահագործման բնույթը:

Չնկունների համար ելակետային տեղեկատվություն են հանդիսանում հետևյալ փաստաթղթերը՝

- Տեխնիկական Առաջադրանքը,
- Չննման օբյեկտների վերաբերյալ տեխնիկական և նախագծային փաստաթղթերը,
- Չննման ակտերը,
- Նախկինում կատարված զննումների արդյունքները պարունակող փաստաթղթերը,
- Ինժեներատեխնիկական հետազոտությունների նյութերը,
- Երկրաէներգետիկայի:

Չննման շրջանակներում կատարվելու են կառույցների կողմ կոնստրուկցիաների տեխնիկական գնահատման աշխատանքներ, այդ թվում՝

- թունելների կողմ և պարսպող կոնստրուկցիաների,
- հիմքի գրունտների,
- կապակցող կոնստրուկցիաները և կոշտության տարրերը,
- ինժեներական համակարգերի հենարանային կոնստրուկցիաները և այլն:

Չննման ընթացքում՝ ըստ անհրաժեշտության, կատարվելու է հիմնական կողմ կոնստրուկցիաների բացում դրանց կցվածքների, հանգույցների և միացումների հատվածներում՝ նշված հատվածներում կոնստրուկցիաների ամրության ռետուրը հայտնաբերելու և հաշվարկային սխեման որոշելու նպատակով:

Չննումը կատարվելու է տեսողական, ուլտրաձայնային և այլ մեթոդների և դրանց զուգակցման միջոցով: Հիմնական կոնստրուկցիոն նյութերի ամրության որոշումն իրականացվելու է ջրայքայող մեթոդներով:

«Մետրոգիպոլտրանս» ԲԸ-ի կողմից կատարվելու են՝

- կոնստրուկցիաների, դրանց տարրերի ու հանգույցների անհրաժեշտ երկրաչափական պարամետրերի չափման աշխատանքներ,
- թունելների թերությունների ու վնասվածքների եզրաչափային չափերի պարամետրերի գործիքային որոշում,
- հիմնական կողմ կոնստրուկցիաների և դրանց տարրերի նյութերի ամրության փաստացի բնութագրերի որոշում (վերահսկողության ջրայքայող մեթոդներով),
- հետերեսարկային տարածության վիճակի երկրաֆիզիկական զննում,
- կոնստրուկցիաներում թերությունների ու վնասվածքների առաջացման պատճառների վերլուծություն,
- զննվող կոնստրուկցիաների կողմից ընկալվող շահագործման իրական բեռնվածքների և ազդեցությունների որոշում՝ հաշվի առնելով գրունտային հիմքի դեֆորմացիաների ազդեցությունը,
- կառույցների և առանձին կոնստրուկցիաների հաշվարկային սխեմայի մշակում,
- շահագործման բեռնվածքներ ընկալող կողմ կոնստրուկցիաներում հաշվարկային ճիգերի որոշում,
- կոնստրուկցիաների կողողունակության գնահատում զննման և ստուգողական հաշվարկների արդյունքների վերլուծության արդյունքներով,
- զննման արդյունքների վերաբերյալ եզրահանգումներ և առաջարկվող միջոցառումներ պարունակող տեխնիկական հաշվետվության կազմում:

Չննվող կառույցների ստուգողական կառուցողական վերլուծությունը կատարվելու է Լիրա, SCAD և այլ հավաստագրված հաշվարկային համալիրներով:

Հաշվետվություն աշխատանքների ընթացքի մասին

Նախագծի կազմում կներկայացվի Տեխնիկական հաշվետվությունը: Չննման արդյունքներով հաշվետվությունում կներկայացվեն՝

- հատակագծերը, կտրվածքները, թերությունների ու վնասվածքների ամփոփագրերը՝ դրանցից առավել բնորոշների լուսանկարներով,
 - երկաթբետոնե և այլ կոնստրուկցիաներում ճեղքվածքների տեղակայման սխեմաներն ու տվյալները դրանց բացվածքի մասին,
 - բոլոր վերահսկվող հատկանիշների արժեքները, որոնց որոշումը նախատեսված էր զննման ծրագրով,
 - ստուգողական հաշվարկների արդյունքները,
 - կոնստրուկցիաների վիճակի գնահատումը՝ կոնստրուկցիաների ամրացման, թերությունների ու վնասվածքների, ինչպես նաև դրանց առաջացման պատճառների վերացման միջոցառումներով:
- Տվյալ ցանկը կարող է լրացվել՝ կախված կոնստրուկցիաների վիճակից, զննման պատճառներից ու խնդիրներից:

3. Ինժեներական հետազոտություններ կատարելու մեթոդաբանություն

Համալիր ինժեներական հետազոտությունների իրականացումն ուղղված է մի շարք նախագծային խնդիրների լուծմանը, այդ թվում՝

- տվյալ շրջանում օբյեկտի շինարարության տեխնիկական հնարավորության և տնտեսական նպատակահարմարության հիմնավորումը,
- նախագծվող օբյեկտի տեղակայման հնարավոր տարբերակների համեմատությունը և դրանցից օպտիմալի ընտրությունը,
- նախագծվող օբյեկտի շենքերի ու շինությունների՝ ընտրված տարբերակով դասավորման հիմնավորումը,
- շենքերի ու շինությունների հիմքերի ու միջավայրի հաշվարկային սխեմաների փաստարկում,

- ինժեներագեոդեզիական հետազոտություններ,
- ինժեներատեխնիկական հետազոտություններ,
- ինժեներա-հիդրոօդերևութաբանական հետազոտություններ,
- ինժեներատեխնիկական հետազոտություններ, ներառյալ գրունտների վերաբերյալ լաբորատոր էկոլոգիական հետազոտությունը:

Ինժեներագեոդեզիական հետազոտությունները կատարվելու են՝ հաշվի առնելով առկա տեղագրագեոդեզիական հիմքը, տեխնիկական առաջադրանքի և աշխատանքների ծրագրի պահանջները,

Ինժեներատեխնիկական հետազոտությունները կատարվելու են՝ հաշվի առնելով արխիվային և ֆոնդային նյութերը և տեխնիկական առաջադրանքի և աշխատանքների ծրագրի պահանջները,

Ինժեներատեխնիկական հետազոտությունները կատարվելու են՝ հաշվի առնելով արխիվային նյութերը, տեղեկատվության գրական աղբյուրները և մասնագիտացված կազմակերպությունների եզրակացությունները և տեխնիկական առաջադրանքի և աշխատանքների ծրագրի պահանջները,

Ինժեներա-հիդրոօդերևութաբանական հետազոտությունները կատարվելու են՝ հաշվի առնելով Երևան քաղաքի հիդրոօդերևութաբանական ծառայության տվյալները և տեխնիկական առաջադրանքի և աշխատանքների ծրագրի պահանջները:

Ինժեներական հետազոտությունների ծրագրերի կազմում

«Մետրոգիայրոտրանս» բաժնետիրական ընկերության ինժեներական հետազոտությունների ծրագրերը կազմվելու միասնական կարգը սահմանելու համար մշակվել է ՈՒՔ-8.5.1/08-2018 «Ինժեներական հետազոտությունների ծրագիրը կազմելու կարգը» փաստաթղթավորված ընթացակարգը:

Ինժեներական հետազոտությունների ծրագրերը (այսուհետ՝ Ծրագրեր) կկազմվեն ինժեներական գեոդեզիայի բաժնի (ՈՒՔ, ԻԳ) և ուղեգծի, շահագործման և գեոդեզիայի բաժնի (ՈՒՔԳ, ՈՒՇԳԾ) կողմից տեխնիկական առաջադրանքի հիման վրա, կկազմվեն ու կստորագրվեն ԴՈՒՔ-ի, ՈՒՔ և ՈՒՔԳ բաժինների պետերի կողմից և կհաստատվեն «Մետրոգիայրոտրանս» ԲԸ գլխավոր ինժեների կողմից:

Ծրագրերում ներկայացվելու են հետազոտական աշխատանքների նախահաշվային արժեքի որոշման համար անհրաժեշտ տեղեկություններ:

Դաշտային աշխատանքների նախնական արդյունքներով պայմանավորված՝ Ծրագրերում կատարվելու են հետազոտությունների ամբողջականության ու որակի բարձրացման ուղղված փոփոխություններ:

Ինժեներատեխնիկական հետազոտությունների ծրագրերի ձևակերպում

Ծրագրերը ձևակերպվելու են առանձին փաստաթղթերի տեսքով, որոնց կից ներկայացվելու են տեխնիկական առաջադրանքի պատճենները և հետազոտություններ կատարելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր:

Ծրագիրը կազմվելու է հետևյալ հերթականությամբ՝

- կազմ,
- տիտղոսաթերթ,
- տեքստային մաս,
- հավելվածների ցանկ,
- գրականության ցանկ,
- բովանդակություն,
- հավելվածներ (առկայության դեպքում):

Գրաֆիկական հավելվածները բրոշուրավորվելու են տեքստային մասի հետ նույն գրքում:

Նախապատրաստում դաշտային աշխատանքներին

Նախքան դաշտային աշխատանքներ սկսելը նախատեսվող դաշտային աշխատանքների տարածքի հսկողության պատասխանատու կազմակերպությունների և ինժեներական հաղորդակցությունների պահպանության պատասխանատու կազմակերպությունների հետ համաձայնեցվելու են հորատանցքների հորատման վայրերը, ստատիկ և դինամիկ զոնդավորման կետերը: Նախքան դաշտային աշխատանքներ սկսելը ձևակերպվելու են հողային աշխատանքներ կատարելու հրամանաթղթեր: Դաշտային աշխատանքների ավարտից հետո ձևակերպվելու է հրամանաթղթերի փակումը:

Շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսվելու է բոլոր հորատանցքների ջանադիր տամպոնաժ, որը կբացառի ստորգետնյա ջրերի հորիզոնների միացումը և մակերևութային ջրերով դրանց աղտոտումը:

Նախքան աշխատանքներն սկսելը հրապարակներն ու աշխատանքների վտանհավոր գոտիները՝ դրանց սահմաններից դուրս պարսրվելու են նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Նախկան աշխատանքներն սկսելը հրապարակների մուտքերի մոտ տեղադրվելու են տեղեկատվական վահանակներ, որոնց վրա նշվելու են օբյեկտի անվանումը, աշխատանքների պատվիրատուի, կատարողի անվանումը, աշխատանքների պատասխանատու կատարողի ազգանունը, պաշտոնը և հեռախոսի համարները:

3.1. Նախագծային փաստաթղթերի մշակման նպատակով ինժեներագեոդեզիական հետազոտություններ կատարելու մեթոդաբանություն

Տեղանքի տեղագրական նկարահանումն իրականացվելու է թվային և գրաֆիկական տեսքով ինժեներատեղագրական հատակագծերի ստեղծման նպատակով (թղթային և էլեկտրոնային կրիչներով՝ DWG կամ DFX ձևաչափերով)՝ ընդգրկելով նախագծվող տարածքի սահմաններից դուրս նվազագույնը 150 մետր տարածք, և հանդիսանալու է նախագծման և շինարարության հիմք:

Ինժեներագեոդեզիական հետազոտությունները ներառելու են աշխատանքների հետևյալ տեսակները՝

- նախորդ տարիների ինժեներագեոդեզիական հետազոտությունների նյութերի և ֆոնդային տեղագրագեոդեզիական նյութերի հավաքում, մշակում և համակարգում,

- հետազոտությունների արդյունքների կամերալ մշակում,
- հաշվետվության կազմում:

Արհիվային և ֆոնդային նյութերի հավաքում

Աշխատանքների ընթացքում կհավաքվեն, կմշակվեն, կհամակարգվեն ու կվերլուծվեն նախորդ տարիների ինժեներագեոդեզիական հետազոտությունների արհիվային և ֆոնդային նյութերը, այդ թվում՝ տեղագրագեոդեզիական նյութերը: Վերոնշյալ նյութերը նաև կվերափոխվեն էլեկտրոնային տեսքի:

Արհիվային տվյալների հավաքման հետ մեկտեղ նախատեսվում է իրականացնել ուղեգծի տեղագիտական երթուղային գնում՝ գեոմորֆոլոգիական իրավիճակի փոփոխությունների որոշման, արհիվային և ֆոնդային տեղագրագեոդեզիական [նյութերում] բացակայող շինությունների հայտնաբերման նպատակով:

Նախատեսվում է 1:2000 Մ և 1:500 Մ տեղագրական նկարահանում (ՇՄ 47.13330.2012 կ. 5.4.2)՝ նշելով ստորգետնյա հաղորդակցությունները պայմանական կոորդինատային համակարգում:

Տեղանքի տեղագրական նկարահանումը կատարվելու է նախագծի մշակման հիմք հանդիսացող ինժեներատեղագրական հատակագծերը թվային և գրաֆիկական տեսքով ստեղծելու նպատակով:

Տեղագրական նկարահանումը կատարվելու է տախտեմտորիկ մեթոդով, վերգետնյա և օդային լազերային սկանավորմամբ, ինչպես նաև տարբեր մեթոդների համադրմամբ:

Տեղագրական նկարահանումը կատարում են, որպես կանոն, տարվա բարենպաստ եղանակին, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրի ժամկետներով: Թույլատրվում է նկարահանումը ձյան ծածկույթի (մակասառցաշերտի)՝ ստեղծվող ինժեներատեղագրական հատակագծի ռեյիեֆի հատվածքի բարձրության առավելագույնը 1/3-ի չափով բարձրության դեպքում, ընդ որում, ստեղծվող հատակագծերը ենթակա են թարմացման տարվա բարենպաստ եղանակին:

Ստորգետնյա հաղորդակցությունների նկարահանման և հետազոտման աշխատանքներն ընդգրկված են տեղագրական նկարահանման կազմում:

Ինժեներական հաղորդակցությունների ու շինությունների հատակագծերը կկազմվեն կատարողական գծագրերի տվյալների, կատարողական և ստուգողական գեոդեզիական նկարահանումների նյութերի, ինչպես նաև ստորգետնյա հաղորդակցությունների ու շինությունների նկարահանման և դաշտային գնման արդյունքների հիման վրա:

Կկազմվեն հենարանների եսքիզները, կորոշվեն ստորգետնյա և վերգետնյա հաղորդակցությունների ու շինությունների քանակական և որակական բնութագրերը, ջրհորների ու կամերաների մակարդակն գնումը:

Հետազոտությունների նյութերով հաշվետվություն կկազմվի, որը պարունակելու է տեքստային և գրաֆիկական մասեր:

Հաշվետվության տեքստային մասը կազմված կլինի հետևյալ գլուխներից՝

- ներածություն,
- տեղագրագեոդեզիական ուսումնասիրվածություն,
- տեղեկություններ կատարված աշխատանքների տեխնոլոգիայի և մեթոդիկայի մասին,
- եզրակացություն (հետազոտությունների արդյունքների հակիրճ նկարագրություն և հանձնարարականներ),
- օգտագործված նյութերի ցուցակը:

Գրաֆիկական մասը կազմված կլինի հետևյալ նյութերից՝

- տեղագրագեոդեզիական ուսումնասիրվածության քարտեզագրամը՝ հետազոտությունների հատվածների սահմաններով,
- ստեղծված պլանային-բարձրաբերձ հենքային և (կամ) նկարահանման գեոդեզիական ցանցի սխեմաները՝ նշելով ելքային կետերի տեղակայումները,
- կատարված աշխատանքների քարտեզագրամը՝ հետազոտությունների հատվածների սահմաններով՝ համակցված ստեղծված պլանային-բարձրաբերձ գեոդեզիական ցանցի սխեմայի հետ,
- ելքային գեոդեզիական կետերի (մակնիշների, ռեպեռների և այլն) ամփոփագիրն ու ակտերը՝ օգտագործման համար դրանց պիտանիության գնահատմամբ, գեոդեզիական կետերի նկարագրություններն ու ուղվանկարներն ըստ գնման արդյունքների,
- DWG կամ DFX ձևաչափերով 1:2000 Մ տեղագրական հատակագծերը,
- DWG կամ DFX ձևաչափերով 1:500 Մ տեղագրական հատակագծերը,
- ինժեներատեղագրական հատակագծերի հետ համակցված կամ առանձին նախապատրաստված՝ ստորգետնյա շինությունների հատակագծեր (սխեմաներ)՝ տեխնիկական բնութագրերով, որոնք համաձայնեցված են շահագործող կազմակերպությունների հետ
- շենքերի, շինությունների հիմքերի, երկրի մակերեսի և լեռնային ապարների ստվարաշերտի նստվածքների ու դեֆորմացիաների դիտարկումների արդյունքների գրաֆիկները:

Նախագծվող գծային օբյեկտի ուղեգծի վերաբերյալ տեխնիկական հաշվետվությունը լրացուցիչ կարող է պարունակել՝

- նախագծվող գծային օբյեկտի ուղեգծի վերջնակետերին (ենթակայաններին և այլն) մոտեցումների հատակագծեր,
- նախագծվող գծային օբյեկտի ուղեգծի համակցված հատակագիծը (թվային և գրաֆիկական տեսքով)՝ առկա ինժեներական ցանցերով,
- գծային օբյեկտի ուղեգծի երկայնական և լայնական պրոֆիլները,

- պտույտի անկյունների, ուղիղ և կորած (ուղիղ անկյունների), հատվող հանդերի և անտառների, ջրահոսքերի, ավտոմոբիլային ճանապարհների և երկաթուղիների, վերգետնյա և ստորգետնյա շինությունների, այդ թվում՝ քանդվող շինությունների և օտարվող հանդերի, ծորակների, լեռնագոգերի, ճահճացած և սարալանջային հատվածների ամփոփագրերը, ուղեգծերի տեխնիկական ցուցանիշները:

Տեխնիկական հաշվետվության տեքստային հավելվածները որոշվելու են աշխատանքների ծրագրով և պարունակելու են՝

- տվյալներ չափման միջոցների չափագիտական ստուգաչափման (տրամաչափման) մասին, որը կատարվել է նախքան դաշտային աշխատանքներն սկսելը,
- կետերի և ռեպեռների կենտրոնների հիմնադրման քարտերը,
- հաշվարկների, հավասարեցման և ճշգրտության գնահատման նյութերը,
- մշտական նշաններով ամրագրված գեոդեզիական ցանցերի կետերի կոորդինատների ու բարձրությունների կատալոգները,
- նկարահանման երկարատև հիմնավորման կետերի կոորդինատների կատալոգները (կառուցապատողի կամ տեխնիկական պատվիրատուի առաջադրանքում նման պահանջի առկայության դեպքում),
- լեռնային մշակումների տեղակայման կետերի և ինժեներական հետազոտությունների այլ տեսակների դիտարկումների կետերի կոորդինատների ու բարձրությունների կատալոգները,
- շենքերի, շինությունների հիմքերի ստվածքների ու դեֆորմացիաների, երկրի մակերեսի տեղաշարժերի և վտանգավոր բնական գործընթացների գեոդեզիական դիտարկումների արդյունքների ամփոփագրերը,
- ինժեներական հաղորդակցությունների ցանցերի ամփոփագիրը, որը համաձայնեցված է շահագործող կազմակերպությունների ներկայացուցչի հետ,
- երկարաժամկետ ամրագրված գեոդեզիական կետերի պահպանության դիտակետերի հանձնման ակտը,
- աշխատանքների դաշտային (կամերայ) վերահսկողության և ընդունման ակտը:

Տեղագրական նկարահանման արդյունքում ստեղծված ինժեներատեղագրական հատակագիծը (թղթային և էլեկտրոնային կրիչներով՝ DWG կամ DFX ձևաչափերով), որակի վերահսկողության և աշխատանքների ընդունման նյութերը կընդգրկվեն «Մետրոգիպոտրանս» ԲԸ-ի կողմից նախապատրաստվելիք տեխնիկական հաշվետվության և էլքային տվյալների կազմում:

3.2. Նախագծային փաստաթղթերի մշակման նպատակով ինժեներատեղագրական հետազոտություններ կատարելու մեթոդաբանություն

Ինժեներատեղագրական հետազոտությունները կատարվելու են նախագծվող շինարարության երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների որոշման, գրունտների հատկությունների ֆիզկամեխանիկական ցուցանիշների որոշման և վտանգավոր երկրաբանական գործընթացների ու երևույթների գնահատման նպատակով:

Նախատեսվող շինարարության շրջանում մինչև 100.0 մ խորությամբ տարածված են չորրորդական և նեոգենային համակարգերի նստվածքներ:

Չորրորդական նստվածքները ներկայացված են ժամանակակից այլուվիալ նստվածքներով, որոնք ներկայացված են Հրազդան գետի փոքր հզորության (մինչև 4-6 մ) դարատափի ավազային-կավավազային և ճալքաքարոտային նստվածքներով:

Դրանցից ներքև գտնվում են պլեյստոցենի (նեոպլեյստոցեն, վերին, միջին և ստորին յարուներ) կիսաժայռային և ժայռային նստվածքներ, որոնք ներկայացված են անդեզիտաբազալտներով, քվարց պարունակողներով՝ սյունածև անջատություններով:

Ավելի ներքևում գտնվում են նեոգեն համակարգի նստվածքները, որոնք ներկայացված են դոլերիտային բազալտներով, մանր գաստրոպոդային և օօլիտային կրաքարերով:

Հիդրոերկրաբանական հետազոտությունների արդյունքում հարակից հատվածում արձանագրվել է, որ ստորգետնյա ջրերի ստատիկ մակարդակը գտնվում է երկրի մակերևույթից 9 մետր խորության վրա: Ջրատար հորիզոնը շատ ջրառատ է: Հարկ է նշել, որ ջրատար հորիզոնը միասնական համակարգ է կազմում, որը կապակցված է Հրազդան գետի ընդհանուր ջրաքաշման դաշտավայրի հետ:

Աշխատանքների շրջանը վերաբերում է սեյսմակտիվ տարածաշրջանին և ընդգրկված է Միջերկրական սեյսմիկ գոտում:

Ուսումնասիրվող տարածքի ինժեներատեղագրական պայմանները՝ ըստ բարդության աստիճանի, դասվում են 3-րդ կատեգորիային՝ բարդ (հավելված Դ, աղյուսակ Դ1, ՇՈՒ 47.13330.2016):

Աշխատանքների շրջանը վերաբերում է սեյսմակտիվ տարածաշրջանին և ընդգրկված է Միջերկրական սեյսմիկ գոտում:

Ինժեներատեղագրական հետազոտությունները ներառելու են աշխատանքների հետևյալ տեսակները՝

- ինժեներատեղագրական հետազոտությունների ծրագրի մշակում,
- նախորդ տարիների ինժեներատեղագրական հետազոտությունների նյութերի հավաքում, մշակում և համակարգում, դրանք էլեկտրոնային տեսքի վերափոխում, այդ թվում՝ կառուցված թունելներին հարակից տարածքում,
- տարածքի տեղագիտական գնում,
- հետախուզական հորատանցքների հորատում,
- գրունտների արտաքին և ռեզոնանսային զոնայում շրտամասին և լիտոստրատիկոնի արտաքին հետազոտություններ:

- գրունտների հատկությունների լաբորատոր հետազոտություններ և ստորգետնյա ջրերի քիմիական բաղադրության որոշում,
- գրունտների կոռոզիոն ակտիվության և ստորգետնյա ջրերի կոռոզիոն ագրեսիվության որոշում,
- երկրաֆիզիկական հետազոտություններ,
- գործիքային պլանային նշահարում և մշակումների պլանային-բարձրաբերձ տեղակապում,
- հետազոտությունների արդյունքների կամերալ մշակում,
- տեխնիկական հաշվետվության կազմում:

Մինչև աշխատանքներն սկսելը կմշակվի ինժեներաերկրաբանական հետազոտությունների ծրագիրը և կհամաձայնեցվի Պատվիրատուի հետ:

Արխիվային և ֆոնդային նյութերի հավաքում

Նախատեսվող շինարարության դիտարկվող հատվածի ինժեներաերկրաբանական պայմանների ուսումնասիրվածությունը որոշվում է քաղաքի ինժեներաերկրաբանական նկարահանմամբ:

Աշխատանքների ընթացքում կհավաքվեն, կմշակվեն, կհամակարգվեն ու կվերլուծվեն նախորդ տարիների ինժեներաերկրաբանական հետազոտությունների արխիվային և ֆոնդային նյութերը, այդ թվում՝ ինժեներաերկրաբանական հետազոտությունների քարտեզագրման նյութերը: Բոլոր հավաքված նյութերը կվերափոխվել էլեկտրոնային տեսքի՝ WORD կամ DWG ձևաչափով:

Տարածքի տեղագիտական գննում

Արխիվային տվյալների հավաքման հետ մեկտեղ նախատեսվում է ուղեգծի տեղագիտական երթուղային գննում՝ հիմնական գեոմորֆոլոգիական ձևերի, մշտական և ժամանակավոր ջրահոսքերի առկայության որոշման, մակերևույթին բացասական ինժեներաերկրաբանական գործընթացների բացահայտման, հորատման աշխատանքներ և երկրաֆիզիկական ու դաշտային հետազոտություններ կատարելու վայրերի որոշման նպատակով:

Գեոմորֆոլոգիական առումով նախատեսվող շինարարության հատվածը բարդ կառուցվածք ունի և գտնվում է Զրազդան գետի ձորի սահմաններում:

Գործիքային նշահարում և մշակումների տեղակապում

Նախատեսվում է հետախուզական հորատանցքների, ստատիկ զոնդավորման, շտամպային փորձարկումների կետերի, երկրաֆիզիկական պրոֆիլների պլանային նշահարում և պլանային-բարձրաբերձ տեղակապում:

Ինժեներաերկրաբանական մշակումներն ու այլ դիտակետերը տեղանքում իրագործելու և պլանային-բարձրաբերձ տեղակապման ճշգրտությունը հենքային և նկարահանման գեոդեզիական ցանցերի մոտակա կետերի նկատմամբ կսահմանվի աշխատանքների ծրագրում: Ընդ որում, օգտագործվելու են հստակ եզրագծերի նկարահանման դեպքում կիրառվող գեոդեզիական եղանակները:

Պաշտային աշխատանքների կազմակերպում

Նախքան դաշտային աշխատանքներն սկսելը անհրաժեշտ համաձայնեցումներ կկատարվեն ուսումնասիրվող տարածքի և առկա հաղորդակցությունների պատասխանատու ծառայությունների հետ:

Շրջակա միջավայրի պահպանության նպատակով հորատման ավարտից հետո նախատեսվում է բոլոր հորատանցքների ջանադիր տամպոնաժ, որը կբացառի ստորգետնյա ջրերի հորիզոնների միացումը և վերգետնյա ջրերով դրանց աղտոտումը:

Բոլոր աշխատանքները կատարվելու են՝ պահպանելով աշխատանքի, էլեկտրական և հրդեհային անվտանգության պահանջները: Հետազոտությունները կատարվելու են ՇՀՈՒՄ 12-04-2002 «Աշխատանքի անվտանգությունը շինարարությունում. Մաս 2. Շինարարական արտադրություն» և ՇՀՈՒՄ 12-03-200 «Աշխատանքի անվտանգությունը շինարարությունում. Մաս 1. Ընդհանուր պահանջներ» փաստաթղթերի 6-րդ կետի պահանջներին խիստ համապատասխան, այդ թվում՝

- «Մետրոգիարոտրանս» ԲԸ-ն ապահովելու է հրապարակի և հինգմետրանոց հարակից գոտու մաքրումը, պահպանելով տեխնիկական և հրդեհային անվտանգության, արտադրական սանիտարիայի նորմերը, ինչպես նաև դուրս եկող տրանսպորտի մաքրությունը: Կենցաղային և շինարարական աղբը, ինչպես նաև ձյունը տարածքից դուրս են բերվելու ժամանակին և տեղական ինքնակառավարման մարմնի սահմանած կարգով: Աշխատանքների հատվածները սարքավորվելու են աղբի հավաքման համար նախատեսված բունկերներով:
- «Մետրոգիարոտրանս» ԲԸ-ն հետազոտական աշխատանքների ընթացքում ապահովելու է իր աշխատողների ներկայությունը հրապարակներում սահմանված նմուշի արտահագուստով և անհատական պաշտպանության միջոցներով՝ կազմակերպության ֆիրմային անվանման նշումով:
- Աշխատանքների կատարումը և սարքավորումների ու մեխանիզմների տեղավորումն ապահովվելու է «Մետրոգիարոտրանս» ԲԸ-ի կողմից՝ հատկացված հողատարածքների սահմաններում:

Հետախուզական հորատանցքների հորատում

Հորատումն իրականացվելու է հարվածածոպանային եղանակով չորրորդական գրունտներում, և սյունակային եղանակով՝ նեոգեն նստվածքներում: Հորատումը կատարվելու է լիտոլոգիական տարբերությունների անջատմամբ, ջրատար հորիզոնների բաժանմամբ և ստորգետնյա ջրերի մակարդակների վերականգնմամբ:

Նախատեսվում է 25,0-50,0 մ խորությամբ հետախուզական հորատանցքների հորատում: Հորատանքները տեղակայվելու են մետրոպոլիտենի նախագծվող գծի երկայնքով՝ իրարից 80,0 մ հեռավորության վրա: Նախատեսվելու է նաև հորատանցքների հորատումը Զրազդան գետով նախագծվող կամրջային անցման հենասյուների տակ: Հորատանցքների քանակը կհստակեցվի՝ կախված նախագծային լուծումներից:

Հորատման աշխատանքների ընթացքում կատարվելու է գրունտների և ստորգետնյա ջրերի նմուշառում լաբորատոր հետազոտությունների համար: Նախատեսվում է վերցնել կապակցված գրունտների մոնոլիտներ, չկապակցված գրունտների խախտված կառուցվածքի նմուշներ, ժայռային ապարների նմուշներ (հետազոտվող տարածքում դրանց բացման դեպքում), գրունտների կոռոզիոն ակտիվության նմուշներ և ստորգետնյա ջրերի նմուշներ, ինչպես նաև բաց ջրամբարների ջրի նմուշներ՝ դրանց քիմիական բաղադրությունն ու ազդեցիկությունը որոշելու համար:

Ինժեներաերկրաբանական հորատանցքների հորատման ժամանակ նաև կատարվելու է գրունտների նմուշառում էկոլոգիական հետազոտությունների համար:

Գրունտների դաշտային փորձարկումներ

Չանգվածում ավազա-կավավազային և ավազակավային գրունտների հատկությունները որոշելու համար նախատեսվում է կատարել գրունտների ստատիկ զոնդավորում «միևնա վերջ», իսկ գրունտների ջրիկանալիությունը գնահատելու համար նախատեսվում է կատարել գրունտների դինամիկ զոնդավորում:

Գրունտների դեֆորմացիայի մոդուլը որոշելու համար նախատեսվում է հորատանցքներում իրականացնել պրեսիոմետրիկ փորձարկումներ և փորձարկում $S = 600$ քառ.սմ հարթ և պտուտակային շտամպերով:

Գրունտների գտման հատկությունների որոշման համար նախատեսվում է կատարել փորձագտման աշխատանքներ (պոմպահանում):

Գրունտների և ստորգետնյա ջրերի լաբորատոր հետազոտություններ

Գրունտների ֆիզիկական, ջրաֆիզիկական, մեխանիկական և քիմիական հատկությունների, ստորգետնյա և մակերևութային ջրերի քիմիական կազմը կստացվեն փորձարկումների արդյունքներով, որոնք կատարվելու են «Մետրոգիպրոտրանս» ԲԸ-ի տեխնիկական իրավասության համար հավատարմագրված հողաքիմիական լաբորատորիայում, և գրունտների դաշտային հետազոտությունների տվյալներով:

Հողաքիմիական լաբորատորիան հագեցած է փորձարկման անհրաժեշտ սարքավորումներով, չափման միջոցներով, որոնք պարբերաբար ենթարկվում են չափագիտական ստուգաչափման, և ունի ատեստավորման համապատասխան փաստաթղթեր: Գրունտների փորձարկման սարքերը պարբերաբար տարավորվում են գրունտի նմուշի դեֆորմացիաների որոշման ընթացքում դրանց սեփական դեֆորմացիաները հաշվի առնելու համար:

Հետազոտվող գրունտների և բնական ջրերի հատկությունների բնութագրերի (ցուցանիշների) լաբորատոր որոշման կիրառվող մեթոդները համապատասխանում են արդիականացված նորմատիվ տեխնիկական փաստաթղթերին:

Աղյուսակ 1-ում ներկայացված են գրունտների և բնական ջրերի բնութագրերի լաբորատոր որոշման մեթոդները, որը կատարվում է օբյեկտում ինժեներաերկրաբանական հետազոտությունների ընթացքում:

Աղյուսակ 1.

№ ը/կ	Գրունտի բնութագիրը	Որոշման մեթոդը
1	Չկապակցված գրունտների հատիկաչափական (հատիկային) կազմը	Մաղային՝ առանց ջրով լվացման և ջրով լվացմամբ ГОСТ 12536-2014
2		Կապակցված գրունտների հատիկաչափական (հատիկային) կազմը
3		Օրգանական նյութի պարունակությունը
4	Բնական, այդ թվում՝ Հիգրոսկոպիկ խոնավությունը	Չորացում՝ միևնա հաստատուն քաշը ГОСТ 5180-2015
5		Գրունտի խոնավությունը հոսունության սահմանին (Պլաստիկության վերին սահմանի որոշում)
6		Գրունտի խոնավությունը գլորման սահմանին (Պլաստիկության ստորին սահմանի որոշում)
7		Պլաստիկության թիվը Հոսունության (թանձրության) ցուցանիշը Ջրահագեցման գործակիցը (խոնավության աստիճանը)
8	Դիսպերսային ավազային և կավային գրունտների խտությունը	Կտրող օղակի ГОСТ 5180-2015
9		Ժայռային, կիսաժայռային գրունտների խտությունը
10		Գրունտի մասնիկների խտությունը

12		Ավազների խտությունը ծայրահեղ փխրուն և խիտ վիճակում	Չտման ստացիոնար ռեժիմ 25584-2016
13	Ծակոտկենություն Ծակոտկենության գործակիցը		Հաշվարկային
14	Ավազների բնական թեքության անկյունը (չոր օդային վիճակում/ջրի տակ)		ГОСТ-ավորված չէ
15	Չտման գործակիցը		Ճնշման մշտական գրադիենտի դեպքում ГОСТ 25584-2016
16	Մրսություն	Ներքին շփման անկյունը	Միահարթութենական կտրածքի մեթոդով ГОСТ-եր 12248.1-2020 եռասունի սեղմման մեթոդով 12248.3-2020
		Տեսակարար շաղկապում	
17	Ամրություն	Ժայռային, կիսաժայռային գրունտների միատնի սեղմման ամրության սահմանը	Միատնի սեղմման դեպքում ամրության սահմանների համալիր որոշման մեթոդ ГОСТ 21153.3-85
18		Ազատ ուռչում	Գրունտի ազատ ուռչման որոշման մեթոդ ГОСТ 12248.6-2020
19	Ձևակիրխիտություն	Սեղմելիության գործակիցը	Կոմպրեսիոն սեղմման մեթոդով ГОСТ 12248.4-2020
		Դեֆորմացիայի մոդուլ	Կոմպրեսիոն սեղմման մեթոդով ГОСТ 12248.4-2020 եռասունի սեղմման մեթոդով ГОСТ 12248.3-2020
20	Կարբոնատների պարունակությունը CaCO3 հաշվարկով		Կարբոնատների պարունակության որոշման մեթոդ ГОСТ-ավորված չէ
21	Գրունտների կոռոզիոն ազդեցիկությունը	Ջրային լուծամզուկի կատիոնա-անիոնային բաղադրությունը	Տիրաչափություն, սպեկտրալուսաչափություն, պոտենցաչափություն ГОСТ 26423-85 -ГОСТ 26428-85 ГОСТ 9.602-2016 СП 28.13330-2017
22		Գրունտի տեսակարար էլեկտրական դիմադրությունը	Էլեկտրաֆիզիկական ГОСТ 9.602-2016
23	Ջրերի կոռոզիոն ազդեցիկությունը	Ստորգետնյա և մակերևութային ջրերի քիմիական բաղադրության ցուցանիշները	Տիրաչափություն, սպեկտրալուսաչափություն, պոտենցաչափություն ПНД Ф 14.1:2:3:4.121-97, ПНД Ф 14.1:2:4.154-99, ПНД Ф 14.1:2:3.1-95, ПНД Ф 14.1:2:3.95-97, ПНД Ф 14.1:2:3.96-97, ПНД Ф 14.1:2:3.98-97, ПНД Ф 14.1:2:4.50-96, ПНД Ф 14.1:2:4.4-95, ПНД Ф 14.1:2:4.3-95, ПНД Ф 14.1:2.159-2000, ПНД Ф 14.1:2:3.99-97, РД 52.24.524-2009

Երկրաֆիզիկական հետազոտություններ՝

Շերտագրալիթոլոգիական սահմանների հետազոտման, կարստային խոռոչների բացահայտման և կարստասուֆոզիոն վտանգի աստիճանի գնահատման, սահքի մակերևութների բացահայտման և սողանքային վտանգի աստիճանի գնահատման համար նախատեսվում է կատարել սեյսմիկ պրոֆիկավորում՝ երկայնական և լայնական ալիքների օգտագործմամբ:

Թափառող հոսանքների առկայությունը որոշելու համար նախատեսվում է որոշել դրանց առկայությունը գրունտներում:

Կամերալ աշխատանքներ

Հետազոտությունների նյութերով հաշվետվություն կկազմվի, որը պարունակելու է տեքստային և գրաֆիկական մասեր:

Հաշվետվության տեքստային մասը կազմված կլինի հետևյալ գլուխներից՝

- Ներածություն,
- Ինժեներաերկրաբանական պայմանների ուսումնասիրվածությունը,
- աշխատանքների շրջանի ֆիզիկաաշխարհագրական պայմանները և տեխնաժին գործոնները,
- աշխատանքների կատարման մեթոդիկական և տեխնոլոգիան,
- ինժեներական հետազոտությունների արդյունքները
- երկրաբանագեոմորֆոլոգիական պայմանները,
- հիդրոբուրգիան և սահմանափակումները

- սպեցիֆիկ գրունտները,
- երկրաբանական և ինժեներատեխնիկական գործընթացները,
- ինժեներատեխնիկական շրջանացումը,
- ինժեներատեխնիկական պայմանների փոփոխությունների կանխատեսումը,
- եզրակացություն (հետազոտությունների արդյունքների հակիրճ նկարագրություն և հանձնարարականներ),
- օգտագործված նյութերի ցուցակը:

Հաշվետվությանը կից կներկայացվեն տեքստային և գրաֆիկական հավելվածներ:
Տեքստային հավելվածներում կներկայացվեն՝

- հետախուզական մշակումների կողողինատների կատալոգը,
- Նոր հորատված և հաշվետվությունում օգտագործվող արխիվային հորատանցքների սյունակները,
- գրունտների լաբորատոր հետազոտությունների արձանագրությունները,
- ստորգետնյա ջրերի քիմիական վերլուծության և ագրեսիվության արձանագրությունները,
- գրունտների ֆիզիկամեխանիկական հատկությունների ամփոփ աղյուսակները,
- առանձնացված ինժեներատեխնիկական տարրերի գրունտների բնութագրերի արժեքների վիճակագրական մշակման աղյուսակները (գրունտների հատկությունների նորմատիվ և հաշվարկային ցուցանիշների աղյուսակը),
- դաշտային հետազոտությունների արդյունքների աղյուսակները (ստատիկ և դինամիկ զոնդավորման, պրեսիոմետրիկ և շտամպային փորձարկումների,
- թափառող հոսանքների որոշման արդյունքների աղյուսակները,
- երկրաֆիզիկական հետազոտությունների գրաֆիկները

Հաշվետվության գրաֆիկական հավելվածներում ներկայացված կլինեն՝

- փաստացի նյութի քարտեզը,
- ինժեներատեխնիկական կտրվածքները,
- ինժեներատեխնիկական շրջանացման քարտեզը:

3.3. Նախագծային փաստաթղթերի մշակման նպատակով ինժեներա-հիդրոդերևույթաբանական հետազոտություններ կատարելու մեթոդաբանություն

Ինժեներա-հիդրոդերևույթաբանական հետազոտությունները կատարվելու են նախագծվող օբյեկտի նախատեսվող շինարարության շրջանի օդերևութաբանական, հիդրոլոգիական բնութագրերի որոշման և վտանգավոր հիդրոդերևույթաբանական երևույթների որոշման նպատակով և ներառելու է աշխատանքների հետևյալ տեսակները՝

- ինժեներա-հիդրոդերևույթաբանական հետազոտությունների ծրագրի մշակում,
- նախորդ տարիների ինժեներա-հիդրոդերևույթաբանական հետազոտությունների նյութերի հավաքում, մշակում և համակարգում, դրանք էլեկտրոնային տեսքի վերափոխում EXEL կամ WORD ձևաչափերով:
- լիազորված կազմակերպություններում հիդրոդերևույթաբանական և հիդրոլոգիական տեղեկատվություն պարունակող տեղեկանքների ստացում,
- տարածքի տեղագիտական զննում,
- հետազոտությունների շրջանի հիդրոդերևույթաբանական ռեժիմի ուսումնասիրություն,
- վտանգավոր հիդրոդերևույթաբանական գործընթացների ու երևույթների ուսումնասիրություն,
- Հրազդան գետի հիդրոդերևույթաբանական բնութագրերի ուսումնասիրություն,
- հետազոտությունների արդյունքների կամերալ մշակում,
- տեխնիկական հաշվետվության կազմում:

Անհրաժեշտության դեպքում ինժեներա-հիդրոդերևույթաբանական հետազոտությունների կազմում կատարվելու են նաև հատուկ հետազոտություններ, որոնք կապահովեն՝

- գետի հատվածի հիդրոլոգիական ռեժիմի առանձնահատկությունների,
- գետի հունային և ողողահունային դեֆորմացիաների ռեժիմի, ափերի վերամշակման, ջրաերոզիոն գործընթացների առանձնահատկությունների,
- գետի ջրային բալանսի,
- գետերի էտալոնային ավազաններում ու հատվածներում հոսի ձևավորման պայմանների,
- հիդրոդինամիկ ռեժիմի առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

Արխիվային և ֆոնդային նյութերի հավաքում

Աշխատանքների ընթացքում կհավաքվեն, կմշակվեն, կհամակարգվեն, ինչպես նաև էլեկտրոնային տեսքի կվերափոխվեն նախորդ տարիների ինժեներա-հիդրոդերևույթաբանական հետազոտությունների արխիվային և ֆոնդային նյութերը EXEL կամ WORD ձևաչափով:

Կպահանջվեն լիազորված կազմակերպություններում հիդրոդերևույթաբանական և հիդրոլոգիական տեղեկատվություն պարունակող տեղեկանքները:

Տարածքի տեղագիտական զննում

Կատարվելու է ուղեգծի տեղագիտական երթուղային զննում՝ մշտական և ժամանակավոր ջրահոսքերի

Հետազոտությունների շրջանի հիդրոոդերևութաբանական ռեժիմի ուսումնասիրություն

Հետազոտությունների շրջանի հիդրոոդերևութաբանական ռեժիմի ուսումնասիրությունը կկատարվի Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարության մոտակա պոստերի տվյալների օգնությամբ: Ուսումնասիրության ենթակա է ինժեներա-հիդրոոդերևութաբանական հետազոտությունների ընթացքում որոշվող հիմնական հիդրոոդերևութաբանական բնութագրերի ցանկը, որը ներկայացված է 2-րդ աղյուսակում:

Աղյուսակ 2.

Հիդրոոդերևութաբանական պայմանները	Հիդրոոդերևութաբանական բնութագրերը
Կլիմայական և ագրոոդերևութաբանական պայմանները	Էքստրեմալ օդերևութաբանական ազդեցությունների հաշվարկային բնութագրերը, ներառյալ՝ օդի ջերմաստիճանը, օդի ջերմաստիճանի և խոնավության էքստրեմալ և միջին արժեքները մթնոլորտային տեղումների քանակը, քամու արագությունը, ձյան շերտի առավելագույն բարձրությունը, վտանգավոր մթնոլորտային երևույթների առաջացման հավանականությունը
Գետերի հիդրոլոգիական ռեժիմը	Մակարդակների ռեժիմը (ջրի առավելագույն մակարդակները), հոսի ռեժիմը, ջրածածկման սահմանները, սառցային ռեժիմը, հունային գործընթացի բնութագիրը (հունային գործընթացի տեսակը, ինտենսիվությունը և զարգացման աստիճանը, պլանային և բարձրաբերձ դեֆորմացիաների գնահատումը)

Կամերալ աշխատանքներ

Հետազոտությունների նյութերով հաշվետվություն կկազմվի, որը պարունակելու է տեքստային և գրաֆիկական մասեր:

Հաշվետվությունը կպարունակի՝

- կատարված աշխատանքների նյութերի բնույթը և դրանց որակի գնահատականը,
- հաշվարկների համար ընդունված ելակետային տվյալները,
- հաշվարկային բնութագրերի որոշումը շինությունների նախագծերի հիմնավորման համար,
- շինարարության շրջանի հիդրոոդերևութաբանական պայմանների գնահատումը՝ ներկայացնելով շինությունների նախագծերի հիմնավորման համար անհրաժեշտ հաշվարկային բնութագրերը,
- նախագծվող օբյեկտների վրա վտանգավոր հիդրոոդերևութաբանական գործընթացների և երևույթների (առկայության դեպքում) ազդեցության կանխատեսումը՝ դրանց վտանգավորության աստիճանի գնահատմամբ,
- գետերի հունային գործընթացների բնութագիրը,
- շինությունների ինժեներական պաշտպանության և շրջակա բնական միջավայրի պահպանության ընդհանուր հանձնարարականները:

Եզրակացության մեջ կներկայացվեն եզրահանգումները կատարված ինժեներա-հիդրոոդերևութաբանական հետազոտությունների արդյունքների վերաբերյալ, նախագծային որոշումների ընդունման հանձնարարականները, անհրաժեշտության դեպքում՝ հետագա հետազոտությունների կամ դիտարկումների հիմնավորումը:

Տեքստային հավելվածներում ներկայացված կլինեն ինժեներական հետազոտությունների ընթացքում կատարված դիտարկումների ամփոփված արդյունքները, հիդրոոդերևութաբանական հաշվարկների ժամանակ ընդունվող՝ նույն ժամանակահատվածում համանման պոստի վերաբերյալ դիտարկումների արդյունքները, ելքային տվյալները և հաշվարկների արդյունքները:

Գրաֆիկական հավելվածներում ներկայացված կլինեն (գետերի համար)՝

- հիդրոգրաֆիկական ցանցի սխեման՝ նշելով հիդրոլոգիական և օդերևութաբանական դիտարկումների կետերի գտնվելու վայրը (ներառյալ՝ նախորդ տարիների դիտարկումների կետերը),
- նախագծվող օբյեկտի և հիդրոլոգիական ու օդերևութաբանական դիտակետերի տեղակայման նշումով քարտեզը,
- ջրային օբյեկտն անցնելու հիդրոլոգա-մորֆոլոգիական սխեման՝ նշելով հաշվարկային գետահատածքները,
- ջրաչափական գետահատածքների լայնական պրոֆիլները,
- գետի համակցված լայնական և երկայնական պրոֆիլները, ինչպես նաև գետի հատվածների համակցված հատակագծերը՝ ըստ տարբեր տարիների նկարահանումների, հունի դեֆորմացիայի բնութագրման համար,
- ջրի մակարդակից ջրի ծախսերի (ջրի ծախսերի կորերը), ջրահատվածքի տարածությունների և հոսանքի միջին արագությունների կախվածության գրաֆիկները,
- հիդրոլոգիական պարամետրերի կապի գրաֆիկները՝ ըստ հետազոտվող կետերի և ըստ համանման կետերի, որոնց վերաբերյալ տվյալները օգտագործվել են հաշվարկային բնութագրերի որոշման համար,
- ջրի միջին տարեկան և բնորոշ ծախսերի ապահովվածության և այլ հաշվարկային բնութագրերի կորերը,
- հոսանքների արագությունների բաշխման (արագությունների էպյուրներ) սխեմաները և

- սառույցի հաստության բաշխման պլանները և պրոֆիլները՝ ըստ սառցաչափային նկարահանումների արդյունքների,
- կշռված և հատակային ողողատների բաշխման սխեմաներն ու պլանները և այլն:

Նախագծային փաստաթղթերի նախապատրաստման համար ինժեներա-հիդրոոգերևութաբանական հետազոտությունների արդյունքներով կազմված տեխնիկական հաշվետվությունը, ի լրումն ընդհանուր տեղեկությունների, այնպիսի նյութեր կպարունակի, որոնք, ըստ շինարարության օբյեկտի տեղակայման յուրաքանչյուր քննարկվող տարբերակի, թույլ կտան գնահատել՝

- շինարարական նախատեսվող օբյեկտի (գծային օբյեկտի ուղեգծի) վրա վտանգավոր հիդրոոգերևութաբանական գործընթացների ու երևույթների (փոթորիկների, մերկասառույցի, սելավահոսքերի, ձնահյուսների և այլն) ազդեցության հնարավորությունը,
- շինարարության օբյեկտի (ուղեգծի) տեղակայման համար նախատեսվող տարածքի (կամ դրա մի մասի) ջրածածկման հնարավորությունը՝ որոշելով ջրածածկվող հատվածի սահմանները,
- սառույցի ազդեցությանը տարածքի ենթարկվածությունը և դրանց արտահայտման ձևերը,
- դեֆորմացիոն գործընթացների առկայությունը և բնույթը, ուղղվածությունը, ինտենսիվությունը և շինարարության հրապարակի (ուղեգծի) վրա ազդեցության հնարավորությունը:

Հիդրոոգերևութաբանական պայմանների նախնական գնահատման արդյունքները կապահովեն շինարարության հրապարակի (ուղեգծի ուղղության) օպտիմալ տարբերակի ընտրությունը:

Կատարված հետազոտական աշխատանքների արդյունքներով հետազոտվող տարածքի՝ անբարենպաստ ազդեցությունների ենթարկվածության դեպքում ընդհանուր հանձնարարականներ կտրվեն ինժեներական պաշտպանության վերաբերյալ և կորոշվի նախագծային լուծումների հիմնավորման համար անհրաժեշտ հետագա ինժեներա-հիդրոոգերևութաբանական հետազոտությունների կազմը:

3.4. Նախագծային փաստաթղթերի մշակման նպատակով ինժեներատեխնոլոգիական հետազոտություններ կատարելու մեթոդաբանություն

Ինժեներատեխնոլոգիական հետազոտությունները կատարվելու են նախատեսվող նախագծման տարածքում ժամանակակից էկոլոգիական իրավիճակը որոշելու և նախագծային փաստաթղթերի կազմում «Շրջակա միջավայրի պահպանության միջոցառումներ» բաժինը մշակելու նպատակով:

Ինժեներատեխնոլոգիական հետազոտությունները ներառելու են աշխատանքների հետևյալ տեսակները՝

- ինժեներատեխնոլոգիական հետազոտությունների ծրագրի մշակում,
- ֆոնդային տվյալների հիման վրա առաջնային տեղեկատվության հավաքում,
- նախատեսվող շինարարության տարածքի տեղադրության գնում,
- գրունտների նմուշառում էկոլոգիական հետազոտությունների համար (նմուշառման համար օգտագործվում են այն հորատանցքները որոնք հորատվում են ինժեներատեխնոլոգիական հետազոտությունների շրջանակներում),
- հողերի աղտոտվածության գնահատում և երկրատեխնոլոգիական փորձարկում,
- մթնոլորտային օդի աղտոտվածության գնահատում,
- ճառագայթման իրավիճակի հետազոտություն և գնահատում,
- հողերի քիմիական և կենսաբանական աղտոտվածություն (էկոլոգատեխնոլոգիական հետազոտություններ՝ ծանր մետաղների (Pb, Cd, Zn, Cu, Ni, Mn, Cr, Co), թունավոր տարրերի (As), օրգանական աղտոտիչների (նավթամթերքներ, բենզ(ա)պիրեն) որոշում, pH-ի որոշում. միկրոկենսաբանական գնահատում՝ БГКП (ԱՑԽՄ՝ աղիքային ցուպիկների խնքի մանրէներ) ինդեքսի որոշում, էնտերոկոկներ, ախտածին միկրոօրգանիզմներ (այդ թվում՝ սալմոնելներ), հելիկոբակտերիայի ճվեր և թրթուռներ),
- էկոլոգա-հիդրոլոգիական հետազոտություններ, մակերևութային ջրերի և հատակի նստվածքների փորձարկում և աղտոտվածության գնահատում,
- բուսականության և կենդանական աշխարհի առկա վիճակի գնահատում,
- նյութերի կամերալ մշակում և հաշվետվության կազմում:

Ղաշտային աշխատանքներ

Նախքան ղաշտային աշխատանքներն սկսելը կհավաքվեն, կմշակվեն ու կհամակարգվեն արխիվային և ֆոնդային նյութերը, ինչպես նաև հրապարակված տվյալները գիտական աղբյուրներից՝ դիտարկվող տարածքի էկոլոգիական վիճակի մասին:

Նախատեսվում է ուղեգծի տեղադրության երթուղային գնում՝ չարտոնված աղբավայրերի և բնական ու տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների առաջացման ռիսկի ենթակա տարածքների առկայության որոշման նպատակով:

Հետազոտությունների շրջանակներում պաշտոնական տվյալներ կստացվեն (տեղեկություններ մթնոլորտային օդի ֆոնդային աղտոտվածության մասին և կլիմայական տեղեկանքը), որոնք հիմնված կլինեն մթնոլորտային օդի վիճակի դիտարկման՝ Ռոսգիդրոմետին, տեղական ինքնակառավարման մարմիններին կամ տնտեսավարող սուբյեկտներին պատկանող ստացիոնար պոստերից ստացվող տեղեկատվության վրա:

Վերահսկվող ցուցանիշների ցանկը, հետազոտությունների մեթոդները, աշխատանքների տեսակներն ու ծավալները կորոշվեն ինժեներատեխնոլոգիական հետազոտությունների ծրագրում՝ հաշվի առնելով СП 47.13330.2016 «Ինժեներական հետազոտություններ շինարարության համար. Հիմնական դրույթներ» (արդիականացված խմբագրություն СНИП 11-02-96), СП 11-102-97 «Ինժեներատեխնոլոգիական հետազոտություններ շինարարության համար» փաստաթղթերի սահմանում:

Գրունտների նմուշառումը կանոնակարգվում է СП 11-102-97 «Ինժեներատեխնիկական հետազոտություններ շինարարության համար», СП 47.13330.2016 «Ինժեներական հետազոտություններ շինարարության համար. Հիմնական դրույթներ» (արդիականացված խմբագրություն СНиП 11-02-96), ГОСТ 17.4.3.01-2017 «Հողեր. Նմուշառմանը ներկայացվող ընդհանուր պահանջները», СанПиН 2.1.7.1287-03 «Հողի որակին ներկայացվող սանիտարահամաճարակաբանական պահանջները» փաստաթղթերի պահանջներով:

Ինժեներատեխնիկական աշխատանքների ընթացքում գրունտների մակերևութային աղտոտման գնահատման համար նախատեսվում է կատարել խառը նմուշառում (տվյալ նմուշները բաղկացած են առնվազն հինգ կետավոր նմուշներից, որոնց վերցվում են 5*5 մ մակերեսով նմուշառման հրապարակներից) «ծրարի» մեթոդով՝ 0,0-0,2 մ խորության վրա՝ սանիտակաքիմիական և համաճարակաբանական ցուցանիշները որոշելու նպատակով: Փորձարկման չափը շինությունների համար (հրապարակային օբյեկտներ, աշխատանքների բաց եղանակ)՝ 1 նմուշ 1 հա-ի համար:

Փորձարկված գրունտների թունաքիմիական ցուցանիշները որոշելուց հետո տրվում է դրանց աղտոտվածության գնահատականը՝ ըստ աղտոտվածության գումարային ցուցանիշի (Zc):

Ճառագայթակլոգիական հետազոտությունները նախատեսում են՝

- տարածքի գամմա-ֆոնի գնահատում,
- գրունտներում ճառագայթակտիվ նուկլիդների տեսակարար ակտիվության գնահատում,
- տարածքի հնարավոր ռադոնավտանգի գնահատում:

Բուսածածկույթի ուսումնասիրության ընթացքում կատարվելու է հրապարակված և ֆոնդային նյութերի հավաքում, ամփոփում և վերլուծություն, դաշտային գեոբոտանիկական հետազոտություններ:

Բուսածածկույթի ուսումնասիրության նյութերը ներառում են՝ գոտիական և ներգոտիական բուսականության տիպերի բնութագիրը՝ տարածքի լանդշաֆտային կառուցվածքին համապատասխան, դրանց տարածումը, հիմնական բուսական համայնքների գործառնական նշանակությունը. անտառային ֆոնդի կազմը, կադաստրային բնութագիրը, օգտագործումը. բնական խոտային և ճահճային բուսականության տիպերը, օգտագործումը և վիճակը. հազվադեպ և անհետացող տեսակները, դրանց գտնվելու վայրը և պահպանության համակարգը, ագրոցենոզները (մշակաբույսերի տեղաբաշխումը, բերկատվությունը):

Բուսածածկույթի քանակական և որակական բնութագրերի փոփոխությունները պետք է օբյեկտիվորեն մեկնաբանվեն հարաբերականորեն չխախտված, իրենց բնալանդշաֆտային բնութագրերով հետազոտվող տարածքին համանման ֆոնդային տարածքներում բուսական համայնքների բնական վիճակին համեմատ:

Կենդանական աշխարհի բնութագիրը կտրվի հրապարակված տվյալների և ֆոնդային նյութերի հիման վրա, անհրաժեշտության դեպքում դաշտային հետազոտություններ կկատարվեն:

Կենդանական աշխարհի ուսումնասիրության նյութերը ներառում են՝ կենդանիների տեսակների ցանկը՝ ըստ օբյեկտի ազդեցության գոտում առկա լանդշաֆտների տիպերի, այդ թվում՝ հատուկ պահպանության ենթակա. կենդանիների հատկապես արժեքավոր տեսակները, բնակության վայրերը (ձկների համար՝ ձկադրատեղերը, արածաբտման վայրերը և այլն). տվյալ վայրերի համար բնորոշ, գործառնական նշանակություն ունեցող պոպուլյացիաների վիճակի գնահատումը, կենդանիների միգրացիոն տեսակների բնութագիրը և վիճակի գնահատումը, միգրացիայի ուղիները. օբյեկտի տեղակայման շրջանում արդյունազործական կենդանիների ու ձկների պաշարները. կենսատոպիկ պայմանների (բազմացման վայրերի, արոտավայրերի և այլն) բնութագիրը:

Գազաերկրաքիմիական հետազոտությունները կկատարվեն միայն նախատեսվող շինարարության տարածքում էկոլոգիապես վտանգավոր կենսագազ գեներացնելու և կուտակելու ընդունակ գրունտների առկայության դեպքում (օրգանահանքային և օրգանական գրունտներ, կենսական և շինարարական թափոններ պարունակող տեխնածին գրունտներ, ոռոգման դաշտերի և կոյուղաջրերի գրունտներ, աղբավայրերի գրունտներ և այլն):

Ֆիզիկական դաշտերի ազդեցությունների հետազոտման ու գնահատման ընթացքում կորոշվեն՝

- ֆիզիկական դաշտերի առկա և նախագծվող աղբյուրները,
- շրջակա միջավայրի պայմանները, կառուցապատման տիպը և խտությունը,
- ֆիզիկական դաշտերի աղբյուրների ազդեցության մակարդակներն ու ազդեցության գոտիները:

Լաբորատոր հետազոտություններ

Լաբորատոր քիմիավերլուծական հետազոտությունները կատարվելու են վնասակար քիմիական և ռադիոակտիվ նյութերով հողերի և գրունտների, մակերևութային ջրերի, հատակի նստվածքների աղտոտման գնահատման համար:

Բոլոր քիմիավերլուծական հետազոտությունները կատարվելու են պետական հավատարմագրված և համապատասխան ատեստատ ստացած լաբորատորիաներում:

Վերլուծվող բաղադրիչների կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրով՝ առաջադրանքին համապատասխան, կախված շինարարության տեսակից, հետազոտությունների փուլից և աղտոտիչների ենթադրյալ բաղադրությունից, հաշվի առնելով աղտոտում առաջացնող գործոնետության տեսակը:

Կամերալ աշխատանքներ

Հետազոտությունների նյութերով հաշվետվություն կկազմվի, որը պարունակելու է տեքստային և գրաֆիկական մասերը:

Հաշվետվության տեքստային մասը պարունակում է հետևյալ բաժիններն ու տեղեկությունները՝

- Ներածություն,
- Էկոլոգիական պայմանների ուսումնասիրվածություն,
- Բնական և մարդածին պայմանների համառոտ բնութագիր,

- Ինժեներաեկոլոգիական աշխատանքների և հետազոտությունների արդյունքները՝ ստորգետնյա և մակերևութային ջրերի, մթնոլորտային օդի աղտոտման հետազոտությունների արդյունքները, ճառագայթումային և ակուստիկ հետազոտությունների արդյունքները, հողերի և գրունտների հետազոտությունների արդյունքները,
- Էկոլոգիական մշտադիտարկման կազմակերպման առաջարկներն ու հանձնարարականները,
- Եզրակացությունը (հիմնական եզրահանգումներն ու հանձնարարականները),
- Օգտագործված նյութերի ցուցակը:

- Հաշվետվության կազմում ընդգրկված տեքստային հավելվածները ներառում են՝
- Շրջակա միջավայրի առանձին բաղադրիչների (հողերի և գրունտների) Էկոլոգիական փորձարկման արդյունքների արձանագրությունները,
 - Ռադիոլոգիական հետազոտության արձանագրությունները,
 - Բնապահպանական մարմիններին և այլ կազմակերպություններին ուղարկված հարցումների պաշտոնական պատասխանները (անհրաժեշտության դեպքում):

- Հաշվետվության գրաֆիկական մասում ներկայացված են՝
- իրավիճակային քարտեզ-սխեման՝ Էկոլոգիական սահմանափակումների գոտիների նշումով,
 - փաստացի նյութի քարտեզը,
 - Էկոլոգիական շրջանացման քարտեզը:

Ինժեներաեկոլոգիական հետազոտությունների և ուսումնասիրությունների արդյունքներով տեխնիկական հաշվետվության կազմն ու բովանդակությունը որոշվում է բնատեխնածին պայմաններով և մշակվող փաստաթղթերի հիմնավորման համար անհրաժեշտ հաշվետվության փաստաթղթերի կազմը պարունակող առաջադրանքով:

4. Առկա շինությունների վրա շինարարության գործընթացի ազդեցության գնահատում

1. Առկա շինությունների վրա շինարարության գործընթացի ազդեցության հաշվարկային կանխատեսում

Երևան քաղաքի Աջափնյակ թաղամասում մետրոպոլիտենի կայարանի շինարարության նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ընթացքում «Մետրոպոլիտրանս» ԲԸ-ն անհրաժեշտության դեպքում կկատարի ֆունդամենտներ հիմքերի և շենքերի ու շինությունների շինարարական կոնստրուկցիաների վիճակ գննում (հորերի մշակմամբ և բարեկարգման վերականգնմամբ):

«Մետրոպոլիտրանս» ԲԸ-ի կողմից մշակվելու են՝

- շինարարության ազդեցության գոտում գրունտային զանգվածի լարված-դեֆորմացվող վիճակի և շինության նստվածքների կանխատեսվող փոփոխության հաշվարկային հիմնավորումները՝ յուրաքանչյուր շինության մասով,
- գրունտային ջրերի մակարդակի փոփոխություններից շինությունների նստվածքների հաշվարկային հիմնավորումները (անհրաժեշտության դեպքում կկատարվի հիդրոերկրաբանական մոդելավորում),
- շինարարության անվտանգությունը բարձրացնող հանձնարարականները:

2. Առկա շինությունների մշտադիտարկման ծրագրի և շինությունների ամրացման նախագծի մշակում

Երևան քաղաքի Աջափնյակ թաղամասում մետրոպոլիտենի կայարանի շինարարության նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ընթացքում «Մետրոպոլիտրանս» ԲԸ-ն կմշակի շինարարության ազդեցության գոտում գտնվող՝ մետրոպոլիտենի մշտապես շահագործվող կամ չշահագործվող առկա շինությունների, ինչպես նաև շրջակա կառուցակառուցման մշտադիտարկման ծրագիրը: Մշակման արդյունքներով «Մետրոպոլիտրանս» ԲԸ-ն կկատարի և Պատվիրատուին կներկայացնի տեխնիկական հաշվետվությունը:

3. Մետրոպոլիտենի գնացքների շարժից ակնկալվող աղմուկի և վիբրացիայի գնահատում

Երևան քաղաքի Աջափնյակ թաղամասում մետրոպոլիտենի կայարանի շինարարության նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ընթացքում «Մետրոպոլիտրանս» ԲԸ-ն կիրականացնի շենքերի տարածքներում և սեյստեբային տարածքում աղմուկի, վերգետնյա շենքերում ու շինություններում՝ վիբրացիայի մեծությունների գնահատում, որոնք առաջանում են մետրոպոլիտենի գնացքների շարժից վազորդային թունելների հատվածներում, մետրոկամուրջի վրա, գծի վերգետնյա հատվածում, կայարանների, վայրէջքների կամերաների սահմաններում:

Անհրաժեշտության դեպքում «Մետրոպոլիտրանս» ԲԸ-ն կմշակի շրջակա կառուցապատման շենքերի տարածքներում և տնամերձ տարածքներում սակիտարական նորմերի կատարումն ապահովող միջոցառումներ:

5. Ծարտարապետահատակագծային լուծումներ

Կայարանային համալիրը, մետրոկամուրջը և մետրոպոլիտենի գծի տարածքի այլ շինություններ կներդաշնակեցվեն Հրազդան գետի ձորի բնական լանդշաֆտին և ստեղծվալ քաղաքաշինական միջավայրին. կլուծեն Հրազդան գետի ձորով միմյանցից բաժանված Արաբկիր և Աջափնյակ թաղամասերի միջև ուղևորների հարմարավետ փոխադրման հիմնական խնդիրը:

Ստեղծված քաղաքային միջավայրում կբացահայտվեն առավել ընդհանուր, տիպիկ բնագծեր ու կպահպանվեն մետրոպոլիտենի շինությունների համալիրում: Հին կառուցապատման ու նոր շինությունների ներդաշնակ համադրության խնդիրները լուծելիս կօգտագործվեն ռիթմի, համաչափությունների, մասշտաբի

հնարքների հիմքում դրված սկզբունքները: Միաժամանակ, ավանդույթների և նորույթների համադրությունը շինություններին պայծառ և հիշվող ճարտարապետական տեսք կհաղորդի:

Մետրոպոլիտենի շինությունները կկատարվեն մետրոպոլիտենի ժամանակակից ընթերցման սկզբունքների վրա հիմնված ճարտարապետական կոնցեպցիայի շրջանակներում, որտեղ հիմնական բնութագրերն են ծավալը, լույսը, ձևը, ռացիոնալիզմը, կոնստրուկցիաների և հարդարման նյութերի հարատևությունը: Ձևավորման կոնցեպցիայի հիմքում կդրվի խելամիտ բավարարության և ճանաչելիության սկզբունքը ինժեներական և գեղագիտական խնդիրների համալիր լուծմամբ:

Կայարանային համալիրը կնախագծվի Հրազդան գետի աջափնյա գոտում հաշվի առնելով նախատեսվող կառուցապատումը, հեռանկարում գծի երկարացման և ևս մեկ կայարանի շինարարության հնարավորությամբ, ինչպես նաև անմիջապես կայարանային համալիրի շքամուտքի մերձակայքում հասարակական տրանսպորտի վերջնական կանգառի շինարարության հնարավորությամբ:

Մետրոկամուրջը կնախագծվի սեփական կոնստրուկցիաների վրա, ուղիները կտեղադրվեն գմբեթի տակ, կնախատեսվի ընթացիկ սպասարկման ու մշտադիտարկման իրականացման հնարավորություն:

Գծի վերգետնյա հատվածը կնախագծվի փակ տեսքով, թունելի թեքանցային հատվածը՝ հենապատերով՝ ճակատամուտքի հանման կայունության, գրունտի սողումից ու հնարավոր քարաթափումներից պաշտպանության համար:

Շինությունների ճարտարապետությունը ենթարկվելու է ծավալատարածային կոմպոզիցիաների կազմակերպման գլխավոր ձևակազմող տարրին՝ լույսին, որը բացահայտում է ճարտարապետական դետալների պլաստիկան, միավորում կոմպոզիցիաները և կոնստրուկցիաներին թեթևություն և եթերայնություն հաղորդում: Խոշոր լուսային ձևեր՝ կետևներ և թաղերի լուսանդրադարձող մակերեսները, պիլոնների լուսարձակող նիստերը և առաստաղների լուսային գծերը՝ կայարանի ճարտարապետական կերպարի լուծման հիմնական հնարքները: Գունային լուծումները կհամապատասխանեն Հրազդան գետի ձորում համալիրի տեղակայման վայրին: Շինությունների ճարտարապետությունը կլինի միասնական ճարտարապետական կոմպոզիցիայի անբաժանելի մասը: Մետրոյի մուտքի տաղավարները, լիֆտային տաղավարները հաշմանդամների և սահմանափակ շարժունակությամբ ուղևորների խմբերի համար, համալիրի օդափոխման կրպակները տրանսպորտային շինության ճարտարապետության նշանային տարրերն են, որոնք կներդաշնակեցվեն բնական լանդշաֆտին ու քաղաքաշինական միջավայրին՝ հաշվի առնելով հեռանկարային կառուցապատումը և վերգետնյա տրանսպորտի ցանցերի զարգացումը:

Որպես երեսպատման հիմնական նյութ կայարանի հատակների երեսպատման համար առաջարկվում է օգտագործել գրանիտը՝ առավել գոյատև և բարձր դեկորատիվ նշանակության բնական նյութը, որն իրեն գերազանց է դրսևորել գործող մետրոպոլիտենների շահագործման ընթացքում: Նստեցման կառամատույցի և շքամուտքերի հատակներն առաջարկվում է սալարկել ողորկված միագույն կամ որևէ պատկեր կազմող սալերով: Սանդուղքի աստիճանները՝ սահումը խոչընդոտող ջերմամշակված գրանիտ:

Պատվիրատուին կառաջարկվեն առաջատար շինարարական տեխնոլոգիաներ և ճարտարապետական լուծումներ, Էկոլոգիապես անվտանգ և էներգաարդյունավետ նորագույն շինանյութեր, արտադրատեսակներ, կոնստրուկցիաներ, նորարարական տեխնոլոգիաներ, որոնք իրենց լավ են դրսևորել «Մետրոգիպրոտրանս» ԲԸ-ի վերջին նախագծային մշակումների ընթացքում:

- Պատերի և թաղերի երեսպատումը այլումիևե պանելներով, որոնք թեթևացնում ու պարզեցնում են մոնտաժի աշխատանքները, ինչպես նաև ապահովում ճարտարապետական մտքի ավելի ճշգրիտ իրագործում:
- Լուսավորության նորագույն համակարգերի կիրառում՝ բարելավված լուսային բնութագրեր և շահագործման երկար ժամկետ ունեցող լուսադիոդներով:
- Դռների ու պատուհանների կոնստրուկցիաները՝ չժանգոտող պողպատից, բարձր հուսալիության և ամրության, ծառայության երկար ժամկետով, բարձր կոռոզիոն դիմացկունությամբ:
- Օբյեկտի կոնստրուկցիաների ջերմացման ու ջրամեկուսացման համար չայրվող հավելումներով ժամանակակից, հրդեհային անվտանգության նորմատիվներն ապահովող նյութերի, մասնավորապես՝ գերազանց ջերմամեկուսիչ և ձայնային բնութագրեր ունեցող, թեթևություն, քիմիական իներտություն, անջրանցիկություն, ջերմակայունություն և չայրվող հատկություն ունեցող փոփոքրապակու կիրառում:

Կայարանի համար կմշակվի տեսողական տեղեկատվության համակարգ, որը կոյուրինացնի ուղևորների կողմնորոշումը մետրոպոլիտենի ծառայությունների տեխնիկական պայմաններին համապատասխան:

Ծառայողական և տեխնոլոգիական տարածքները կհարդարվեն նորմատիվ փաստաթղթերի և երևանի մետրոպոլիտենի պահանջներին համապատասխան:

6. Զաղաքացիական պաշտպանության միջոցառումների, բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումների մշակում

Զաղաքացիական պաշտպանության միջոցառումները, բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումները նմանապես «Մետրոնահատրոտրանս» ԲԸ-ի նոտիա Հատաստանի

Քաղաքացիական պաշտպանության միջոցառումները մշակելիս «Մետրոգիպրոտրանս» ԲԸ-ն հաշվի կառնի Պատվիրատուի պահանջները վթարային իրավիճակներում № 24 հորանի մոտեցման թունելներում, հարակից տարածքներում, ինչպես նաև գործող թունելներում բնակչությունը թաքցնելու համար քաղաքապաշտպանության օբյեկտների շինարարության վերաբերյալ:

Նախագծում կնախատեսվի քաղաքացիական պաշտպանության օբյեկտների շինարարությունը, սարքավորումների մոնտաժն ու գործարկումը ամբողջ ծավալով:

Ամփոփ նախահաշվում առանձին տողով կնշվի քաղաքապաշտպանության օբյեկտների շինարարության համար նախատեսված ծախսերի ընդհանուր գումարը:

7. Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման մեթոդաբանություն

Նախագծի առանձին տարբերակների (ենթատարբերակների) մշակման հաջորդականությունը կկատարվի ՊՔ-8.5.1/02-2017-ին համապատասխան:

Ինժեներական հետազոտությունների արդյունքներով ինժեներական երկրաբանության բաժինը կկազմի ինժեներաերկրաբանական կտրվածքը և հաշվետվությունը ինժեներաերկրաբանական հետազոտությունների մասին, որը կփոխանցվի ուղեգծի, շահագործման և գեոդեզիայի բաժին:

Ուղեգծի վերաբերյալ ինժեներաերկրաբանական կտրվածքը ստանալուց հետո աշխատանքի կանցնի տեխնիկական նախապատրաստման օպերատիվ խումբը՝ ԴՊՈ-ի գլխավորությամբ, որի կամում ընդգրկված են հետևյալ մասնագիտությունների արտադրական ստորաբաժանումների ղեկավարներն ու մասնագետները՝

- Ինժեներական երկրաբանություն,
- ուղեգծի, շահագործում և գեոդեզիա,
- շինարարական կոնստրուկցիաներ,
- ճարտարապետական լուծումներ,
- շինարարության կազմակերպում,
- սանիտարատեխնիկական սարքվածքներ,
- էլեկտրամատակարարում,
- կապ,
- շահագործում,
- շինարարության արժեքը,
- արդյունաբերական անվտանգություն,
- հրդեհային անվտանգություն,
- աշխատանքի պահպանություն,
- շրջակա միջավայրի պահպանություն և այլն:

«Մետրոգիպրոտրանս» ԲԸ-ի տնօրենի կարգադրությամբ օպերատիվ խմբում կընդգրկվեն հետևյալ մասնագետները՝

- Ինժեներական երկրաբանության բաժնի,
- ուղեգծի, շահագործման և գեոդեզիայի բաժնի,
- Համալիր նախագծման 1-ին և 2-րդ բաժինների,
- Ջերմասանտեխնիկական համակարգերի նախագծման բաժնի,
- էլեկտրատեխնիկական բաժնի,
- Ավտոմատիկայի, հեռամեխանիկայի և կապի բաժնի,
- Ճարտարապետական բաժնի,
- Վերգետնյա շինությունների նախագծման բաժնի,
- Հակահրդեհային համակարգերի նախագծման բաժնի,
- Նախահաշվային բաժնի:

Օպերատիվ խումբը նախնական լուծումներ կմշակի հետևյալ սկզբունքային հարցերի վերաբերյալ՝

- Ուղեգծման տարբերակներ,
- Շինարարության տարբերակներ,
- Կոնֆիգուրացիայի տարբերակներ,
- Շինարարության երկրաբանական պայմաններ,
- Շինարարության նախագծային փաստաթղթերի մշակման համար ինժեներական հետազոտությունների ցանկի ու ծավալների որոշում, ինժեներական հետազոտությունների տեխնիկական առաջադրանքների մշակում,
- Լուծումներ թունելային հատվածի վերաբերյալ,
- Լուծումներ կամիջային հատվածի վերաբերյալ,
- Լուծումներ կայարանային համալիրի վերաբերյալ,
- Լուծումներ ուղու և կոնտակտային ռելսի վերաբերյալ,
- Լուծումներ ջրահեռացման վերաբերյալ,
- Լուծումներ ջրամատակարարման վերաբերյալ,
- Լուծումներ էլեկտրամատակարարման վերաբերյալ,
- Լուծումներ օդափոխության վերաբերյալ,
- Լուծումներ բարդ լեռնաերկրաբանական պայմաններում շինարարության վերաբերյալ,

- Լուծումներ վթարային իրավիճակների դեպքում նախաձեռնվող միջոցառումների վերաբերյալ,
- Տնտեսական մաս,
- Տեխնիկական լուծումներ հրդեհային անվտանգության ապահովման հարցի վերաբերյալ,
- Արդյունաբերական անվտանգության, աշխատանքի պահպանության և շրջակա միջավայրի պահպանության ոլորտի միջոցառումներ:

Նախագծի առանձին բաժինների կատարման համար Պատվիրատուի հետ համաձայնեցմամբ կարող են ներգրավվել մասնագիտացված նախագծային կազմակերպություններ՝ ՈՒՄ-8.4/03–2018-ին համապատասխան:

Ենթակապալառու կազմակերպությունների պատրաստի նախագծերի ընդունումն իրականացվելու է ԳՈՒՄ-ի կողմից՝ համապատասխան արտադրական ստորաբաժանումների ներգրավմամբ:

Ենթակապալառու կազմակերպությունների կողմից մշակված փաստաթղթերի որակի վերահսկողության մեթոդները նկարագրված են սույն փաստաթղթի 3-րդ բաժնի 4-րդ կետում:

Շինարարության նախահաշվային արժեքի և ընդունված նորմատիվներին համապատասխանության վերլուծությունը կկատարեն նախահաշվորդ մասնագետները ԳՈՒՄ-ի ղեկավարությամբ, արդյունքները կներկայացվեն Ընկերության ղեկավարությանը:

Ուղեգծման, շինարարության և կոնֆիգուրացիայի վերջնական տարբերակների հիմնավորումն ու ընտրությունը կհամաձայնեցվեն Պատվիրատուի հետ:

Նախագծային բաժինները կփոխանցեն բացատրական գրությունները ԳՈՒՄ-ին նախագծի մշակման ավարտից 2 ամիս առաջ (ժամկետը սահմանվում է փոխգործակցության ժամանակացույցում):

ԳՈՒՄ-ը կփոխանցի նախագծի նյութերը (ԳՈՒՄ-ի կողմից ստորագրված գծագրապատճենները, բացատրական գրությունը և այլն) տեխնիկական բաժնի ուսումնասիրությանը:

Տեխնիկական բաժնի կողմից նախագիծը քննարկելուց հետո կիրականացվի վերջինիս պաշտպանությունը Ընկերության տեխնիկական խորհրդում: Քննարկման արդյունքներով կկատարվի նախագծի ճշգրտում:

Նախագծի նյութերը կստորագրվեն «Մետրոգիպրոտրանս» ԲԸ ղեկավարության կողմից՝ Ընկերության տեխնիկական խորհրդում քննարկման արդյունքներով վերջինիս ճշգրտումից հետո:

Ճշգրտումից հետո նախագծի նյութերը կկազմվեն ու կձևակերպվեն Պատվիրատուի պահանջներին և ՈՒՄ-8.5.4/01–2018 փաստաթղթավորված ընթացակարգին համապատասխան:

Փաստաթղթերը կլրակագնվեն հատորների՝ առանձին բաժիններով:

Հատոր կազմած յուրաքանչյուր բաժին, մաս (ենթաբաժին) և գիրք կստանան առանձին նշում, որը կնշվի կազմին, տիտղոսաթերթին և/կամ հիմնական մակագրության մեջ: Բաժնի նշումը կներառի բազային նշում (ծածկագիր՝ ԳՈՒՄ-ի կարգադրությամբ):

Գծագրերը կբաժանվեն ըստ մակնիշների ու կմիավորվեն հիմնական լրակագրերի:

Գծագրի թերթին, ինչպես նաև տեքստային փաստաթղթերում դրվում է հիմնական մակագրությունն ու դրա լրացուցիչ սյունակները՝ ԳՈՒՄ P 21.101-2020-ի պահանջներին համապատասխան:

Նախագծի գլխավոր ինժեների ստորագրությունը փաստաթղթերի գրաֆիկական մասի թերթերին պարտադիր է:

Կից ներկայացվող փաստաթղթերի թերթերը առանց սկզբունքային էական փոփոխությունների, տեղակապման դրոշմով, ըստ ԳՈՒՄ P 21.101-2020 ձևի ԳՈՒՄ-ի որոշմամբ պահպանվում են շինարարության ժամկետի ընթացքում:

Փաստաթղթերում կատարվող բոլոր փոփոխությունների համար ձևակերպվում են գրավոր թույլտվություններ, որոնք հաստատվում են առաջին փոխնախագահ - գլխավոր ինժեների կողմից:

Անհրաժեշտության դեպքում փոփոխություններ կատարելու թույլտվությունները համաձայնեցվում են հարակից ստորաբաժանումների հետ:

Փաստաթղթերի փոփոխությունները կատարվում են ԳՈՒՄ P 21.101-2020 7-րդ բաժնի պահանջներին համապատասխան:

Նախագծի նյութերի լրակագնում, թողարկում և փոխանցում Պատվիրատուին

ԳՈՒՄ-ը կնախապատրաստի նախագծի լրակագնման ամփոփագրերը և կփոխանցի նախագծերի լրակագնման ու թողարկման բաժնի (ՕԿՅՄ, ՆԼԹԲ)՝ բազմապատկման աշխատանքների ու լրակագնման համար:

Նախագիծը ձևակերպման, լրակագնման և թողարկման համար փոխանցելու կարգը

ՕԿՅՄ-ն ընդունում է նախագծային փաստաթղթերը, ուղեկից փաստաթղթերը և աշխատանքների կատարման պատվերները կատարող բաժիններից հետևյալ տեսքով՝

- բացատրական գրություններ՝ տպագրված ու շտկված օրինակներ՝ տիտղոսաթերթերով՝ կազմի շապիկներին նշված անվանմանը համապատասխանող տեքստի վերաբերյալ,
- հայտային ամփոփագրեր և պատվերի սպեցիֆիկացիաներ՝ կատարողների, բաժնի պետի ստորագրությամբ,
- ուղարկվող փաստաթղթերի մանրամասն ցուցակը (ցանկը)՝ ստորաբաժանման պետի կամ ԳՈՒՄ-ի ստորագրությամբ,
- տիտղոսաթերթերի լրակագնը Պատվիրատուին նախագծային արտադրանքի ուղարկումը ձևակերպելու համար,
- գծագրերը (գծագրապատճենները)՝ տեխնիկական արխիվից,
- նախահաշիվներ՝ պատշաճ ձևակերպված, ընդ որում, նախահաշվի մեկ օրինակը՝ քանդակված տեսքով,

- ՈՍԸ (ՆԼՓ՝ Նախագծանախահաշվային փաստաթղթերի) պատճենահանման, կազմարարական և ձևավորման աշխատանքների, պլոտերով ըստ հաստատված ձևերի գծագրերի և այլ տեխնիկական փաստաթղթերի տեսաներածման/տպագրման պատվերներ:
- բոլոր տեսակների աշխատանքի պատվեր՝ էլեկտրոնային տեսքով, տվյալների կորպորատիվ բազայի (ՏԿԲ) միջոցով:

ՕԿՅՈՒՄ-ում բազմացման համար ստացվող բոլոր փաստաթղթերը ենթակա են գրանցման «ՈՍԸ պատճենահանման և տեսաներածման պատվերների գրանցման մատյանում»: Պատվերի ձևաթուղթը լրացվում է՝ նշելով ՈՍԸ -ի, բնօրինակի ու պատճենների տեխնիկական կրիչի գույքագրման համարը, բնօրինակների քանակը, պատճենների օրինակների քանակը և պատճենահանման նպատակը: Էլեկտրոնային տեսքով հայտը պահպանվում է ՏԿԲ-ում:

Նախագծային ստորաբաժանումները փոխանցում են փաստաթղթերը ՕԿՅՈՒՄ-ին ըստ ցուցակի՝ համաձայն նախագծի կամ դրա բաժնի կազմի:

Տեսաներածում

Փաստաթղթերը էլեկտրոնային չփոփոխվող ձևաչափի վերափոխելը (տեսաներածումը) կատարվում է ՕԿՅՈՒՄ-ի աշխատակիցների կողմից նախագծի ամբողջական լրակազմի կամ ավարտված մասի պատճեններից, որոնք գրանցված են տեխնիկական արխիվում, կից ներկայացվող ուղեկից փաստաթղթերի առկայության դեպքում:

Տեսաներածված փաստաթղթերի ֆայլերը ՕԿՅՈՒՄ-ի աշխատակցի կողմից տեղադրվում են սկավառակի s:\Շտրիհանուր փաստաթղթեր\Տեսաներածված փաստաթղթեր թղթապանակում հետագա պահպանման համար:

Նախահաշիվների տեսաներածումն իրականացվում է նախահաշվի քանդված օրինակից: PDF ձևաչափով նախահաշիվների ֆայլերի պահպանումն իրականացվում է ՕԿՅՈՒՄ-ի աշխատակիցների կողմից նույն նախահաշիվները խմբագրվող ձևաչափով պարունակող սկավառակին և s:\Ստորաբաժանումներ\ՕՍԸ սկավառակին: Նախահաշվային բաժնի աշխատակիցները փոխանցում են խմբագրվող ձևաչափով և pdf ձևաչափով ֆայլեր պարունակող սկավառակը ՕԿՅՈՒՄ-ին՝ Պատվիրատուին ուղարկելու համար:

Էլեկտրոնային և թղթային ձևաչափերով փաստաթղթերի միջև համապատասխանությունն ապահովում են արտադրական ստորաբաժանումների պետերը:

ՈՍԸ-ի ուղարկումը Պատվիրատուին

Օրինակների սահմանված քանակությամբ նախագծի նյութերի ուղարկումը Պատվիրատուին կատարվում է ըստ ապրանքագրերի՝ պարտադիր նշելով պատվիրատուին ուղարկվող գծագրերի կամ տեքստային նյութերի քանակը, ուղեկից նամակով և միայն ՕԿՅՈՒՄ-ի միջոցով:

Ուղեկից փաստաթղթերում նշվում է Պատվիրատուի (ստացողի) հասցեն և կոնտակտային հեռախոսահամարը:

Նախագծի պատրաստի նյութերի հանձնումը Պատվիրատուին իրականացնում է ԴՈՒՄ-ը:

III. Նախագծի մշակման որակի վերահսկողություն

Նախագծի նյութերի մշակման որակի վերահսկողությունը կկատարվի ՈՍԸ-8.6/02-2018 «Նախագծային արտադրանքի որակի վերահսկողության կարգը» և ՈՍԸ-8.5.1/10-2018 «Աշխատանքների ծավալների փոխանցման և նախահաշվային բաժնի կողմից նախահաշիվների թողարկման կարգը» փաստաթղթավորված ընթացակարգերի պահանջներին համապատասխան:

1. Փաստաթղթերի վերահսկողության միջանկյալ տեսակներ

Փաստաթղթերի որակի միջանկյալ վերահսկողությունը կատարվում է՝

- կատարողի կողմից՝ որպես ինքնավերահսկողություն,
- ստուգողի կողմից,
- խմբի պետի կողմից,
- ստորաբաժանման նորմահսկիչի կողմից,
- ստորաբաժանման պետի կողմից:

Նախքան աշխատանքներն սկսելը խմբի պետը տեղեկացնում է կատարողին աշխատանքի բովանդակության ու ծավալի, ինչպես նաև կատարման ժամկետների մասին:

Բոլոր նյութերը ձևակերպվում են գործող նորմատիվ փաստաթղթերին համապատասխան՝ հաշվի առնելով «Մետրոգիպրոտրանս» ԲԸ-ի ՈՍԸ-8.5.1/02-2017 «Փաստաթղթերի մշակման, ձևակերպման և փոփոխություններ կատարելու կարգը» փաստաթղթավորված ընթացակարգի պահանջները:

Հանձնման համար ներկայացված փաստաթղթերն ստուգելուց հետո խմբի պետը փոխանցում է նյութերը ստորաբաժանման՝ նորմահսկողություն իրականացնող մասնագետի ստուգմանը:

Ստուգման ընթացքում ուշադրություն է դարձվում հետևյալին՝

- միասնականացմանը, ստանդարտներին, էտալոններին և այլ նորմատիվ տեխնիկական փաստաթղթերին համապատասխանությանը,
- հաշվարկների ճիշտ կատարում,
- աշխատանքների ծավալի ճիշտ հաշվարկում,
- ՇՈՒՄ-ի, այլ նորմատիվ փաստաթղթերի պահանջների կատարում, այդ թվում՝ հիմնական շինանյութերի խնայողական ծախսման վերաբերյալ,
- անհրաժեշտ համաձայնեցումների առկայությունը,
- լիցենզավորված ծրագրային ապահովման օգտագործումը:

2. Փաստաթղթերի նորմահսկողություն

Փաստաթղթերի նորմահսկողության իրականացման կարգը որոշվում է ԳՕՏ Ք 21.002-2014-ով և «Մետրոգիպրոտրանս» ԲԸ-ի ՈՍԸ-8.6/01-2017 «Նորմահսկողություն իրականացնելու կարգը» փաստաթղթավորված

Նորմահսկողության ենթակա են «Մետրոգիպրոտրանս» ԲԸ-ի կողմից մշակվող և թողակվող բոլոր նախագծային փաստաթղթերը, ինչպես նաև Պատվիրատուին նախկինում տրամադրված փաստաթղթերում կատարվող փոփոխությունները:

Նախահաշվային փաստաթղթերը նորմահսկողության ենթակա չեն:

Նորմահսկողության հիմնական նպատակը փաստաթղթերի որակի ապահովումն է և ECKD-ի (ԿՓՍԸ՝ Կոնստրուկտորական փաստաթղթերի միասնական համակարգ), ՇՊԸ-ի (ՇՆՓԸ՝ Շինարարության նախագծային փաստաթղթերի համակարգ), կազմակերպության կառավարման փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Փաստաթղթերի նորմահսկողությունն իրականացվում է ստորաբաժանումների՝ անհրաժեշտ գիտելիքներ և աշխատանքային փորձ ունեցող մասնագետների կողմից, որոնց վրա ընկերությանն առնչվող հրամանով՝ ստորաբաժանումների պետերի ներկայացմամբ, դրվում են ստորաբաժանումների նորմահսկիչների և նորմահսկիչների տեղակալների պարտականությունները: «Մետրոգիպրոտրանս» ԲԸ-ի յուրաքանչյուր արտադրական ստորաբաժանումում նշանակվում է նորմահսկողության իրականացման առնվազն երկու պատասխանատու:

Նորմահսկիչներն ու նորմահսկիչների տեղակալները՝ ըստ գործառույթների, ենթարկվում են «Մետրոգիպրոտրանս» ԲԸ-ի ավագ նորմահսկիչին, իսկ նրա բացակայության դեպքում՝ ավագ նորմահսկիչի տեղակալին:

Նորմահսկողության իրականացումն ուղղված է՝

- փաստաթղթերի մշակման ընթացքում գործող հրահանգների, ԴՕՏ-երի, ՇՈՒՄ-երի, ՇՊ և նախագծման ու շինարարության ոլորտի այլ նորմատիվ փաստաթղթերի կիրառման ապահովմանը,
- Պատվիրատուին փոխանցվող փաստաթղթերի լրակազմության՝ համապատասխան հրահանգներով և նորմատիվ փաստաթղթերով սահմանված ծավալով, ինչպես նաև փաստաթղթերի բարձրորակ ձևակերպման ապահովմանը,
- փաստաթղթերի միատեսակ ձևակերպման, հաշվառման, պահպանման ու փոփոխությունների կատարման ապահովմանը,
- ընկերության աշխատակիցներին փաստաթղթերի ձևակերպման, կատարման ու կազմի վերաբերյալ խորհրդատվական ու նորմատիվ մեթոդական օգնության տրամադրմանը:

Նորմահսկողությունն իրականացնելու կարգը՝

- Փաստաթղթերի նորմահսկողությունն իրականացվում է արտադրական ստորաբաժանումներում: Նորմահսկողության են ենթարկվում փաստաթղթերի բնօրինակները:
- Արտադրական ստորաբաժանումների նորմահսկիչները ստուգվող փաստաթղթերում պայմանական նշումներ են կատարում (նշում դիտողության կամ առաջարկության հերթական համարը) փոփոխման կամ փոխարինման ենթակա տարրերի վերաբերյալ:
- Դիտողությունների և առաջարկությունների ցանկում նորմահսկիչը փաստաթղթի յուրաքանչյուր նշման համարի դիմաց պարզ ու հակիրճ (նորմատիվ փաստաթղթերի հղումներով) ներկայացնում է դիտողության կամ առաջարկության բովանդակությունը:
- Փաստաթղթերի՝ նորմահսկիչների կողմից ստուգված բնօրինակները վերադարձվում են կատարողին: Դիտողությունների առկայության դեպքում նորմահսկիչն անհրաժեշտ պարզաբանումներ է տալիս դրանց վերացման ուղղությամբ:
- Անհրաժեշտության դեպքում կատարողը փաստաթղթերում փոփոխություններ է կատարում նորմահսկիչի դիտողություններին ու պարզաբանումներին համապատասխան:
- Ուղղված փաստաթղթերը փոխանցվում են նորմահսկիչի ստորագրմանը: Կատարված նշումները պահպանվում են մինչև փաստաթղթերի ստորագրումը և հեռացվում նորմահսկիչի կողմից:
